12
281.64
Ք-49
04 NOV 2009

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԻՆՉՈ՞Ւ ՀԵՌԱՑԱՆՔ

(1911 Թ. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ)

ԹԻՖԼԻՍ
ՅՊԱՐԱՆ ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
1912

04 MAR 2013

8836

ZUUR ARM.SSR

3885-55

Նուիրում եմ

Վրաստանի և Իմէրէթի Հայոց
Թեմի Կաթողիկոսական Պատգա-
մաւոր Երդուեալ-Հաւատարմատար
Ազնուամեծար պ. Յովհաննէս
Սպենդիարեանին:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ
ԶՈՒՐ ՀԱՅ.ԿԱԹ.

ԱՋՆՈՒԱՄԵՆԱՐ ՏԷՐ
Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

Իր հիւանդագին վիճակովը, իր հոգեվարքի նշաններովը յայտնի հայ ապերջանիկ ազգի մէջ Դէօգինէսի դամբարովը են որոնում մեր օրերում խօսքի և գործի մէջ ներդաշնակ, մտքի ու սրտի անարատութեամբ ազնիւ անձ/երին։

Վրաստանի և Իմ/երէթի հայոց թեմի ընտրեալ պատուիրակները բացարձակ վստահութեամբ Ձեզ պատգամաւոր ընտրելով՝ հաւատում էին, որ Դուք այն սակաւներից էք, որոնց կարելի է գործ յանձնել, ասպարէզ հրաւիրել ազգի և եկեղեցու բարոյական շահերի պաշտպանութեան համար։

Ձեր հակառակորդներն իսկ ողջունեցին Ձեր ընտրութիւնը։

Նախքան պատգամաւորի ընտրութիւնը Դուք ձեր մտքերն ու դաւանանքը ի լուր հայ աշխարհի յայտարարեցիք ու երբ Ձեզ պատգամաւոր ընտրեցին, Դուք հաւատարիմ մնացիք ընտրող ժողովրդին, ազգային եկեղեցուն և ինքներդ՝ Ձեզ։

Ես Ձեզ տեսայ էջմիածնում հոգու այն տառապանքով ու անքուն գիշերների տագնապով լի օրերում մաքառելիս անիրաւութեան դէմ ի պաշտպա-

նուիրուեն հայ ժողովրդի դարաւոր իրաւունքների։

Այնտեղ ես Ձեզ շատ լսեցի և՛ ուրիշների հետ և՛ առանձին, ուր Ձեր հոգին էր խօսում. ամենայն նեն-գութիւն ու սուտ իր մերկացումից ապշեցնում էր Ձեզ՝ որպէս միամիտ մանկան, որի հոգին դեռ չէ թունաւորուել կեանքի կեղծիքով. ամենայն չարու-թիւն Ձեր զայրոյթն էր շարժում, մեր ամե-նայն իրաւացի զայրոյթ հակառակորդների դէմ, որի մէջ առելութիւնն էր խառնւում, շարժում էր Ձեր մեծահոգութիւնն ու ներողամտութիւնը և ես յիշում էի Մեծ Մարդու անմեռ խօսքերը. «Այլ ինձ քան լիցի փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ այլում առողջ գազանի...»։

Ես Ձեզ ուսումնասիրում էի այն ախուր ու ան-մոռաց օրերում և ուրախ լինում թէ՝ Դէօգինէսի լապտերով կարելի է դեռ մարդիկ գտնել հիւծուած կորաքամակ ազգի այլասերման մէջ։

Եւ ահա այդ լաւ յիշողութիւններով այս գրքոյ-կը, որ պատմական անցքի ճշգրիտ նկարագիրն է, Ձեր և մեր միւս 26 ազնիւ ընկերների, հայ մարդ-կանց ապրումներն են, ես Ձեզ եմ նուիրում։

Խորին յարգանքով, սիրով և օրհնութեամբ առ պատուական անձդ, Տիար՝

Յոնարհ աղօթարար՝
Բենիկ վարդապետ

ԻՆՉՈ՞Ի ՀԵՌԱՑԱՆՔ

Նամակներով ու բանաւոր հարցումներով պաշա-րել են ինձ. ամենքն են հարցնում «ինչո՞ւ հեռա-ցանք». ամենի երևակայութեան առջև արձանացած կանգնած է մի պատմական անցք՝ մեր ելքը Մայր Տաճարից, որ տարակոյսներով, ապշութեամբ, գո-հութեամբ ու հիացմունքով ամենի սիրտն է լցրել։

Այդ հարցումներին միանուագ պատասխան, այդ զգայացունց (сенсація) անցքին լուսաբանութիւն գրե-լու համար եմ գրիչ վերցնում։

Ինձ թւում է թէ իրաւունք չունիմ լռելու, ինչ-պէս և իրաւունք չունի լռելու մէն մի պատգամա-ւոր, որ ինձ նման մտածեց ու գործեց, որի նման ես մտածեցի ու գործեցի։ Պատմական անցքը թիւր մեկնիչների լեզուից ու թիւր մեկնութիւններից ա-զատելու համար՝ բարոյական պարտք է ընկնում մեզ վրայ, որ խօսենք, որ պատմենք, որ լուսաբա-նենք մեր ազգին, մեզ ընտրողներին իրերի իսկական վիճակը, դուրսն ու ներսը, երեսն ու աստառը, որ-պէսզի գալիք ծանր ու դաժան օրերին անդատա-պարտ մնանք Աստուծոյ, ազգի և պատմութեան առաջ։

Հայրապետի համազգային ընտրութեանը մենք

մօտենում էինք աշխատող, արթուն, գործունեայ մարքի տագնապով, բորբոքուն, ջերմ զգացմունքով, որոնք անյողդողդ կամեցողութեամբ արտայայտուեցան և պատմական անցքն յառաջ բերին։ Ապա ուբեմն խնդիրը լուսաբանելու համար, մեզ պաշարող հարցերին պատասխան տալու համար, հարկ է դրել ինչ և ինչպէս էր մտածում, խորհում մեր միաքը, ինչպէս էր զգում մեր սիրտը, ինչ էր կամենում մեր կամքը։

Եւ ես որոշեցի այդպէս էլ լուսաբանել գործը, անթաքչելի առնելով ինչ որ զգում, մտածում, կատարում էի։

Բաց եմ անում սիրտս, փռում եմ խոհերս անցքով հետաքրքիր անձերի առաջ, ուր պատմական դէպքըն իր պայծառ ու աղօտ շողերով է անդրադառնում, որպէս առարկան՝ հայելու մէջ։

Տիգրանակերտի, Արղնիի և Չնքուշի առաջնորդ գերապատիւ տէր Զաւէն եպիսկոպոսն՝ օգուտ քաղելով իր անձնական ծանօթութիւնից ինձ հետ, բարեհաճել էր Արղնի վիճակի հոգևոր ներկայացուցիչ կարգել ինձ համազգային ընտրական ժողովին, առանց հրահանգ տալու, առանց խղճիս ու գիտակցութեանս վրայ բռնանալու, լոկ ցանկութիւն ու վստահութիւն տածելով թէ արժանաւորագոյն անձի կը տամ քուէս «ի պայծառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ»։

Մարմի տկարութիւնն, որ ինձ անկողին էր ձգել այդ օրերը, սպիսում էր, որ հրաժարուիմ մասնակցելուց. սակայն Էջմիածնից քաշուած սինօդական և բարեկամական հեռագրերը, ինչպէս և Տփխիսի գա-

ղափարակիցներիս յորդորները յիշեցնում էին ինձ պարտքս, որի գիտակցութիւնն այժ տուաւ ինձ յաղթել մարմնի տկարութեան և մեկնիլ դէպի ս. Էջմիածին։ Եւ ես ճանապարհ ընկայ Արղնիի և Բալուի վիճակների աշխարհական պատգամաւոր բժ. պ. Արտաշէս Շխեանի հետ։



ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատգամաւոր Ս. Էջմիածնի միաբանութեան

Երկաթուղու գնացքի օթեակում ինձ պաշարել

էին պէս-պէս խոհեր. մի ծանր պատասխանատուութիւն լեռ քարի պէս ծանրացել էր վրաս։ Ծանձն էի առել մի անձն գտնել արժանի կաթողիկոսութեան, որից միայն կախուած է հայոց չարաշանչ եկեղեցու և ապաբախտ ազգի դառն վիճակի ամոքումն, կիսաքանդ գործերի վերաշինութիւնը, կիսամեռ հաստատութիւնների վերակենդանութիւնը։

Այս անգամ ոչ իբրև լոկ խորհող, այլ իբրև պատասխանատու անձն, մանրակրկիտ քննութեամբ աշխատում էի լուսաբանս մէջ գիտակցութեանս լուսով, պատմութեան օգնութեամբ, իրականութեան պատկերով լուսաբանել ինձ համար մի վերջին անգամ, թէ ի՞նչ պաշտօն, ի՞նչ սրբազան դեր ունի Հայոց Հայրապետը, որպէսզի ըստ այնմ արժանաւոր անձն որոնէի մեր սրբազան դասի մէջ այդ գերագոյն կոչման համար։

Երևակայութեանս դաշտի վրայ շարք-շարք կանգնում էին մեր ազգային եկեղեցական գործերը, բոլոր հաստատութիւնները, աւեր, բոլորն էլ տխուր պատկերով, խախտուած, շեղուած իրենց դիրքերից, բոլորն էլ վտանգի բերանում։

Ահա դպրոցներն իրենց անտեսական, ուսումնական և բարոյական կողմերով։ Եկամուտները նուազ, եղածն անհարազատ ձեռքերում, կտակները քանդուած, անձեռնմխելիին ձեռք մխուած։

Ուսմունքները թերի, առանց կարգաւորութեան ու ամփոփման, լոկ տեսութիւններ առանց գործնական օգուտների. քանի դպրոց՝ այնքան ուղղութիւն, քանի ուսուցիչ՝ այնքան ծրագիր ու գիտութիւն, կարծես դրանք մի ազգի դպրոցներ չեն, կարծես

դրանց նպատակն է հազար ու հակասական ուղղութիւններով դաստիարակել մի գալիք սերունդ, որի մէջ հասկացողութեան ու գաղափարական դաւանանքի միութիւն չլինի, որպէսզի էլ աւելի պատակուի այն պատակուած, խաղաղութիւնը կորցրած ազգը, որ հայ է կոչւում, այն ալեկոծ ծովը, որ հայկական կեանք է կոչւում։

Ուսուցիչները (հարկաւ վերապահութեամբ) թերուս և անկիրթ, որոնցից շատերը իրենց կոչման յարմար ասպարէզները թողած՝ դպրոց են մտել թիւրիմացութեամբ։ Ուսուցանում են՝ ինչ որ պէտք չէ, չգիտեն կամ չեն ուսուցանում՝ ինչ որ պէտք է։ Չկայ դաստիարակութիւն, չկան կամ քիչ են դաստիարակները և անդաստիարակ աշակերտները բիրտ են իրենց շարժմանց ու ձևերի, խօսքի և արտայայտութեանց մէջ։ Այդ պատճառով և ուսանող սերնդի մէջ չարգանքն է մեռնում դէպի մեծը, մեծերի մէջ սէրն է մեռնում դէպի փոքրը. լաւագոյն կապերը ծնողների և որդոց մէջ, ուսանողի և ուսուցանողի մէջ, այր ամուսնու և կնոջ մէջ խզուում, խորտակուում են։ Մեռնում է ընտանեկան և համայնական կեանքը, զօրանում՝ եսական անհատականը. մեռնում են իդեալները, զարգանում է նիւթապաշտութիւնը, որ հիասթափութեամբ ու յոռետեսութեամբ թունաւորում է կեանքը, որ շատ չաճախ չդիմել մարդու ինքնասպանութեամբ է վերջանում։

Ամենից աւելի այդ «եկեղեցական ազգային» կոչուող վարժարաններում պակասում է քրիստոնէական կրօնի ուսմունքը, որ ոչ այլ ինչ է. եթէ ոչ ոգևորութիւն աղնիւ զգացմունքներով. բարու, գեղեցկի,

ճշմարտի, հաւատի, յուսոյ, սիրոյ, ներողամտութեան, գթութեան, վեհանձնութեան, հեզութեան Սելովամի աւազանը, որի յուզուած ջրերի մէջ սրտով ախտաժէտները ապաքինուել կարող են։ Սակայն անպատրաստ կրօնուսոյցների շնորհիւ (վերապահութեամբ) օր աւուր ցամաքում է աւազանը. կրօնական բարձր զգացմունքը՝ որ ամենաբարձր պօէզիան է մարդու մէջ, օր աւուր լռում է, աշակերտներն անծանօթ են մնում Աւետարանի գաղափարներին և գալիս է հեթանոսական խաւարը իր ժանտ աւելութեամբ սպանելու ուռանող սերնդի մէջ լաւագոյն սէրը, որ երջանիկ ու գոհ ապրելու միակ պայմանն ու առհաւատչեան է։

Վարժարաններն աչքիցս հեռանում ու լինձ յանդիման են գալիս հայ քահանայութիւնն ու վանականութիւնը, իրենց ներքին ու արտաքին կեանքով, իրենց վարք ու բարքով և նիստ ու կացով, իրենց կալուածներով ու դատարաններով։

Որպէս հրդեհուած հոյակապ քաղաք, որի շուք ու փառքից միայն միջնաբերդի աշտարակներն են մնացել, շէնն անշէն, ապառն անապատ դառած, ուր վարդենու թփի տեղը օձեր են սողում, ուր եղնիկների փոխարէն աղուէսն ու կարիճն են բուն դնում։

Անպատրաստ ու անգէտ քահանայութիւն, դասալար ու ջրաւէտ վայրերին անծանօթ հովուութիւն, վանական պարիսպների մէջ քար կտրած վանականութիւն, (վերապահութեամբ). կոճղի պէս անմիտ, գազանի պէս անչիգիար հայրութիւն. աստուածպաշտութեան փոխարէն, ոսկի հորթի պաշտամունք, լեռնացած անիրաւութիւն, հեթանոսական հալածանք ու

աւելութիւն. արիւնըռուշտ Բահաղ ու անպարտ գոհերի ճենճեր, անլուր խարդաւանանք ու նենգութիւն, անորակելի զրպարտութիւն ու սողացող չարութիւն, գողութիւն ու աւարտուրթիւն, կաշառառուութիւն ու կաշառատուութիւն և նման գործեր այն համրացած տաճարներում ու վանքերում, ուր ամեն բան կայ, բացի Քրիստոսն ու քրիստոնէութիւնն։



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատգամաւոր Ս. Էջմիածնի միաբանութեան

Այս տխուր, սրտմաշ պատկերի դիմաց ակամայ հառնում է հոգեվարք ժողովրդի դառն բողոքը, որ իր հովիւների դէմն է աղաղակում. երկնքից Տիրոջ բողոքը, որ մարգարէի բերանով է խօսում. «Ո՛հ, հո-

վիւք որ կորուսիք զխաշինս արօտին իմոյ, ասէ Աստուած»։ Սակայն «աչք են և ոչ տեսանեն, ականջք են և ոչ լսեն և ոչ իմանան»։

Ահա և հայ ժողովուրդը՝ աստելութեամբ և անմիտ կուսակցութեամբ փետեկուած, եկեղեցւոյ ուծացած, հաւատով պաղած, չարութեամբ լի, ստախօսութեամբ ճոխ, խաբէութեամբ հարուստ, աղքատութեամբ խեղճ, տգիտութեամբ անճարակ, հոգով ու մարմնով ախտաժէտ։ Ինչպէս մի բազմատեղն ծառ, որի արմատը կռծող որդն է մտել, որի ճիւղերից տերևն է անժամանակ դեղնում ու թափւում, որի բարձունքում աւերիչ որոտն ու կայծակն են սպառնում։ Եւ ոչ ոք բժիշկ, ոչ ոք օգնական, ոչ ոք խրատիչ ու պաշտպան։

Այս տխուր, հիւանդոտ կացութեանը դէմ ու դարման անողը մի կոչնաւոր կաթողիկոս կարող է լինել, որ *ըմբռնելու, սիրելու եւ կամենալու* կարողութիւն ունենայ։ Այս ծանր լուծը տանելու համար հասարակ, սովորական մահկանացուներից բարձր մէկը պիտի լինի, հերոսական գործերու ընդունակ և յարմար։

Արդի կաթողիկոսը պէտք է ըստ ոնտեսականին՝ ոնտեսապէտ, հաշուապէտ մէկը լինի, որի աչքից դեղծարարները խուսափել չկարողանան. նա պէտք է իւրեն ոտորադրեալ վարժարաններից մտաւոր պատրաստութեամբ բարձր լինի, որ ազգի բարձրագոյն, միջնակարգ ու տարրին կարգի դպրոցները պատշաճ ծրագրով ու անսայթաք ղեկավարել կարողանայ՝ ըստ մտաւորականին և ըստ դաստիարակչականին։

Նա պէտք է քրիստոնեայ մարդ լինի, քրիստո-

նէութիւնն ու Աւետարանն ըմբռնող մի հեղինակութիւն, որ Յիսուսի աւանդը անաչառ պահպանի ու տարածէ։ Նա պիտի փրկէ մեզ ագէտ ու անհաւատ հովիւներից, պիտի վանէ աստելութիւնը, նախանձը, հալածանքը եկեղեցու գաւթից, նա պիտի սիրոյ օրինակ լինի, արդարութեան քարոզ, վեհանձնութեան տիպար, անշահասիրութեան ջատագով, աշխատասիրութեան քաջալերը, կենդանի խօսքով հզօր։ Նա պիտի կարող լինի վսեմագոյն գաղափարների շուրջը խմբել, ստեղծել մի նոր հոգևորականութիւն, Աւետարանի հունձի համար ընտիր մշակներ, ազգի պահպանութեան համար՝ անձնուէր պահապաններ, հոգևոր պատերազմի համար՝ սպառազէն հոգևոր զինուորներ։ Նա պիտի վերականգնէ իր ուխտին դրժած 17 դարեայ Մայր Աթոռը, որ մոխրակոյտ է դառել։ Նա պիտի իր հեռատեսութեամբ ու բարոյական բարձր հեղինակութեամբ տիրող արքաների և կառավարութեանց վըստահութիւնը շահի յօգուտ հայ ազգի և եկեղեցու պահպանութեան։

Արդի Հայրապետի գործն ու կոչումն այս պիտի լինի։ Եւ ես բաց արի օրացոյցն ու սկսայ կարդալ հայոց սրբազան եպիսկոպոսների անունները, որոնել այնտեղ յարմարագոյն անձերին, որոնց կարելի լինի Աստուծոյ տաճարի մէջ, հայ ժողովրդի առջև անդաստապարտ խղճով հայրապետացու առաջարկել։

Աւագագոյն ու կրտսեր եպիսկոպոսների շարքն եկաւ ու մտքիս առջևով անցաւ. ամենքն էլ իրենց առաւելութիւններն ունեցող անձեր էին, ամենքն էլ պիտանի իրենց յարմար տեղերում, մի ընտիր կաթողիկոսի ձեռքի տակ, բայց ոչ կաթողիկոսացու.

Մէկը սրտով բարի է, բայց կամքով թոյլ, մրա-
քով տկար. միւսը մտքով զօրեղ է, կամքով ուժեղ,
բայց հաւատով տկար ու սրտով չար. երրորդը հասարակ
մահկանացուի և մոլորուածի պէս կուսակցական ու
ծայրայեղ փառասէր. չորրորդը՝ եկեղեցական կոչուե-
լու յարմարութիւնը չունի. հինգերորդը՝ զօշաքաղ և
արծաթապաշտ և այլն։

Այս փայլուն, ամբոխի բերանով փառաբանուող
շարքից աչքս ընկնում է ամբոխից նախատուածների
վրայ, որոնք իրենց մի քանի բարձր յատկութիւննե-
րով հերոսներին են նման։

Երեքն են դրանք՝ կարապետ եպիսկոպոս, Սու-
քիաս արքեպիսկոպոս, Մաղաքիա արքեպիսկոպոս Օր-
մանեան. երեքն էլ կենդանի նահատակութեան պսա-
կով պսակուած, ամբոխի նախատիքով ձաղկուած,
ստախօս աբեղաների չար լեզուով բամբասուած, չա-
րամիտ ազանների թքով օծուած։ Ինձ թւում է թէ
Պարթև Սահակը, Խորենացի Մովսէսը, Փարբեցի Ղա-
զարը, քարկոծուած մարգարէները, սղոցուած առա-
քեալները, ինքն Յիսուսը ժպտումեն սրանց երեսին։

Եւ ես մտքերս խաղաղելով, անդորը հոգով,
հանգիստ խղճով ուխտում եմ Աստուծոյ և ազգի ա-
ռաջ վկայել իմ ձայնով ու քուէով թէ սրանք են
յարմարագոյնները հայոց հայրապետական գահի հա-
մար։

Այս մտորումներով, այս վճռով ես էջմիածին եմ
հասնում։

**
*

Մտնում ենք վանքի գաւիթը։ Աշխարհական
պատգամաւորներին հրաւիրում են ճեմարան, ուր

նրանց համար սենեակ է պատրաստուած։ Ես ճնում
եմ կանգնած ու մտքամոլոր. ո՞ւր գնամ։ Մի ծանր
թախիծ, որ էջմիածնի պարսպի մէջն է իջել միշտ
հոգուս վրայ, որից ազատուել էի մի քանի ամիս,
նորից երևաց և իր ցուրտ ու ճնշող գիրկն առաւ
ինձ։ Երևակայեցէք որ ձեր պատանեկութեան և լա-
ւագոյն երիտասարդութեան 30 տարին անցած լինի



ՍՆՍՆԻՍ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Եամախու բեմի

ձեր հայրենի օջախի մէջ, որի հետ կապուած
էք մնացող վշտերի, սակաւ ուրախութիւնների, ո-
գևորող գաղափարների, թևաւոր մտորումների հիւ-
սուածքով, և երբ վերադառնաք օտարութիւնից ու ձեզ
չընդունեն, պատսպարուելու անկիւն չտան... Սակայն

ՀՍՍՌ Կառ. ՍՍՀՄ
3885-55

պէտք էր քարացումից ելնել և ես շարժուեցի դէպի Ծուսիկ վարդապետի բնակարանը։ Հարկաւ ընկերս ընդունեց ինձ, թէև հիւրեր ունէր արդէն։ Այստեղ էլ մի նոր անակնկալ լսեցի, բայց արդի էջմիածնի համար սովորական բան. պատգամաւորների ամբողջութիւնը երկու բանակի էր բաժանուած արդէն. մեծամասնութեան խորհրդակցութիւնների համար վարիչներն յատկացրել էին մատենադարանի դահլիճը իր յարմարութիւններով. փոքրամասնութեան համար հարկ չի համարուել խորհրդարան տալ և սա իր ցերեկ ու գիշերուայ խորհրդածութեանց համար օգտուել է Ծուսիկ վարդապետի հիւրընկալ բնաւորութիւնից և խորհրդարան դարձրել նրա բնակարանը։ Ուրեմն ես հիւանդ հալուս աղմուկի և անքուն գիշերների մէջ պէտք է անցկացնէի օրերս։ Հարկ էր հոգալ այս մասին և ես վանքի բակը դուրս գալով հանդիպեցայ կարգադրիչների ժողովի անդամներից մի երիտասարդ վարդապետի և խնդրեցի, որ իրենց նախագահին յայտնէ ինձ մի բնակարան տալու։ Վարդապետը սիրով յանձն առաւ կատարել, բայց ես ոչ պատասխան ստացայ և ոչ սենեակ։ Հարկ էր հաշտուել եղածի հետ և պարտականութիւններ կատարելու եռանդից ընկնել։ Նախ և առաջ պարտաւոր էի Տէր Տեղակալին ներկայանալ. նորին բարձր սրբազնութիւնը պաշտօնական քաղաքավարութեամբ ընդունեց ինձ, մինչև իսկ առաջարկեց նստել, առողջութիւնս հարցրեց։ Եւ ես՝ որ կարօտ էի հայրենի տան մի տաք խօսքի, էջմիածնի ցրտութեան մէջ, այդքանով էլ շատ գոհ եղայ և ջերմապէս շնորհակալ՝ Տէր Գէորգ սրբազանից։

Դուրս եմ գալիս Տէր Տեղակալի բնակարանից, աչքիս դիմացն է ելնում իր հսկայ հասակով, իր շուշանագեղ գլխով էջմիածնի «Անպաշտօն Պատրիարքը»՝ Սուքիաս արքեպիսկոպոսը, որ յետ ու առաջ քայլելով շրջում է Տաճարի զանգակատան առջև։ Վեց տարի շարունակ աչքս տեսել է պաշտօնական ասպարէզների փակ դռներից դուրս ճնացած այդ առիւծասիրտ արքեպիսկոպոսին, Օրէօլի և Օրէնբուրգի աքսորականին, շրջելիս նոյն տեղում. ու ինձ թուում է մի վայրկեան թէ հնաւուրց նախնիք, հողերի ծոցումը հանգչող յաւերժայիշատակ հայրապետներ պահակ են կարգել նրան էջմիածնի դռների վրայ և նա ուխտեալի անձնուիրութեամբ, նազովրեցու համբերատարութեամբ հսկում է, որ Լուսաւորչի այգին աղուէսներ չմտնեն ու չապականեն։ Մօտենում եմ Արհուն, համբուրում աջը, ընդունում օրհնութիւնը և քայլերս ուղղում դէպի օթևանս. մտքերիս հոսանքին անձնատուր լինելով։

Առջևս է ելնում, կարծես լեռնանում, մի հոգաթումբ և ձայն տալիս. «կանգ առ»։ Եւ ես կանգնում եմ Իզմիրլեան կաթողիկոսի յաւիտենական հանգստի առջև. «Ատուած ողորմի քեզ, հայրապետ Հայոց, քո դատաստանը քաղցր անի. քո մեղքերիդ մուրհակը ջնջի անպահանջ թողնելով։ Քեզ համար բարեխօս լինի Գէորգ Մեծագործը, որի հարևանութեամբ յաւիտենական բնակութիւն հաստատելու մեծ պատիւն ունիս։ Թիշում եմ լինչպէս մի օր քո նախորդը՝ «Հայրիկն Հայոց» Գէորգ Զորրորդի գերեզմանի սրնարքումը կանգնած ոգևորութեամբ խօսում էր իր անուշիկ բարբառով. «Գերեզմաններ կը խօսին, մեծ մարդ-

կանց գեբեզմաններ կը շարունակեն խօսել ու խոր-հուրդ տալ աս գերեզմանից Գէորգ կաթողիկոսի ձայն կուգայ ինձի ու կասէ՝ խնամէ իմ ճեմարան, իմ սա-նիկներուն ուրար տուր և ես արժանի համարելով ձեզի աս ուրարները կուտամ ու կը հրաւիրեմ ծա-ռայելու ազգին իբրև եկեղեցու սպասաւորներ»։ «Բայց Վեհափառ Տէր, ձեր երկուսիդ օրերում ճե-մարանցիք հալածական վիճակն. տեսնում, լսում էք արդեօք. Սուքիաս արքեպիսկոպոսը դեռ պարապ շրջում է ձեր շիրմի-քով, սա ճեմարանի անդրանիկ տեսուչն ու անձնուէր պաշտպանն էր. կարապետ ե-պիսկոպոսը՝ ճեմարանի լաւագոյն սաներից, դեռ հռչակւում է որպէս հայրապետասպան, ճեմարանի ոսկեբերան ուսուցչապետ Օրմանեանը Իթըր փողոցի անակում կալանաւոր է... Աստուած ողորմի քեզ Վեհափառ Տէր, Աստուած քո դատաստանը քաղցր անի»։

Ցառաջ եմ շարժւում դէպի ժողովի սրահը, ուր ընդհանուր խորհրդակցական ժողով պիտի լինի։ Ամեն մի քայլափոխում նոր տպաւորութիւն եմ ստանում, երփներանգ, մէկ մէկի յաջորդող, մէկ մէկի հետից վազող, յուզուած ծովի ալիքների նման։

Ցաճարի ներքին խորանի հետ վաղաշաղաւոցի-ների մի ստուար խումբ է կանգնած, դէմքերը դէպի մատենադարանի հրապարակն ուղղած, ուր պատգա-մաւորների բաժան-բաժան խմբակներն են փսփսում, և տաք-տաք խօսում են։ Նրանցից մինը՝ մի վաթ-սունամեայ տղամարդ, խօսում է բարձր ձայնով, խօ-սում է վշտով ու զայրոյթով։ Ականջիս են զարկում հետևեալ խօսքերը. «Ախր էս էջմիածնի քարը քարի

վրայ խփա մնացել. էս ինչ անաստուածութիւն ա, հարամ ըլնի դրանց ուսումը, իրենց գլխին խռով կե-նայ. ըսարմինք են ազգի պատգամաւորները, էս ան-նամուս, անխիղճ հոսհոսները։ Ախր մեզնից լաւ էլ ով աշխատում մեր վարդապետ-եպիսկոպոսներին. կա-



ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատգամաւոր Էջմ. միաբանութեան, յուսարարապ. Մ. Տաճարի

բապետ եպիսկոպոսը մեր աչքի առաջն ա մեծա-ցել, վարդապետ ու եպիսկոպոս դառել, մենք ենք գիտում թէ նա ինչ մարդ ա, հմի էս անաստուած.. թուղթը մուտառում, հոգինները սևացնում են ու թուղթիկ թուղթ են տպում ու ցրւում, թէ կարապետ եպիսկոպոսը բողոքական ա, ֆարմասոն ա. ըը՛... ձեր խիղճը մեռնի, ձեր խիղճ՛ը. ապա, պատռախ, էդ

մուտատ մարդկանց գրած թուղթը, պատռի թող կորչի...»։

Եւ խմբից մի երիտասարդ իր ձեռքումը եղած թուղթը պատռտում ու վրան թքելով ցինում է ոտքերի տակը։

Մինչ հետաքրքրութիւնն լինձ տիրել էր և ուզում էի իմանալ, թէ բանն ինչումն է, ուշադրութիւնս գրաւեց մի հայ հեղինակի, մի գրող պատգամաւորի ձայնը հակառակ կողմից. «ապա, բեր է, էն թերթերից էլ բեր, ուզողներ կան, բաժանէք, տարածէք, կանչում էր հայոց «վիպասանը» իր ընկերներից մեկին»։

Հասկանալի էր, որ կատարւում էր մի պատռտ զրպարտութիւն, մի պրովակացիա այն մեծ սրբավայրում, ուր իբր թէ միայն ճշմարտութիւն պիտի լսուէր ու խօսուէր։ Մօտենում եմ ընկերներիս, ուզում եմ իմանալ բանն ինչումն է և նրանք տալիս են լինձ մի օրինակ թուղթիկ, գաղտագողի հրատարակութիւն, ուր ոմն «Ս. Ցարութիւնեան» իր հոգու մէջ մթերուած առատ դառնութեամբ ստեղծել, շահիւսել, յերիւրել է մի ամբողջ առասպել թէ՝ կարապետ եպիսկոպոսը գաղտնի բողոքական է և գերմանական բողոքական մի ընկերութեան հետ գաշն է կապել հայոց եկեղեցին բողոքական դարձնելու։ Այսպէս ուրեմն «կղերական» Կարապետ եպիսկոպոսը այդ օր թունդ ազատամիտ է դառել և «բողոքական». և հայ ազգի ոչ-կղերական ազատամիտները, սոցիալիստները վրդովուել են, ժամաշապիկ են հագել և թուղթիկ են տարածում «Կղերականութեանը» դաւաճանող Կարապետ եպիսկոպոսի դէմ։

Ո՞վ է այդ «Ս. Ցարութիւնեանը». մի՞թէ Սամսոնը. ո՛չ, այդ անկարելի է, պնդում եմ ես. Սամսոնն այդչափ ընկնել չի կարող, թէկուզ էջմիածնում. անտարակոյս այդ անունով օգտուել և իր խօսքին արժէք տալ է կամեցել պրովոկատորը։ Այդպէս էլ եղաւ. դոյն վայրկենին մօտեցաւ մեզ մի սիրելի պարոն և ասաց թէ՝ այդ կեղծանուն գիրը տպագրուել է Ալեքսանդրապոլում, հեղինակը միացած անձնաւորութիւն է. սրան առարկեց մի նորեկը թէ՝ «սխալւում էք, գրուել ու տպուել է էջմիածնում»։

Ես վերջ ի վերջոյ չիմացայ թէ ո՛վ է հեղինակն այդ պարսաւագրի, և ոյք են տպագրել. այդ այնքան էլ հետաքրքիր չէր լինձ համար։ Բայց ես մի կսկիծ, մի մրմունջ զգացի հոգուս մէջ, որ էջմիածինը, ցիսուսի իջած ու սիրած սրբավայրը՝ ըստ տեսլեան ս. Լուսաւորչի, դարձել է սատանեան քարոզարան, զրպարտիչների բնակարան, պարսաւագրողների և պարսաւագրերի շտեմարան. գողերի պատսպարան։

Մի տարի յառաջ էջմիածնի վարիչները թոյլ տուին որ մեռելթաղի պատգամաւորները ժողովուեն ձեմարանում ու հայրապետասպանութեան արատ փաթաթեն անմեղների վզին, գոռալով. «Կորչի կաթողիկոս, կորչի Բենիկ վարդապետ, դրանք սպանեցին մեր Իզմիրլեանին». մի տարի յետոյ էջմիածնի վարիչների աչքի առաջ, հայրապետական ընտրութեան խորհրդաւոր օրերում, անբարեխիղճ անձեր պարսաւագիր են տարածում Կարապետ եպիսկոպոսի դէմ։ Ես յիշեցի թէ երկու տարի առաջ էլ նոյն անձերի ծափերով բեռնաւորուած «Մեծ» դահակալը պարսաւագրեր էր թելադրում վարդապետնե-

ըին իբենց կարգակիցների դէմ... ծ, ես շատ բան յիշեցի ու կսկծագին ցաւեցի թէ Էջմիածինը ինքն է վարկաբեկում իր արժանաւոր որդոց, ինքն էլ Մայր չէ խանդակաթ, այլ նախանձի ու փառասիրութեան ծարաւից խելագարեալ մի առիւծ, որ իւր ձագերին է յօշոտում, առանց ըմբռնելու, թէ ինքն իր կործանումն է պատրաստում։

Հեռացայ խմբից, ուզում էի բարձրանալ օթեւանս, որ պատրաստուիմ ժողովի գնալու, երբ սանդուխքների վրայ երեք երիտասարդ, ինձ խոպառ անծանօթ, ճանապարհս փակեցին և նրանցից մէկը վրդովուած ու հև ի հև յայտնեց թէ «հոսհոսները» «Փթութեան օճախ» վերնագրով մի պասկուէլ են տարածում Օրմանեանի վրայ և ժողովուրդը սաստիկ վրդովուած է և ուզում է քարկոծել այդ չարագործներին։

— Ովքե՞ր էք, չգիտեմ, տղերք, բայց ես ձեզ խնդրում եմ, ոչ ոքի չդիպչէք. Թողէք որ խաչահանները քարշ տան անմեղներին դէպի Գողգոթայ։ Կըգան օրեր, որ դրանց թմրած խիղճը կը զարթի ու ամօթահար կը կարդան՝ յիրաւի այս մարդիկը Աստուծոյ որդիքն էին։ Հեռացան մեղմացած և ես պատրաստուելով իմայ ժողով գնալու։

* * *

Փառաւոր դահլիճ՝ որ հիմնադիր և բարեգործ Ասան-Իւզբաշեանին, ինչպէս և նախաձեռնողին, պատիւ է բերում, նոր մատենադարանի դահլիճն է։ Մուտքի դիմացը, դահլիճի ճակատի կողմում առանձին սեղանի առաջ տեղաւորուած է համազգային ժողովի ընտրեալ դիւա՛ն։ Կենդրոնում բազմած է նախագահ

Սամսոն Ցարուքիւնեանը, աջ կողմից՝ փոխ-նախագահ Գէորգ Զուբարը, ձախից՝ մի փառաւոր մօրուք, որ պատկանում է Մանկունու ներկայացուցիչ Յակոբ Աշոտ եպիսկոպոսին, ժողովի կարծեմ, պատուաւոր ատենապետին։ «Կարծեմ» եմ ասում, որովհետև ուր մարդկանց մէջ միայն մօրուքն է աչքի ընկնում, որպէս արժանիք, այնտեղ նրանց դերն ու կոչումը դժուար է ըմբռնել։ Շարունակութեան վրայ տեղ են գրաւել քարտուղարները.

Դահլիճի երկայնութեամբ լուսամուտների առջև նստած են «փոքրամասնութեան» պատգամաւորները. այս կողմը լոյս է ու ցուրտ։ Հակառակ կողմում դահլիճի մեծ մասը բռնել են «մեծամասնութեան» պատգամաւորները. այս կողմը տաք է, վառարանները են վառում, բայց խաւար է։ Պատգամաւորների թիկունքի կողմում յոռնկայս կանգնած են ձեմարանի ուսանողներն, աշակերտները և կողճակի անձինք. Եւ որովհետև ես ուշացել էի և շարքերում տեղ չգտայ, ուստի գնացի և դիւանի թիկունքի կողմից, թղթակիցների մօտ տեղ բռնեցի։

Դահլիճը խաղաղ չէ, խօսում են, փսփսում, հռհռում, տեղ տեղ ծխում. համազգային վեհաժողովի չի նման, այլ հայկական սովորական ժողովների։

Նախագահը յայտարարում է օրակարգի առաջին խնդիրը. այսինքն պէտք է ժողովը զբաղուի կաթողիկոսական «թեկնածուների» արժանիքների խնդրով և կարողանայ քառանուն ցանկը կազմել։ «Փոքրամասնութիւնը» «թեկնածու» չունէր, այլ «ընտրելի» միայն. այս ման առաջարկեց իր ընտրեալների և մեծամասնութեան «թեկնածուների» խնդիրը երկուս-

տեք ընտրուած յանձնաժողովի խորհրդակցութեանց յանձնել, որոնք աւելի արագ և դիւրին կերպով կարող են համաձայնութեան և որոշ եզրակացութեան գալ, ապա արդիւնքը զեկուցանել ընդհանուր ժողովին։ Փոքրամասնութիւնը անհրաժեշտ է համարում յանձնաժողովը, որովհետև անկեղծօրէն ցանկանում էր իրաւախոհ լինել ու համաձայնութեան գալ. իսկ այդ հնարաւոր էր միայն յանձնաժողովով։ Մեծամասնութիւնը հակառակ էր յանձնաժողովին ու պահանջում էր «թեկնածուների» մասին խօսել ընդհանուր ժողովում, ուր անտարակոյս ոչ մի խելօք գործ կատարել չէր կարելի, այլ կիրք ու կռիւ պիտի բորբոքուէին։ Մեծամասնութեան մէջ կային տաճկաստանցի «գլուխներ», որոնք առարկում էին թէ յանձնաժողովը կարևոր չէ «վասն զի անիկա կը-ձգձգէ խնդիրը, մինչդեռ ընդհանուր ժողովին մէջ աւելի շատ կըլլայ գործը». պարզ էր թէ այդ իմաստունը կամ չեհին միտք ունէր, այսինքն համաձայնութեան չգալու անբարեմիտ ցանկութիւն և կռուի սէր և կամ այնչափ ակարամիտ էր, որ չէր ըմբռնում թէ յանձնաժողովներով խնդիրներ մշակելն աւելի արագացնում է, այլ ոչ յերկարում գործը։

Համաձայնութեան կամ թեկնածուների խնդիրը բաւական ալեկոծում էր մեծամասնութեանը, որոնք իրենց ճչոցներով ու բացականչութիւններով պարզապէս երկիւղ ու անհանգստութիւն էին առաջացնում։ Փոքրամասնութիւնը այս շփոթութիւնը հասկացաւ իսկոյն թէ հակառակորդները վախենում են Օրմանեանին ցանկի մէջ մտցնելուց, որին կարող է նպաստաւոր լինել յանձնաժողովը. մինչդեռ ընդհանուր

ժողովի մէջ շատերն ստիպուած պիտի լինէին խղճի ձայնը խեղդել իրենցում սպառնական հայեացքների ազդեցութեան տակ։

Նկատելի էր մի բան, որ նախագահն ընդհանրապէս զեկավարում էր մեծամասնութեան հաճոյքը և



ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Ս. Էջմիածնի

ժպտուն ներողամտութեամբ էր վերաբերում դէպի մեծամասնութեան ձայնը, խօսքը, աղմուկն ու անկարգութիւնը և խիստ՝ դէպի փոքրամասնութիւնը, որ առանց այն էլ քիչ էր խօսում և հանդիսատեսի դերումն էր։

Նախագահի այս տրամադրութիւնն աւելի շեշտուեց հետևեալ օրուայ ժողովում, երբ լիագօրութեանց խնդիրն էր քննուում։ Ես կը կամենայի որ այդ դերում մի տաճկաստանցի լինէր, այլ ոչ մեր Սամսոն Յարութիւնեանը կամ նրա նման ուսեալ, հանրածանօթ մի իրաւաբան գործիչ, որովհետև մեզնից՝ ուսեալների վրայ ընդհանրապէս և պ. Սամսոնի վրայ՝ մասնաւորապէս ես լաւ կարծիք ունիմ ու կը սիրեմ պահել։

Թէև հիւանդ էի ու խօսելու անկարող, բայց եռացող անիրաւութեան պատկերի առաջ չկարողացայ զսպել ինձ ու պարտք կատարելու ցանկութեամբ խօսք խնդրեցի պ. Նախագահից։

Ոտքի ելայ թէ չէ՝ կարծես մրրիկ անցաւ մեծամասնութեան վրայով, շշուկ, ժխոր, քըս-փըս։ Վերջին ընտրութիւնների ժողովական պատկերները, որ Տաճկաստանի պատգամաւորները ցուցահանդէս էին դնում էջմիածնում, ինձ ջաղ ծանօթ էին, ուստի և առանց պաղպրիւնութիւնս կորցնելու խօսքս սկսեցի։ Ես մտադիր էի պաշտպանել յանձնաժողովի խնդիրը և հրաւիրել ժողովի ուշադրութիւնը այն հակասական առարկութիւնների վրայ, որոնցով վայրում էր մեծամասնութիւնը, որոնց վախճանական եզրակացութեան յարմար օրինակը գայլի ու գառան յայտնի առակը կարող էր լինել։

Դեռ նոր էի սկսել, երբ դէպի վայելչութիւն և արդարամտութիւն հրաւիրող մի շեշտ ուղղեցի հայ մագգային «վեհաժողովին» ասելով՝ «ազնիւ եղէք ընդունելու...» և խօսքիս կէսը շրթունքներիս վրայ սառած մնաց. բարձրացաւ մի աղմուկ, մի ժխոր.

հետն էլ նախագահի անընդհատ զանգահարութիւն։ Մանրիկ մարդկանց «վեհաժողովը» իր սովորական բռնութեանը դիմելով՝ պատրուակ գտաւ ինձ լռեցնելու, որովհետև ես ասել էի «ազնիւ եղէք»։ «Հա, ուրեմն մենք անազնիւ ենք, ինքն է անազնիւ, չենք ուզեր, քարող չենք ուզեր, հոս Թիֆլիզի բորսան չէ, դասախօսութիւն չենք ուզեր»։

Եւ այս խուժանային աղմուկի ու բռնութեան մէջ սորագոյն դերը յանձն էր առել Էջմիածնի մի վարդապետ, մինչև իսկ Սիոնի անդամ, որ մոռացութեան տալով իր կոչումն ու դիրքը, հանդէս էր դրել իր ներքին մարդը, որին միայն . . . կարող էր նախանձել։ Նա ինձ հայհոյում էր և ես լուռ էի. նա համբերութիւնից հանել էր Յուսիկ վարդապետին, որ գայթոյթի թափով նրան դիմեց, անուանեց արժանին ու դուրս գնաց։

Երբ կատաղութեան փրփուրը նստեց ես անվրդով շարունակել կամեցայ. Պարոններ, դուք կամ սխալ էք հասկանում, կամ չհասկանալ էք ձևանում. ազնիւ եղէք, չի նշանակում թէ անազնիւ էք, ինչպէս որ «բարի եղէք» չի նշանակում դուք չար էք։ Ես կամեցայ ձեր լրջութիւնը հրաւիրել խնդրի վրայ։

Պ. Նախագահը շատ ճարպիկ կերպով դարձաւ դէպի ժողովը. «Լռեցէք պարոններ, հայր սուրբն իր խօսքը յետ է առնում»։

— Երբէք, կանչեցի ես, ես չեմ վիրաւորել, որ խօսքս յետ առնեմ, այլ միտքս եմ պարզում։

Այնուամենայնիւ ինձ թոյլ չտուին խօսելու հայոց ազգի «ազատամիտները»։

Ի՞նչ էի ուզում ասել. ահա թէ ինչ. «Ձեզնից մինը հպարտութեամբ շեշտեց թէ մեծամասնութիւն էք, հետևաբար եթէ յանձնաժողով կազմուի՝ երեք ներկայացուցիչ դուք պիտի ունենաք և միայն մէկը՝ փոքրամասնութիւնը. Տաճկաստանի այդ չահիլ վարդապետն էլ ոգևորութեամբ խօսեց մեծամասնութեան ուժեղութեան գիտակցութեամբ, և դուք ծափեր զարկիք, առանց մտածելու, որ ծափերը շատ յաճախ ճշմարտութեան շուրջը չէ, որ որոտում են: Շարունակեցէք խնդրեմ նոյն չափն ու կշիռը և հետևեալ հանգամանքում և մենք գոհ կը լինինք: Ձեզ համար պարզ է այժմ որ սակաւամասնութիւնը Ռուսաստանի հայութեան երկու երրորդ ձայնն է ներկայացնում. եթէ ի նկատի ունենանք նրանց հետ միացած և Տաճկաստանի մի քանի ձայները, կերևայ որ փոքրամասնութիւնը ամբողջ հայութեան 2/3 մասն է ներկայացնում և մեծամասնութիւնը՝ 1/3-ը միայն: Դուք շատ էք և այդ հետևանք է մի անարդարութեան, որ ձեր թեմերը 5—6 հազար հոգուց են կազմուած և մերոնք 200000-ից—5 հարիւր հազարից. ձերն էլ մի ներկայացուցիչ է տալիս, մերն էլ: Դուք բարոյապէս պարտաւոր էք ի հաշիւ առնել մեր ժողովրդի թիւը, այլ ոչ փոքրամասնութեան թիւը: Այլևս. Դուք եթէ չէք եկել միայն մի հոյակապ անձն ևացնելու, այլ եկել էք կաթողիկոս ընտրելու, դուք պարտաւոր էք գիտակցել, թէ կաթողիկոսը ձեզ համար չէ, որին ոչ մի նիւթական ու բարոյական աջակցութիւն չի ցոյց տալիս տաճկահայը, որի հետ իրաւական ոչ մի կապ չունիք: Ասացէք խնդրեմ, էջմիածնի և առհասարակ Ռուսաստանի հայ եկեղեցու

ծր տառապանքի օրերին բարոյական ու նիւթական աջակցութիւն է ցոյց տուել Տաճկաստանի հայութիւնը: Ի՞նչ պատասխանատուութիւն կարող են Ռուսաստանի հայերը բեռնել ձեզ վրայ, ձեր այն խոշոր իրաւանց փոխարէն, որ հանդէս է գալիս հայրապետական ընտրութեան ժամանակ. Ի՞նչ պահանջ կարող են անել ձեզնից այն երկու անյայտող կաթողիկոսների աւերածութեանց հանդէպ, որոնք դուք վաթեցիք հայրապետական աթոռին ու Ռուսաստանի հայութեան վզին, ու գնացիք առանց յետ նայելու մինչև այժմ, որ եկել էք նոր հայրապետ տալու մեզ: Ի՞նչ հաշիւ պիտի տաք մեզ, եթէ ձեր ընտրելի կաթողիկոսն էլ սխալանքի և անգիտութեան ճանապարհով դէպի անդունդն առաջնորդի Մայր Աթոռը, մեր դպրոցները, մեր հոգևոր ու կրօնական գործերը, որոնք առանց այն էլ աւերակ վիճակի մէջ են ձեր շնորհիւ: Դադարնիք չէ, որ սպառնական ձայներ են լսուում ձեր կողմից թէ՝ եթէ Ռուսաստանի հայոց ընտրելին անցնի, հերձուած պիտի առաջանայ, Տաճկաստանցի հայերը կը բաժանուին: Ինչքա՞վ է արտայայտուելու այդ բաժանումը, երբ կապը բարոյական է, և այժմ դուք բարոյական ամենազօրեղ կապը՝ սրտերի միութիւնը մեր մէջ կտրել էք ուզում, արհամարհելով Ռուսաստանի հայոց ցանկութիւնը առանց փափկանկատութեան: Մի՞թէ Ռուսաստանի հայութիւնը Կիլիկիայի հայութեան հետ կապուած չէ, թէև Կիլիկիայի և Էջմիածնի կաթողիկոսութեանց մէջ ոչ մի կապ չկայ: Մի՞թէ դուք «հակակղերական ազատամիտներդ», հաւատում էք, որ մեր և ձեր կապը միայն հայրապետական ընտրութիւնն է: Մի՞թէ

ոչ մի ուրիշ կապ չկայ մեր՝ հայադաւան հայութեան և կաթոլիկ կամ բողոքական հայութեան մէջ։ Ռուսաստանի հայութիւնը հերձուածի, բաժանման ոչ մի ցանկութիւն չի ունեցել և չունի, ընդհակառակն Տաճկաստանի հայոց բոլոր թշուառ օրերին օգնութեան հասնողը Ռուսաստանցին է եղել. ձեր որբանոցները, Մանասարեան և այլ վարժարանները, շինւելիք Ղուկասեան ձեմարանը, Ռուսաստանցիք են հիմնել ու պահում են միշտ նպաստելով, որ դուք բարոյապէս և կրօնապէս կապուած մնաք իրենց հետ նախ և առաջ ձեր օգտի, ապա ընդհանուր հայութեան օգտի համար։

Հետևաբար ձեր սպառնալիքն յանցանք է ձեզ համար, ձեր բաժանումը՝ միայն ձեզ վնաս։

Աւելի կասեմ. Ռուսաստանի հայոց քնքշութիւնը դէպի ձեզ դուք վիրաւորանքով էք փոխարինում։ Ուղիղ թէ սխալ Ռուսաստանի հայութիւնը պինդ է սիրել մի արքեպիսկոպոսի, որին դուք փողոցների ցեխերում տրորեցիք, և ուզում է նրան կաթողիկոսացնել, որին իր կարիքներին յարմար է համարում. թէև նա ձեզ պէտք չէ, թէև կաթողիկոսանալով նա ձեզ կառավարելու չէ, բայց դուք առելութեամբ կամ ուրիշ հաշիւներով, որոնք յամենայն դէպս հասարակական չեն, չէք ուզում նպաստել, որ Ռուսաստանի հայութիւնը այս անգամ գոնէ իր ցանկալի հայրապետն ունենայ։ Վայելել այս ժողովրդի նիւթական և բարոյական առատ բարիքը և ծայրայեղ վիրաւորանք հասցնել և դեռ հերձուածով սպառնալ՝ կարի անքաղաքավարութիւն է և ամենագէշ բաժանման առիթ. թէև Թիֆլիզ մանելիս էլի ձեռք պիտի

մեկնեք փողոզելու նրանցից, որոնց այդչափ վիրաւորում էք *)։

Ահա այս և սրանց նման խնդիրների առջև պէտք է կանգ առնել, խորհել, մտածել և հաշտութեան ճանապարհը բռնել, այլ ոչ թէ յենուել անարդար մե-



ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Պետերբուրգի

ծամանութեան վրայ, բաժանման հերձուածով վախեցնել և ընտրել մի կաթողիկոս, Ռուսաստանի հայութեանը հակառակ, որ այսպիսի պայմաններում ոչ միայն ձեր և մեր կապը չի լինի, այլ սրտերի բա-

*) Ծանօթ. Այդպէս էլ եղաւ. ընտրութիւնից յետոյ Թիֆլիզ մտան և ձեռք մեկնեցին։

ժանման անջրպետը, պատնէշը։ Իսկ երբ մեր և ձեր սրտերը բաժանուած են, էլ արժէ՞ խօսել հաւատի կամ հայրապետութեան կապի վրայ։

Այս լանդիրների վրայ իրաւախոհ լինելու համար անհրաժեշտ եմ համարում յանձնաժողով կազմել, որովհետև ընդհանուր ժողովում միայն կրքերը պիտի բաղխուին, եզրակացութեան չպիտի յանգիք և ազգային վեհաժողովը մանրաժողով պիտի դարձնէք»։

Ահա, ինչ որ խեղդեցին կոկորդումս, ինչ որ այժմ պարտք եմ համարում ասել ի դիտութիւն Ռուսաստանի հայութեան և ինձ ընտրող վիճակի։

* * *

Հետևեալ օրն է. էլէքտրական լոյսի շողերով ցոլտւած նստած են ազգային պատգամաւորները։ Դիւանի նախագահը բաց է անում ժողովը՝ յայտարարելով թէ այդ ժողովը պաշտօնական ժողով է, ուր պիտի պատգամաւորների լիազօրութիւնները ստուգուին։ Տէր տեղակալը թուղթ է գրել ու տեղեկացրել թէ նախարարութիւնն արտօնել է համազգային ժողովին ստուգել պատգամաւորների լիազօրութիւնները։

Իրաւամբ հարց բարձրացաւ թէ ժողովը պաշտօնական ճանաչելու համար հարկ է, որ ինքը՝ տ. Տեղակալը բանար այդ ժողովը, ուր ներկայ լինէր նաև Սինոդի պատուիրակը։ Գնացին խնդրելու մէկին և միւսին. տ. Տեղակալը մերժեց գալ, օրէնքի ներկայացուցիչն եկաւ, մի քանի րոպէ նստաւ ու գնաց ու չհամակացանք ո՛չ գալը, ո՛չ գնալը։ Պաշտօնական ժողովն այս անգամ յայտարարեցին կիսապաշտօնական, փոքր ինչ յետոյ գարձաւ մասնաւոր ու վերջացաւ ամբոխականով։

Ժողովի ընթացքը պարզեց թէ ինչու տ. Տեղակալը հրաժարուեց ժողովից, ինչո՞ւ օրէնքի ներկայացուցիչը եկաւ ու չեկածի պէս գնաց, ինչո՞ւ պաշտօնականը մասնաւոր գարձաւ։

Առաջարկութիւն եղաւ այդ ժողովը դեկավարելու համար նոր նախագահ և դիւան ընտրել. այս առաջարկութեան մէջ լռելեայն դժգոհութիւն էր արտայայտուում նախագահի անաչառութեան դէմ։ Սկզբունքով ընդունուեց առաջարկը, սակայն փափկանկատ և քաղաքավարի փոքրամասնութիւնը յարմար համարեց նոյն նախագահն ու դիւանն ընտրել և այս ժողովի համար։ Պ. նախագահը սրտի գոհութեամբ շնորհակալ եղաւ ժողովականներից և այս նոր պատուի և «վստահութեան» համար։

Անցան օրակարգին։ Անձնիւր պատգամաւորի լիազօրութիւնն ստուգելու համար մէկ ուղիղ և օրինական ձև կար. կարդալ պատգամաւորի անունն ու ընտրական վաւերական արձանագրութիւնը, քննադատելին քննել և տրամաբանական եզրակացութեամբ որոշումն անել ընդունելի կամ խոտելի համարելով պատգամաւորին։

Սակայն այսպիսի օրինաւորութիւնն ապօրէն գործերի քննութեան ժամանակ որպէս չափ ու կշիռ ընդունելը կարելի բան չէ ապօրինութեանց հեղինակների համար. ուստի և պ. նախագահը ճարպիկ պատրուակով խնդրից հեռանալով՝ այս ձևը տուաւ. քննել միայն քննադատելին, այսինքն ինչ որ ի լրոյ պիտեն որպէս քննադատելի։ Ցօժարեցան։

Փոքրամասնութեան ներկայացուցիչները՝ էապէս պ.պ. Սպենդիարեան, Ենգիբարեան, Զուբար, Չէրքէզեան յառաջ բերին հետեւեալ ապօրինութիւնները. յայտնի է և ոչ ոքից գաղտնի չէ թէ Տաճկաստանի հայոց պատգամաւորների մի մասը ժողովրդից ընտրուած չէ, ուստի և ժողովրդի ձայն ու ներկայացուցիչ լինելու բարոյական ու իրաւական արտօնութիւնը չունի։ Ամենայն հայոց հայրապետութեան տ. Տեղակալի կողմից մի անուանացուցակ էր ուղարկուած Պոլսի պատրիարքական տեղապահ Մանկունի արքեպիսկոպոսին մանաւոր նամակով, որպէսզի նա ժողովրդի ձայներն այդ անձինքներին տալ յորդորի։ Մանկունին այս ու՝ այն վիճակներին առաջարկել է այդ անձանց ընտրել, բարոյական ու իշխանական ճնշումն է գործ դրել, ժողովրդական ազատ, անբռնաբարելի իրաւունքն է ոտնհարել և միակողմանի մարդկանց մի ստուար խումբ է ղրկել էջմիածին ժողովրդի անունով ընտրելու ի գահ հայրապետութեան այնպիսի թեկնածուների, որոնք՝ որչափ և յարգական լինին որպէս եպիսկոպոսներ, ժողովրդի ցանկալին չեն։

Այդ ցուցակի գոյութիւնը ի յայտ եկաւ Պոլսի պատրիարքութեան տեղապահ «իմաստուն» Մանկունու բերանով, ուսկից ճարտարութեամբ գաղտնին դուրս էր քաշել պ. Հ. Առաքելեանը և յայտնի դարձրել մամուլի միջոցով։ Հայրապետութեան տ. Տեղակալի կողմից հերքուեցաւ ցուցակի գոյութիւնը, սակայն կաթողիկոսական մի այլ թեկնածու՝ Նիկոմիդիոյ սրբազան առաջնորդը դարձեալ միամտութեամբ իր նամակովը լրագրութեան մէջ հաստատեց

թէ ցուցակի առաքումը ճիշդ է։ Ամենայն Հայոց հայրապետի տ. Տեղապահը՝ որ պաշտօնական և անպաշտօն գրագրութեանց մէջ վերին աստիճանի ճշտապահ է, Մանկունուց ստացած մի գիր մակագրութեամբ Սինոդին է յանձնել, ուր Մանկունին զեկուցանում է որպէս բարեկամ թէ՝ ինչ որ հնարն էր արեց, մի քանի պատգամաւորներ իր տնօրէնութեանց հակառակ խոյս տուին Պոլիս մտնելուց, ուր պիտի հրահանգէր նրանց. ափսոս որ իր տեղապահութեան օրերը համրուած են, այլապէս գիտէր թէ ինչպէս պիտի պատժէր նրանց։

Որպէս ապօրինութեան մի այլ ցնցող փաստ յառաջ է բերուում ս. Էջմիածնից՝ տ. Տեղապահի կողմից քաշած մի հեռագիր Պոլիս՝ տեղապահ Մանկունուն թէ ցուցակի մէջ սխալմամբ մտած չորս քահանաների տեղը (անունները կան), որոնք իրենց մարդիկը չեն, պէտք է դնել Ծուսիկ, Եփրեմ եպիսկոպոսներին, Բագրատ, Բարգէն վարդապետներին և ձայները առաջիններից յետ խլելով վերջիններին տալ։

Այս յայտնագործութիւնները լսելիս, մի անգամ ևս հաստատուեցայ հաւատիս մէջ թէ անսուտ են և յաւիտեանս ճշմարիտ ս. Աւետարանի խօսքերը՝ «Չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի»։

Բայց ինչպէս ընդունելեցան այս յայտնագործութիւնները ու բողոքները ժողովի մեծամասնութեան կողմից և քննելու խնդիր դարձաւ թէ ոչ։

Փոքրամասնութեան ներկայացուցիչները պահանջում էին ապօրինութեամբ ընտրուած պատգամաւորների ընտրական գործն ու մերկացնող թղթերը

կարդալ։ Մեծամասնութիւնը բարձրացնում էր իր ժխորը թէ «պէտք չէ, քուէարկեցէք»։ Պ. նախագահը մեծ պատրաստականութեամբ քուէարկութեան էր դնում օրինաւոր թէ ապօրինի ճանաչել պատգամաւորի ընտրութիւնը առանց գործը կարդալու։ Ոաքի էր եղնում մեծամասնութիւնը կամ՝ իր թուով շատ ու անարդարութեամբ լի ձեռքը բարձրացնում էր ու ապօրինութիւններն օրինաւոր ճանաչում։

Այս պատկերի, այս իբրատեսակ բռնութեան առջև փոքրամասնութիւնը իր պատուին ու դիտակցութեանը տէր կանգնելով՝ բարուոք համարեց այնուհետև լուռ մնալ, լոկ հանդիսատես դառնալ և թողնել, որ լեռնացած անիրաւութեան բարձունքից սրընթաց թափով արշաւող մոլեգնեալ, պղտոր հեղեղը քանդելով, աւերելով հոսի մինչև վերջն ու ցամաքի, իր ետևից անմխիթար հեղեղատ, աւերակի քար ու քանդ տխուր պատկերը թողնելով։

Ի միջի այլոց փոքրամասնութիւնը շեշտեց Պալաքեան Գրիգորիս վարդապետի պատգամաւորութիւնը հետևեալ հիմունքներով. Պալաքեանը եկել է ընտրութեան որպէս Բուլղարիոյ թեմի առաջնորդ. Բուլղարիան Տաճկաստանի հայոց թեմ չէ. մինչև օրս Բուլղարիոյ կառավարութիւնը այդպիսի թեմ չի ճանաչում և ոչ մի առաջնորդ չի ընդունում։ Զորս տարի է որ Պոլսի պատրիարքարանի և Բուլղարիոյ կառավարութեան մէջ այդ խնդիրը գրագրութեանց նիւթ է դառել, բայց ցարդ վերջնի մերժումով է յայտնի։ Պալաքեան վարդապետին չորս տարի յառաջ Պոլսի պատրիարքարանը անուանել է Բուլղարիոյ հովիւ, բայց նա երբեք Բուլղարիոյ հողը կոխած չէ ու հայ ժողովուրդ

հովւած չէ։ Բացի այդ, նա Պոլսում է և ազգային ժողովում պաշտօն ունի, միչդեռ սահմանադրութեամբ Բուլղարիոյ առաջնորդը միաժամանակ չի կարող ազգային ժողովում պաշտօն վարել։ Իզմիրլեան կաթողիկոսը խաչի կոնդակ է տուել Պալաքեանին, ուր նա կոչուած է Բուլղարիոյ հովիւ. հովիւը առաջնորդ



ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ
Առաջնորդական ներկայացուցիչ Արդճի

չէ և թեմ ներկայացնելու իրաւունքից զուրկ է։ Անցեալ կաթ. ընտրութեանն էլ Պալաքեանը ապօրինութեամբ է մասնակցել, այս անգամ էլ նոյն ապօրինութիւններն է գործում լոկ այժի այժով։

Բայց ինչ օգուտ, հայ ժողովրդի անունն ի բերան «քաջ» պատգամաւորների մեծամասնութիւնը

ձայնի առաւելութեամբ օրինաւոր ճանաչեց Գալաքեան վարդապետին, ու մոռացաւ այն ժողովրդին, որի ներկայացուցիչն էր նա, որ իր վարդապետի երեսը տեսած չէր։

Շատ հետաքրքիր էր և մեծամասնութեան վերաբերմունքը դէպի Ամերիկայի հայոց պատգամաւորը, պ. Բերբերեանը.

Ձերկարելու համար կարճ ասեմ. Ամերիկայի 16 գաղութի հայութիւնը էջմիածնից կաթողիկոսական ընտրութեանը մասնակցելու հրաւէրն առանալով, իր «ազգային սահմանադրութեան» (որ հաստատուած է Թրխմեան կաթողիկոսի կողմից) օրէնքների անշեղ որամադրութեամբ ժողով է կազմում և պատգամաւոր ընտրում Բերբերեանին, որ Ամերիկայից շոգեպում է էջմիածին։

Ինչ անցք է անցնում յետոյ, դեռ գաղտնիք է, վաղուց պաշտօնանկ եղած մի վարդապետ յետոյ մի նոր ժողով է անում, մի փոքր խումբ հայերով ընտրում է Ամերիկայի պատգամաւոր մի ուրիշի, ինքն էլ իբրև Ամերիկայի առաջնորդ վեր է կենում գալիս էջմիածին ու բերում իր ընտրած ապօրինի պատգամաւորին։

Բերբերեանը աքանչելի մի ճառով դէպքերի յաջորդական կարգով, սահմանադրութեան յօդուածների հիմունքով ժողովրդի արդար իրաւունքի անունով պահանջում է, որ ժողովը իր պատգամաւորութիւնն օրինաւոր ճանաչի։

Սակայն նրա ձայնը անապատում հնչուող ձայնի պէս անլուր մնաց, նա փոքրամասնութեան մէջն էր նստած, որոնք արդար էի. համարում նրա պահանջը,

ուսաի և Ամերիկայի հայոց իսկական պատգամաւորը մերժուեց և կեղծ ու պատիրն ընդունուեց։

Ի դէպ. պէտք էր այդ ժողովումը լինել ու տեսնել թէ ինչպէսի ինքնամոռացութեամբ «ժողովրդավարական, ժողովրդասիրական» բանակը եռանդով ու աւիւնով կռիւ էր մղում Բուլղարիոյ և Ամերիկայի հայ ժողովրդի իրաւունքը և պաշտպանում էր երկու կղերական վեզարաւորների, որոնք ժողովրդական ձայնը իր կոկորդի մէջ խեղդող դահիճներն էին։

Եւ սարիներով «կղերական» հռչակուած փոքրամասնութիւնն էր, որ ժողովրդի իրաւանց պաշտպանն էր կանգնել ինչպէս միշտ, սակայն հարկաւ ի դուր...

Ինչ ծիծաղաշարժ ու միաժամանակ բարոյապէս դալուկ էին այն դէմքերը, որոնք հանդէս էին գալիս այդ դիմակախաղի ժամանակը։

Ինչ էր մնում փոքրամասնութեանը, բողոքել և հեռանալ։ Զնգուզի պատգամաւոր Գ. Ենգիբարեանը ներկայացրեց իր բողոքը, Բեսարաբիոյ պատգամաւոր Զուբարը ժողովին անուանեց «խայտառակութիւն» և նախագահի վարմունքներն՝ անհանդուրժելի, թողեց դիւանը և հեռացաւ, իր բողոքը գրելու։

Մեծամասնութեան մէջ, մեր հակառակորդների բանակում երկու ազնիւ հակառակորդ տեսանք, որոնք իրենց ազնուութեան գոհն եղան մեծամասնութեան բարեկամութիւնից զրկուելով. դրանք Աստրախանի պատգամաւոր երիտասարդ իրաւաբան Ն. Սաթունեանն էր (որ դժբաղդաբար անկարող եղաւ մասնակցել ընտրութեանը) և Եկիպատոսի պատգամաւոր վ. Թէքէեանը։

Ժողովը ցրուեց մեծամասնութեան կատաբեալ յաղթանակով, եթէ միայն այդպիսի յաղթանակը կարող է պատուով պսակել յաղթականի ճակատը։

* * *

Լիազօրութեանց ստուգութիւնների ժողովը հակառակ կողմերի հաշտութեան նշոյլն իսկ չնշեց։ Այդ ժողովում մեծամասնութիւնը հայկական այլանդակութեան ճամբէն բռնելով՝ փքուում էր իր թուական ու բռնաւորական ոյժով և՝ իբրև մի հզօր ասպատակող, յղփացման վայելքի էր նստած իր աւարի ու կողոպուտի առաջ։ Կոյր էր նա ու չէր նկատում թէ ամենայն յղփացումն հիւանդութիւն ու մահ է բերում. անիմաստ էր նա՝ որ չէր ըմբռնում թէ արդարութիւնը ոչ մի բռնութեամբ սպանել ընդմիշտ չես կարող։

Փոքրամասնութեանը տիրել էր մի խորին լռութիւն. նա ապուշ էր կորել լեռնացած սեաթոյր անիրաւութեան առաջ։ Նա դժուարանում էր ըմբռնել թէ ինչպէ՞ս տաճկական բռնութեան դէմ հեծեծանքներով, հոգու և մարմնի արիւնով բողոքող այդ Տաճկաստանի հայ քրիստոնեայ «եղբայրները», որոնց մէջ կային նաև հայ քրիստոնեայ եպիսկոպոսներ, ընդունակ էին թուական ու կուսակցական բիրտ ոյժին յենուելով բռնանալ հայ ժողովրդի սակաւաթիւ-ներկայացուցիչների վրայ. այս՝ կայէնի ձեռքն էր Աբել եղբօր վրայ բարձրացրած։ Ինչպէ՞ս կարող էր «լուսամիտ մտաւորականութիւնը» այդպէս կուրօրէն ցանկալ, որ ազգի լուսաւորութեան գործը ղեկավարող կաթողիկոսը կիսակիրթ ու ապիկար անձերի միջից վերցուի։

Այո, ապուշ էր կորել փոքրամասնութիւնը, լեզուակապ լռութեան տուել իրեն, բայց այդ լռութիւնը ոչ վհատութեան, ոչ հոգեկան անզօրութեան, ոչ հաւատի տկարութեան, ոչ աղօտ գիտակցութեան էր նշան. ընդհակառակն փոքրամասնութիւնն այդ ժամանակ յիշեցնում էր ձմրան գաշտերը, որ ձիւնի սպիտակ, թանձր սաւանով են ծածկուած, սակայն որոնց խաղաղ ծոցում, կրծքի չերմոցում բոյսն ու ընձիւղն են կենսաւորւում, ուր կեանքն է կազմակերպւում առողջ սաղմով ու մայր երկրի շնչով։ Այդ անբարբառ խաղաղութիւնը նման էր ծերութեան ալիքն ու դէմքի խորշումները մէկ կողմ դրած ու մանկացած չինչ ու խաղաղ ծովի, որի վրայով անհոգ ու սանձարձակ խնճոյքի սեղանի առաջ նաւի բաց առագաստներով լողում էին կոպիտ ոյժի ներկայացուցիչները, առանց մի վայրկեան ըմբռնելու, թէ հեռու չէ փոթորիկը, որ խաղաղութեան քօղոցն է ծածկուած։

Սակայն մեծամասնութեան մէջ եղան փոքրիշատէ հեռատես անձեր, որոնք մեր պաղ ու զուսպ լռութիւնից ցուրտ զգացին և կամեցան իրաւախոհութեան հողի վրայ համաձայնութեան սերմեր սփռել։

Երկուստեք կարգուեցան ներկայացուցիչներ. փոքրամասնութիւնից՝ Յովհաննէս Սպենդիարեան, Սամսոն Չէրքէզեան, Թադէոս Զաքարեան, Արշակ Բաբեան, Համբարձում Առաքելեան։ Մեծամասնութիւնից՝ Թորգոմ և Խորէն եպիսկոպոսներ, Մատթէոս վարդապետ, Նարամանեան, Միքայէլեան։ Սոքա դիւանի նախագահի և անդամների ներկայութեամբ համաձայնութեան կնդիր պիտի մշակէին փոխադարձ զիջողու-

թեամբ, արդիւնքը պիտի զեկուցանէին իրենց ընտրանուր ժողովներին ի տեսակցութիւն,

Այդ խորհրդակցութեան մէջ սուտն ու խորամանկութիւնը, որ իրենց հետ բերած են եղել մեծամասնութեան ներկայացուցիչները, բաղխւում են խելքի ու շիտակութեան հետ, որով զինուած էին միշտ փոքրամասնականները։ Հարկ չկայ այդ մեծամասնութեան դալը մո֊րհակների պատառոտումը նկարագրել։ Միայն իբրև օրինակ, իբրև նմուշ կարելի է յիշել հետեւեալ երկխօսքը. որով Սեբաստիոյ առաջնորդ պերճախօս (ու զոյգ ընդ սմին մի այլ բան) Թորգոմ եպիսկոպոսը դիմում է փոքրամասնութեան.

— Ջանըմ, վազ եկէք Օրմանեանից, ի՞նչ կուզէք անորմէ, արդէն 80 տարեկան զառամեալ ծերունի մըն է, ան ի՞նչպէս կրնայ կաթողիկոս ըլլալ։


— Սրբազան հայր, Օրմանեանը 80 տարեկան չէ, այլ 70 միայն, վրայ է բերում Չէրքէզեանը, եթէ Օրմանեանի տարիքի մէջ 10 տարի սխալ էք անում, ուրեմն նրա կեանքն ու գործունէութիւնը նկարագրելիս որչա՞փ սխալ կանէք։

Չէրքէզեանը քրիստոնէութեան քարոզչին այս դասը տալիս անշուշտ կամեցել է ասել՝ «Ври, братецъ да знай мѣру»։

Ի՞նչ են առաջարկել մեծամասնութեանը փոքրամասնութեան ներկայացուցիչներն այդ ժողովում. շատ փոքր, շատ չնչին բան։

«Որովհետև խորապէս համոզուած ենք, որ Ռուսաստանի գրեթէ ամբողջ հայութիւնը Օրմանեան Սրբազանին արժանաւորագոյն ընտրելի է համարում և մենք գիտակցում ենք, որ նա է արժանաւորագոյնը,

ուստի մեր խղճի առաջ պատասխանատուութիւն ենք յանձն առել նրա ընտրելիութիւնը պաշտպանել, այդ իսկ պատճառով առաջարկում ենք նախ և առաջ քառանուն ցանկի մէջ մտցնել Օրմանեանի անունը. երեքը դուք դրէք, մէկը մենք և որովհետև ձայների առաւելութիւնն ունէք, ուստի և կարող էք քուէարկութեան ժամանակ սևացնել նրան։ Այս է մեր առաջարկութիւնը և այս հողի վրայ միայն հաշտութիւն կարող է լինել ու բանակցութիւնները շարունակուել»։



ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Ա. Գոամ Սիճօդի

Ցանձնաժողովն իր զեկուցումն անում է ընդհանուր ժողովներին։ Զորից ընտրութեան նախօրեակի ե֊

բեկան է։ Մեծամասնութիւնն իր ժողովը է գումարել մատենադարանի դահլիճում, իսկ մենք խմբուել ենք Յուսիկ վարդապետի բնակարանում։

Լսեցինք յանձնաժողովի զեկուցումն. մեր հակառակորդների տրամադրութիւնը հիմք ընդունելով, ըմբռնեցինք, թէ մեծամասնութիւնը ոչ մի զիջումն անելու չէ. նա ոչ միայն Օրմանեանին քառանուն ցանկը մացնելու չէ, այլ նոյնիսկ Սուքիաս ու Կաբրպետ եպիսկոպոսներին. «ոչ Օրմանեան և ոչ օրմանական» ասել էին ոմանք։

Հարկ էր, որ մենք պատրաստ լինէինք. զգացինք թէ նրանք իրենց վախճանական պատասխանը կարող էին ուշացնել և մեզ յանկարծակիի բերելով տաճար տանել ու ակամայից մասնակցել տալ ապօրինի ընտրութեան. չէ՞ որ նախարարութեան հրահանգի մէջ ասուած էր, որ տաճարումը եղող պատգամաւորը ձեռնպահ մնալ չէր կարող։

Մտախոհ էինք մենք. տագնապի գիշերն էր մեզ համար։ Մեր գիտակցութիւնն ասում էր թէ մեր ընտրելիները արժանաւորագոյներն են Լուսաւորչի Աթոռը բազմելու համար. մեր խիղճը ձայնակից էր մեր գիտակցութեան և ժպտում էր մեզ, երբ ծրագրում էինք տեղի տալ կոպիտ ոյժին և հեռանալ ժողովից, գալիք օրերու ծանր պատասխանատուութիւնը ձգելով յոխորտացող անիրաւութեան վրայ։ «Հեռանալ տաճարից» ծանր էր հնչում շատերի համար և վարանման մէջ ձգում։ Եւ մենք աշխատում էինք համոզել իրար՝ անել թէ չանել այդ քայլը։

Համազգային ընտրական ժողովից հեռանալու միտքն իբրև բողոք պարբերական դարձող անիրաւու-

թեան դէմ ծագել էր իմ մտքում դեռ մայիս ամսին Էջմիածնում։ Ես դեռ երիտասարդ սարկաւագ էի, երբ Խրիմեանի ընտրութիւնը եղաւ, ուր բռնութիւններ գործ դրուեցան, որոնց դէմ լռեցին խոհուն, բայց անարի պատգամաւորները։ Որպէս բռնութեանց դէմ բողոքողների՝ ինձ և Ղևոնդ սարկաւագին ժամանակի բռնութեանց զեկավարները վանքում բանտարկեցին։

Ես տեսայ Իզմիրլեանի ընտրութիւնը, թաղումը, երբ նեղսամիտ պատգամաւորները բարոյական ու ֆիզիքական ճնշումներով խեղդեցին արդարութեան ձայնը յանցագործներին, ապիկարներին «ի փառս» հանելով և անմեղներին ու շնորհալիներին գահաւէժ անելով ու զրպարտութեան պեղած գուբը գլորելով։

Այս դրութեան պատուղը դառնահամ եղաւ տաբաբաղդ ու կոյր ազգի համար. բարոյական, անտեսական, կրօնական ու մտաւոր աւերակները բաժին եղան հային, որ բուի նման փլատակների վրայ հաստատեց իր բոյնը, վայելով ինք զինքը և այս պատկերի առաջն իակ կուսակցական կարճամիտ տեսութեամբ տարուող կոյրերը՝ նոր աւերակների հեղինակներն աւերակաց աշխարհում, կոյր, անսիրտ ու անզիղջ մնացին։

Արդ, մտածում էի ինքս ինձ Էջմիածնի սիրուն լճակի ափին մոքամոլոր շրջելիս. եթէ մօտակայ հայրապետական ընտրութեանը դարձեալ կուսակցական մի բազմութիւն խուժանական հոսանքով կը գայ, կը լցուի Էջմիածին ու դարձեալ անձնական հաճոյքի կամ շահի տեսակէտով կը կոխկրտէ արդարութիւն ու ազգի վսեմագոյն շահերը, փոքրամասնութեանը

մի բան կը ճնայ անելու. վեր կենալ, տաճարի մէջ շուռ գալ դէպի արեւմուտք «հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենանց և բռնութենանց նոցին» ասել և հեռանալ։ Եղկելի, թմրած, անգիտակից ազգ է մեր գովական հայ ազգը. քո խօսքը, հայրենասիրական ճիչը նրան չեն սթափեցնի իր մահաբեր թմրութիւնից։ Պէտք է երկրաշարժի որոտ, ահեղ ցնցում, որ նա աչքը բաց անի ու տեսնի որ անդունդի բերանում է պառկած մթան մէջ։

Իսկ այդպիսի որոտ ու ցնցում յառաջ կը բերէ միայն լրջմիտ փոքրամասնութեան հեռանալը տաճարից։

Ինչպէս մի գիւտ արած փութացի Սուքիաս սրբազանի մօտ, որ սենեկի դռանը նստած օրուայ թերթերն էր կարդում։

Սուքիաս սրբազանը իր փորձառութեան ու բնական խելքի ոյժով վայրկենաբար ըմբռնեց խնդրի կարևորութիւնը և իրեն յատուկ շեշտով որոտաց. «Այո, ուրիշ ճանապարհ չկայ. ես միշտ պատրաստ եմ»։

Նոյն միտքս հաւանութիւն գտաւ և ընկերիս՝ Յուսիկ վարդապետի կողմից։

Տփխիս գալիս նոյն խնդիրն ես դեռ Մայիսին, հուսկ յետոյ Նոյեմբերին արծարծեցի բարեկամաց շրջանում. Ներքամիտ Չէրքէզեանը համաձայն էր այդ գործելակերպին. հակառակ էր ուզարմանք յայտնեց իմ մտքի դէմ մի յարգելի պարոն, որը բարեբախտաբար էջմիածնում իրերի դիմացը կանգնելով, յարեցաւ մեզ և մի սքանչելի ճառ և կոչ կարդաց մեր խմբի մէջ, հեռանալու համար։

Ահա այս խնդրի՝ տաճարից հեռանալու, բայց ոչ առանց բողոքի, ոչ լռելեայն, շուրջը սկսուեցաւ մեր ճառերը այն գիշերը՝ որը ես տապնապի գիշեր եմ անուանում։

Դիմեցի մեր ամենօրեայ և գիշեր ու ցերեկուայ նախագահին՝ որ այնքան էր ընտելացել զանգակին, որ զանգահարելով նիրհում էր շատ անգամ, Հ. Ռաֆայէլեանին և խօսք խնդրեցի։

Հաշիւ եմ տալիս ես հայ ազգին և դիս ընտրողներուն, ուսաի և յիշատակեմ այստեղ ինչոր խօսեցի։

* *
*

«Պարոններ, Ռուսաստանի հայոց մեծագոյն մասը թմրութիւնից արթնացած թարմ գիտակցութեամբ այս ընտրութեանը մասնակցելու համար պատգամաւոր է ղրկել լուսագոյն ու լրջմիտ հայերին։ Նա իր ընտրեալներին նախորոշումներով ու պարտաւորական հրահանգներով չի կաշկանդել, վստահ լինելով նրանց խղճի մաքրութեան, մտքի պայծառութեան ու անբիծ հայրենասիրութեան վրայ։ Սակայն այդ ժողովուրդն ամենուրեք բուռն ցանկութեամբ յուսացել է՝ թէ իր ընտրեալները կը պաշտպանեն այն անզուգական արքեպիսկոպոսի ընտրելիութիւնը ի գահ հայրապետական, որին Պօլսի մոլեգնեալ ու վատարի խուժանը փողոցներում անարգեց, գառն ապերախտութեան արատն ընդունելով իր վրայ։ Ընտրելի պատգամաւորները ժողովրդի ցանկութեան ընդառաջ գնալով՝ նախընտրական ժողովներում իրենց ճառերով բացարձակ արժանաւոր հռչակեցին Օրմանեան Սրբազանին և ընտրուեցին պատգամաւոր։ Այժմ, երբ Օրմանեանի անունն իսկ քառանուն ցանկի մէջ գնելու

յօժարութիւն չունի հակառակորդ մեծամասնութիւնը, ձեզ մնում է մի բան՝ հաւատարիմ լինել ժողովրդին և լինքներդ ձեզ և չմասնակցել ընտրութեանը։ Այլապէս ինչ հաշիւ պիտի տաք այն ժողովրդին, որին բարոյական խոստումն էք արել Օրմանեանի ընտրելիութիւնը պաշտպանել։ Ինչ կը լինի ձեր դրութիւնը, եթէ կոպիտ ոյժին տեղի տաք ու միւսնաք մեծամասնութեան հետ մի այնպիսի կաթողիկոս ընտրելու, որ ձեզ ուղարկողներին հակառակ լինի։ Ո՛չ, դուք այդ չէք անի, դուք ազնիւ էք, դուք կը հեռանաք այդ ժողովից։

Ձեզնից անբաժան պիտի լինին յանուն նոյն գաղափարի Էջմիածնի միաբանութեան և Ցաճկաստանի հայ թեմերու այն պատգամաւորները, որոնք գաղափարով համամիտ են ձեզ ու Օրմանեան Սրբազանին համարում են արժանաւորագոյն կաթողիկոսացու։ Նրանք էլ պարտաւոր են խօսքի և գործի մէջ ներդաշնակութիւն պահել. այս նրանց բարոյական պարտաւորութիւնն է։ Ուրեմն նրանք էլ պիտի հեռանան ժողովից։

Բայց, պարոններ, Օրմանեանի անձնաւորութիւնը չէ, որի համար դուք այդպիսի անօրինակ պատմական քայլ պիտի անէք. այստեղ կայ երկու այլ զօրեղ հանգամանք, երկու խոշոր սկզբունք, որոնք Օրմանեանի անձից բարձր պիտի լինին մեզ համար, և որոնք այնուամենայնիւ ձեզ պարտաւորեցնում են հեռանալ ժողովից։ Առաջինը՝ ընտրական ապօրինութիւններն են, որոնց դէմ դուք պէտք է բողոքէք յանուն հայ ժողովրդի ընտրական ազատութեան։ Եթէ այսօր հայրապետական տեղակալը և Պոլսի պատրիարքական տեղակալը իրենց իշխանական դիրքով, իրենց գաւազանի զօրութեամբ կարող են ժողովրդին ազդարարել, որ իրենց ցանկացած անձերին պատգամաւոր ընտրէ, վաղը նոյնպէս մի ուրիշ զոյգ տեղակալներ նոյն խաղը կարող են խաղալ և ժողովրդի



ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ
Առաջնորդական ներկայացուցիչ Տիգրանակերտի

անունով իրենց մարդկանցը բերել տալ Էջմիածին և ազգի ու եկեղեցու վրին իբրև կաթողիկոս փաթաթուիլ ու օրաւուր սառցնել ժողովրդին իր եկեղեցուց։ Եկեղեցու և ազգի ընտրական սկզբունքը փրկելու համար հարկ է բողոքել և հեռանալ։

Երկրորդ՝ պարոններ, երբ ես լսեցի, թէ մեր

հակառակորդները ասել են, թէ «ոչ Օրմանեան և ոչ օրմանական, ոչ Սուքիաս, ոչ Կարապետ», ես ցնցուեցի ու ընտրելիների անձերը մոռացութեան տուի. մաքիս մէջ կանգ առաւ մի ուրիշ նշանաւոր ծանրակշիռ ու վտանգաւոր հանգամանք։ Ես հասկացայ, որ այս կաթողիկոսական ընտրութեան պայքար չէ, այլ երկու ուղղութեան ահեղ բաղխումն։

Մեր ցաք ու ցրիւ տառապեալ եկեղեցին, մանկանազուրկ ազգը դարերով պահել, փրկել ու բերել մեզ է հասցրել իր գոյութիւնը կենսակրթական-կուլտուրական ճանապարհով։ 20—25 տարի է, որ օտար հովերի ազդեցութեամբ մեր կեանքի մէջ բուսաւ մի ուրիշ ուղղութիւն, որ դարաւոր ուղղութեանը հակառակ ուղղութեամբ կամեցաւ վարել ազգի և եկեղեցու գործերը, հայկական կեանքն ու հաստատութիւնները էլ աւելի կարճ ճանապարհով, էլ աւելի արագութեամբ ու թափով բարձրացնելու, բարուքելու խոստումն անելով։

Այս նոր ուղղութիւնը՝ որ իրեն ազատամիտ անունը տուաւ, ես անուանում եմ «ազգային մոլորութիւն»։ Հանգամանքների բերմունքով նա յաջողեցաւ հայ ազգն ու եկեղեցին իր հայրապետով հանդերձ հանել իրենց շաւղից և դնել իր ճանապարհի վրայ առանց կանխատեսութեան, թէ այդ ճանապարհը անդունդով է վերջանալու։

Մենք՝ «խաւարամիտներս», «կղերականներս», ինչպէս սովոր են մեզ կոչել մոլորեալները, ակամայից տեղի տուինք, անկիւններ քաշուեցանք կամ վըտարուեցանք ասպարէզներից։ Նոր ուղղութիւնը ծովացաւ ու իր գիրկն առաւ նոյնիսկ բազմաթիւ հո-

գևորականների, մանր ու խոշոր, որոնք այժ տուին նոր անուղիղ ուղղութեան։

Եւ մենք գրեթէ քսան տարի ականատես ու ականջալուր եղանք սոսկալի անկման. մեր աչքի առաջ կանգ առաւ հետևեալ տխուր, սրտաճմլիկ պատկերը՝ մխացող հայ գիւղ ու քաղաք, անտէր որբերի բանակ, վարժարաններ՝ անիմաստ ու անբովանդակ, աղքատութիւն անօրինակ, բանդերը հայ ծաղիկ երիտասարդութեամբ, վանքերն՝ աւազակութեամբ լի. եկեղեցականութիւնը՝ հաւատից, ժամերը՝ ժողովրդից թափուր։ Բարի վարկ ունէինք օտարների առաջ, այն էլ կորցրինք, մեր ազգային պատիւն էլ վրայ տալով։

Այս արիւնոտ ու փոշոտ պատկերից հայ ժողովուրդը կշտացել է, թմրութիւնից սթափուել և ձեզ դրկել է այստեղ այնպիսի կաթողիկոս ընտրելու, որ շեղումից հանէր հայ ազգն ու եկեղեցին։ Օրմանեանը անձի անուն չէ այլևս նրա համար, այլ կենսակրթական ուղղութեան անուն, որի հետ բաղխուելու է եկել մի անգամ ևս մոլորութիւնը։

Եթէ դուք այժմ էլ տեղի կտաք մոլորեալներին ու զօրեղապէս չէք բողոքի նրա դէմ, նա էլ աւելի կը հաստատուի իր մոլորութեան մէջ և աւերն էլ աւելի կը շարունակուի։ Իսկ տեղի չտալու համար, գալիք օրերու սխալ գործերն ու անարժան կաթողիկոսութիւնը չքաջալերելու համար, դուք պարտաւոր էք մի վճռաւոր նահանջով յետ քաշուիլ այս ընտրութիւնից։ Ազգը ձեզնից դոհ կը մնայ, մոլորեալները գինարբութիւնից կը սթափուին, անարժան թեկնածուները կը ցնցուին։

Մէկ ճանապարհ կայ մեր առջև պատուով ցան-

ուած՝ «հեռանալ ընտրութիւնից»։

Այս իմաստով խօսեցին մեր լաւագոյն ընկերները, որոնց ես «մատեան դունդ էի անուանում. Յովհաննէս Սպենդիարեան, Սամսոն Չէրքէզեան, Աղէքսանդր Քալանթար, Գէորգ Զուբար, Դարեգին Ենգիբարեան, բժ. Շհեան, Խաչատուր Ա.Ֆրիկեան, Տէր Եղիշէ Դեղամեան, Համրարձում Առաքելեան, Արշակ Բաբեան։

Հաճութեամբ կը շարէի այստեղ նրանց ճառերը եթէ էջմիածնում մատրութիւն ունեցած լինէի լրագրութեանը յանձնել այս նկարագիրը և միտս պահած լինէի։

Այս ուղղութեամբ գործելուն նպաստաւոր եղան ժողովրդի ականաւոր անձերից հէնց այդ օրն ասացուած հեռագրերն ու նամակները, որոնք ժողովրդի տրամադրութիւնն էին ցոլացնում մեր առջև. «*Հեռանալ ապօրինի ժողովից*»։ Եկան և օրուայ թերթերն ու բերին նոյն տրամադրութիւնը. ի դէպ. աչքի ընկան Ստեփան Մալխասեանի տաք ու կորուկ յօդուածը «Մշակում», Սպանդար Սպանդարեանինը՝ «Սուրհանդակում»։

Եւ մենք՝ առանց Աւետարանի վրայ ուխտ անելու, վճռեցինք պարտք կատարել։ Փութացինք բողոքը կազմել ու տորդրել և պատրաստ կենալ։

Հարց դրուեց բողոքը տալու ձևի և ժամանակի վրայ. ես առաջարկեցի այն ձևը և ժամանակը, որ ընդունեց ժողովը որպէս լաւագոյնը և վայելուչը, ինչպէս և կատարուեց։ Հարկ զգացուեց մեր կատարելիք քայլի մասին նախապէս յայտնել պետութեան ներկայացուցչին, որպէսզի թիւրիմացութիւններ չառ-

ռաջ չգային. ժողովն այդ բանը յանձնեց Սպենդիարեանին և Զուբարին։

Մենք դեռ սպասում էինք մեծամասնութեան պատասխանին. գրեթէ միաձայն որոշել էին գաղտնի քուէարկութեամբ մերժել փոքրամասնութեան առաջարկը և ոչ մի զիջումն չանել։ Խնդիրը վերջացած էր մեզ համար. վճիռն անդառնալի։ Եւ մենք ուշ գիշեր պատկեցանք քնելու հանգիստ ու անդորր խղճով, բայց ոչ ուրախ, մտքի ալեկոծութիւնից ուժասպառ։

* *
*

Առաւօտ է. արևն ելեր ու աշնան աղքատ երկնքի ամպերէն ցնցոտիների պատառուածքներից վար իջեցնելով իր շողերը՝ աղօտ լոյս է ցօղել խաւար ու տխուր էջմիածնի վրայ։ Լուրջ փութկոտութեամբ թողինք մեր անկողինները, իջանք բնակարաններից, հասանք վանքի բակը, մատենադարանի հրապարակը, որոնք ժողովրդով ու պատգամաւորներով են ամբոխուած.

Մեր վճիռն այլևս գաղտնիք չէր. խօսք ու զրոյցի, ցաւ ու տրտունջի նիւթ էր դարձել այն հրապարակի վրայ։ Ժողովուրդը՝ որ բակ էր կապել 16 դարեան կաթողիկէի շուրջը, որ տխուր բայց գոհ էր մեղնից, կարծես հայկական դարաւոր բնազդով պարըսպել էր տաճարը, որ անիրաւութեան հեղեղը տաբերական ոյժով նրա դռներից ներս չհոսի, անարժան ընտրութեան լուրը մուրճի ծանրութեամբ չհարուածէ Լուսաւորչի դրած հիմնաքարը։ Չէ՞ որ ամեն անգամ՝ երբ աւելութեամբ կուրացած հայ ը «Աստուած ակառոյց Մեծի Սիոնոյն» հիմքին են դիպչում անիրաւութեան մուրճով, շարժւում է տաճարը,

ճչում են հիմքերը Մասեաց սարերի, ձորերի մէջ ո-
րոտ ու արձագանք փոխելով, դղրդում են սեղանները,
շրջւում են խաչերն ու աւետարանները նրանց վրայ,
ս. Մյուռոնը արտասուքի խոշոր կաթիլներով պղպջակ-
ներ է հանում իր երեսին կաթսայի մէջ ու խուլ
հեկեկանքներով եռում, կանթեղները կամարներից
վար են թափւում. զանգերն իրենց իրենց ահաւոր
թաղման ղօղանջով են որոտում, սևաթոյր ամպերով
ծածկւում է Մայր Էջմիածնի երկինքը, ծոցերը որո-
մունքով լի, արգանդը կայծակներով յղի, հրեղէն գե-
տերով հոսում են վայրկենները ահ ու սարսափ, ա-
հեղ զարգանդ թափելով հայ ազգի թշուառ ճնշացոր-
դի վրայ, որ հայոց աշխարհի սրտում, Մայր Էջմիած-
նումն է հիւսել իր բոյնը ու պատսպարուել աշխարհի
արհաւիրքներից։

Այս ամենը տեսնում, լսում, զգում են սակաւ
ընտիրներն ամեն անգամ, երբ ինքնասպան ու ուշա-
կորոյս ազգի կոյր հարուածը «Լուսաւորչայ հիմքն է»
բախւում ու տաճարի կաթողիկէից քարեր են թափ-
ւում։ Եւ ահա նա, հայ ժողովրդի հաւատով ճնշացոր-
դը ինքն իր անձով պարիսպ քաշել, բակ է կապել
Մայր Տաճարի շուրջը ու թոյլ չի տայ, որ անիրա-
ւութիւնը տաճարի ներսը հոսի ու հարուածէ Լուսա-
ւորչահիմն հաստատութիւնը։

Բայց նա մի լեռնաշարժ հնքով գլորում է վար
իր հոգու վրայ ծանրացած վէմ քարը, երբ նկատում
է թէ՝ մի փոքրիկ՝ բայց հարազատ բանակ կայ հոգով
ապառազինուած, որ կը մանի Տաճար «զբարուրք պա-
տերազմ» կը պատերազմէ, կը պաշտպանէ հայրենի
տան սրբութիւնն ու պատիւը, կը պարտուի Նիւսա-

լաւուրտի զօրութիւնից, կընկնի տաճարի շէմքի վրայ,
բայց յաղթական կը մնայ և կապրի պատմութեան
ու հայ ժողովրդի սրտի մէջ անդատապարտ անունով։

Եւ ժողովուրդը քանդեց իր պարիսպը, մեկուսա-
ցաւ՝ հանդիսատեսի վիճակն ընդունելով։



ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ
Նեկայացուցիչ Բնատարիոյ առաջնորդի

Այլ պատկեր էր մատենադարանի հրապարակում,
ուր ժողովրդից մեկուսացած, ցաք ու ցրիւ խումբ-
խումբ կանգնած էր խաւտպարանոց հզօրը՝ պատգա-
մաւորների մեծամասնութիւնը, իր թուական ոյժի
գիտակցութեամբ փարատնացած, որ պատրաստ է
երկաթապատ կառօք և երիվարօք վրայ հասնել անի-
րաւութեան երեսից փախչող Իսրայէլին և կարմիր

ծովի ալիքների տակը թաղել նրան։

Ընդդիմադիր բանակի ականջին հասել էր մեր վճռի ձայնը, մեր ծրագրած նահանջի լուրը, բայց միայն բաղխել էր նրա լսելիքն ու փակ դռնից չետ դարձել, առանց նրա մտքին ու սրտին հասնելու։ Նա չէր հաւատացել թէ սակաւաթիւ հակառակորդը այդպիսի քայլ կանի, ու կարծել էր թէ մեր տկարութիւնը ծածկելու ու հակառակ բանակում շփոթութիւն յառաջ բերելու նպատակով սուտ լուրեր ենք հնարում ու թևաւորելով թռցնում։ Իրաւունք ունէին. վասն զի երբ էք տեսել որ սուութեամբ ու կեղծիքով օրօրուողները շիտակ խօսքին, համարձակ ու ճակատով գործերին հաւատան. երբ էք տեսել որ կոպիտ ոյժին չենուածները բարոյական յաղթանակին հաւատան։

Սակայն ժողովրդի դէմքից դէպի մատենադարանի հրապարակը հոսող ատելութիւնն ու արհամարհանքը իրրև ձմրան պաղութիւն սողոսկելով մտաւ մեծամամանականներից ոմանց սիրտը և սառեցրեց որ լրջանան, առանց գինու արբեցութիւնից ուշքի գան։ Եւ երբ համոզուեցան թէ տարածուած լուրերը փախչող նպատակներ չեն, Ռոշկանի դէմենու նման թռումեցան, սալացած պաղեցան ձմրան ջրերու նման ու իրենց յանցագործ ծրագրներով լի գլուխները աւրը կորցրած արևածագկի նման կախ ընկան երկրահայեաց։

Ժամի 9-ին պարտաւոր էինք զանգի ձայնով հաւաքուիլ վեհարան և այնտեղից կարգաւորեալ շարքով իջնել Մայր Տաճար, քառանուն ցանկի շուրջն ընտրութիւն կատարելու։ Ժամն անցել է, լուռ է

զանգը, հոգևորների ներկայացուցիչները վազում են պետական ներկայացուցչի, դատախազի և տ. Տեղակալի բնակարանները «արհամարհուած» փոքրամասնութեան վճռի մասին զեկուցանելու, խորհելու, ելք հնարելու։ Ոմանք էլ մեր ներկայացուցիչներից ոմանց հրաւիրում են նորից իրաւախոհ լինելու, յորդորելու որ ծրագրած քայլից չետ կենանք։

Սակայն Ռուհաննէս Սպենդիարեանի բերանով մեզնից լսում են. «Մենք գիտէինք, որ պատգամաւորներից շատերի ընտրութիւնը ապօրինի է, բռնազբօսիկ, հակաժողովրդական, սակայն այդ ճշմարտութեան վրայ դեռ տարակուսում էինք մինչև երեկ երեկոյ։ Լիազօրութիւնների սուտ-ուութեան երեկուայ ժողովը փարատեց ամենայն կասկած և մեզ բացարձակապէս համոզեց, որ այս պատգամաւորական ժողովը ապօրինութիւններով է հարուստ և ժողովրդական-եկեղեցական իրաւանց ու սկզբունքների խախտումովը այլանդակուած։ Երեկուանից մեզ համար կաթողիկոսացու անձերը երկրորդական են դառել, մենք նրանց վրայ էլ չենք մտածում։ Մենք բողոքում ենք ճնշումներով կարգուած՝ այլ ոչ ժողովրդական քուէներով ընտրուած պատգամաւորութեան դէմ և հեռանում ենք և մեր վճիռն անդառնալի է։ Սկսել էք, շարունակեցէք և տարէք ձեր յաղթանակը, ձեզ պատկող գահիների վրայ աչք չունինք մենք»։

Մինչ բանակցութիւնները շարունակւում էին, մենք խմացանք հետևեալը. նախընթաց գիշեր մեծամասնութիւնը ժողով է կազմել լսելու իր ներկայացուցիչներից մեր առաջարկը. քառանուն ցանկի մէջ մեր կողմից դէմ մի հատիկ ընտրելի ընդունել։

խնդիրը քուէարկութեան են դնում է միաձայն, առանց մի քուէի, մերժում են ամենայն զիջում և հաշտութիւն։ Ի դէպ, այդ մի քուէն յօգուտ համաձայնութեան տուել է մի վարդապետ, որի անունը յայտնագործել և էջմիածնի հալածանքին ենթարկել, վիճակակից դարձնելով ինձ, չեմ կամենում։ Սակայն ժողովի և մեծամասնութեան ղեկավարները փութացել էին հաւատացնել մեզ, թէ իրենք շատ են աշխատել համերաշխութեան օգտին, բայց յաջողութիւն չեն գտել։ Այսպէս էին ուզում իրենց ուղղամտութեան մէջ համոզել մեզ այն ղեկավարները, որոնք գործով համաձայնութեանը սև քուէ էին տուել։ Եւ սրանք ազգի պատգամաւորներն էին, երկու օր առաջ Մայր տաճարի մէջ Աստուծոյ և հայ ժողովրդի առաջ իջման սեղանի սրբութեանց դիմաց երդում տուած, որ ճշմարտութեամբ, ուղղամտութեամբ, Աստծուն, ազգին և կայսերական օրինաց հաւատարմութեամբ պիտի խորհին, գործեն, և արժանաւորապոյնին ընտրեն։

Սակայն ես շարունակեմ. և այդ շարունակութեան մէջ պիտի երևայ, որ մեր երդմնակեր «ազնիւները» երդուել և ուխտել էին շարան-շարան խաբեբայութիւններից մանեակ հիւսել իրենց բարձր վզերի համար. այդպէս են երդւում այն մարդիկ, որ սուրբը գործին անսուրբը խորհուրդներով են մերձենում.

Պատմեցին մեզ նաև, որ քառանուն ցանկը կազմելիս, մեծամասնութիւնը գրով և Աւետարանով ուխտ է կնքել միաձայն, (հարկաւ առանց մեր մասնակցութեան) 91 ձայնով երկանուն ցանկը գաղտնաբար

քուէարկելիս ընտրել որպէս առաջին թեկնածու Դուբեան եպիսկոպոսին, իսկ երկու երկրորդներին Մեսրոպ և Սուրէնեան սրբազաններին տալ 60 և 50 քուէ։

Թէ ինչպէս հաւատարիմ մնացին և այս ուխտին, թէ ինչ արժէք ունեցաւ Աւետարանը այդ «ազնիւների» համար, այդ մասին յետոյ։

Ի դէպ. ոմն էին ընտրում «ուխտեալները» ի գահ հայրապետութեան... Չէ, լռեմ լաւ է, առանց այն էլ լեղիով ու քացախով խառն է այն բաժակը, որ «սրբազան հայրերս» տարիներով շրթունքներից չեն հեռացնում։

Ժամի 11-ն էր. իրարանցումը դադարեց, զանգը մեզ վեհարան հրաւիրեց։

Այդ զանգի ձայնը սովորական ղօղանջը չէր ինձ համար. քանի տարի ականջս շարունակ լսել էր էջմիածնի զանգերի մերթ ուրախ ու կայտառ, մերթ տխուր ու մելամաղձիկ ղօղանջը. բայց այս անգամ նման չէր նա և ոչ մի անգամուայ. նա աղօթքի հրաւիրակ չէր և ոչ թմրութիւնից արթցնող կոչնակ, այլ նա մի ահազանգ էր կարծես, կայծակներից փոխ առած որոտ, անիծամօր ողբ ու հառաչ, վայող բուի վայնասուն շեշտով։ Ես փախչում էի այդ ձայնից, շտապում վեհարան, որ էլ չլսեմ այն ձայնը։

Ի դէպ. այդ ղօղանջին ներդաշնակ մի մարդկային ձայն լսուեց պատգամաւորների միջից. մի պատգամաւոր տղայ հրամայական շեշտով կանչում էր իր ընկերներին «բժ. Կ. լսեցէք, ինչ որ ասի նրան լսեցէք»։

Պատգամաւորներից մի խղճմիտը բայց անարին

հարցնում է ընկերին.—Աղբար, ադիկայ վո՞վ է, որ՞ուն կուզեն որ լսենք կոր, ի՞նչ բժիշկ է, պատգամաւո՞ր մըն է։

—Չէ՛, աղբար, անիկայ պատգամաւոր մը չէ, էհ շտէ, ակռայ կարկըտնող մըն է, բժիշկ կըսեն, անոր ալ պիտի լսենք եղեր, հասկցա՞ր։

— Էհ ի՞նչ ընենք, աղէկ, անոր ալ լսենք, ի՞նչ ընենք աղբար, ի՞նչ...

Այս խօսակցութեան հետ մաքիս մէջ զուգորդուեցաւ մի դէպք, որ երեկ երեկոյեան տեղի ունեցաւ. վշտով, ցաւմամբ, յուսահատ զայրոյթով ու զղուանքով լի մտնում է մեր ժողովը մի տաճկատանցի հայ վարդապետ, մի բարեխիղճ, արդարակրօն հայ եկեղեցական ու դրան եռանից սկսում է իր խօսքը ծանր հևքով.

— Այ՛ո, այսպէս, կը տեսնաք, եղբայրներ, ինձի կըսեն շուտով Տաճկաստան պիտի յետ դառնաս եա՞, հոն կը տեսնենք քո հաշիւդ։ Ինձ սպառնալիք կուտան, սակայն ես չեմ վախնար, ես ճշմարտութիւնն ուրանալու ախտը չունիմ, չեմ կրնար, կուզեն կեանքըս առնել հոգ չէ»։ Եւ մենք պաղած աչքերով նայում էինք այդ անուշ վարդապետին ու տաք սրտով սիրում նրան։

Այսպէս «ուխտաւորների» «երդմնակերների» բանակը հրաման ու սպառնալիք սփռելով իր շուրջը, խղճի և խոհականութեան ձայնը խեղդելով իր մէջ, գնում էր վեհարան ահազանգի ելևէջով։

* *
*

Դէպի վեհարանի պարտէզը տանող դարպասից ներս մտնելով աշխարհիկ պատգամաւորները թեքւում

էին դէպի ձախ և ուսած կարգով շարւում դուրսը սալայատակի վրայ. հոգևորները դէպի աջ թեքուելով՝ բարձրանում էին վեր և մտնում վեհարանի արտաքին դահլիճը։

Ես էլ մտայ։ Դահլիճը լիքն է վեղարաւորներով, վերարկուներով, ոսկի, արծաթ շողակնազարդ լանջախաչերով, շքանշաններով։ Այս բոլորի մէջ պակաս են



ՄՈՒՇԻ ՎԱՐԴԱՊԵՏ
Առաջնորդական ներկայացուցիչ Թալաթի

մարդն ու քրիստոնեան, որ զարդարէին այդ ամենը, փայլ տային վեղարին ու վերարկուին, խաչին ու նշանին, որոնք այնքան նսեմ, անարժէք են, երբ չարախորհուրդ գլուխներ, հպարտ պարանոց, առեցող կուրծք են զարդարում։

Որքան քիչ մարդ կար այդտեղ, քրիստոնեայ մարդ, Աւետարանի ուխտաւորների այդ հոյակապ կաճառի մէջ։

Աչք ածեցի այդ հաւաքածուն, այդ տարօրինակ զանգուածը, որ հայոց եկեղեցու հոգևոր զինուորութիւն է կոչւում։ Մի զինուորութիւն, որի զինուորների հոգիների մէջ ոչ մի նմանութիւն, մաքի, զգացմունքի, կամքի, արտաքին ձևերի ու շարժմանց մէջ ոչ մի ընդհանուր մարզանք չկայ։ Այս մեկուսացած սրտերի հանդիսարանում կը տեսնէք քովէքով կանգնած կամ նստած անարգին ու պատուականին, ուխտաւորին ու առաքինուն, գաւաճանին ու հաւատարմին, տգէտին ու գիտունին, բթամտին ու սրամտին, գողին ու անձնուէրին, տտահակին ու կարգապահին, աւազակին ու հովուին, հալածողին ու հալածեալին, տիրանենգին ու տիրասիրին, գաժանին ու սիրողին, խաչահանին ու առաքեալին, Յուդային ու Յովհաննէսին։

Աշխարհիս բոլոր հատատութիւնները, ընկերութիւնները, աղէկ ու վատ, օգտակար ու վնասաբեր, իրենց գործին, փեշակին չարմար ախպեր այստեղից կարող էին ջոկել ու տանել և գոհ մնալ։

Այսպիսի եզբայրութեան մէջ բնական է, որ արտաքին վայելչութիւն էլ չի լինի, պատկառանքի շեշտը ջնջուած կը լինի։

Մի ընդհանուր հայեացքից, մի սրատես դիտողութիւնից դուք այդ բանը կընկատէք։ Նայեցէք, ահա ներս է մտնում մի եպիսկոպոս. շատ դէմքեր աւելութեամբ են ծռմռւում, շատ գլուխներ իրենց առնու վրայ շուռ են գալիս, շատ շրթունքների վրայ

ժպիտ է ծաղկում, շատ հասակներ յարգանքով ծալւում են, շատ բերաններ են բացւում գովքի ու պարսաւի համար։ Տեսածից յետոյ բարուրք կը համարէք փակել ականջներդ, որ բերաններից ուղղակի ականջները հոսող փսփսոցը չլսէք։

Եւ այս բոլորը մի Մայր եկեղեցու որդիք են. սիրտդ քամւում, աղիքներդ գալարւում, հոգիդ արիւնոտւում, միտքդ գալկանում, աչքդ արցունքով է ծովանում ու ողբերգու մարգարէի վիշտն է ցցւում գանգիդ ու սրտիդ մէջ. «Ո՛ տայր ինձ յանապատի դոյզն օթևանս... Եւ լարեցին զլեզուս իւրեանց իբրև զաղեղն. ստուիթիւն և ոչ հաւատք զօրացան ի վերայ երկրի, զի ի չարեաց ի չարիս ելին և զիս ոչ ծանեան, ասէ Տէր։ Իւրաքանչիւր յընկերէ իւրմէ զգոյշ լերուք, և յեղբարս ձեր մի յուսաք, զի ամենայն եղբայր խաբելով խաբէ...»։

Մտնում է ձեր առիւծը՝ Սուքիաս արքեպիսկոպոսը, իր օրերին յատուկ կարգապահութեամբ ողջունաբեր գլուխ է խոնարհում. նստածներից ոմանք վորձում են անշարժ մնալ, բայց նա իր ծակող, պահանջկոտ աչքերով կարգապահութիւն է պահանջում և նրա այդ հայեացքին չդիմանալով ակամայից վեր են կենում ոմանք ու գլուխ խոնարհում։

Դահլիճի վերին կողմը, բազմոցի վրայ տեղ գրաւելով նա որոտագին ձայնով դիմում է դիմացը նըստած Մեսրոբ սրբազանին նուրբ հեգնանքի և դողացող գայրոյթի շեշտով։

— Մեսրոպ սրբազան, դուք անշուշտ կիմանաք, ճշմարիտ է թէ Տէր Նախարարի թղթի մէջ ասուած է, թէ տաճար մտնող պատգամաւորները այլևս դուրս

գալու իրաւունք չունին և առանց ձեռնպահ մնալու պարտաւոր են մասնակցել ընտրութեանը։

Մեսրոպ սրբազանը շփոթուեց ու մի շփոթ, անորոշ պատասխան տուաւ։


Ինձ այնպէս թուաց թէ այդ խօսակցութիւնը անախորժ վախճան կարող է ունենալ, ուստի մօտեցայ Սուքիաս սրբազանին, զեկուցի թէ այդ մասին թող անհոգ լինի, մեր ներկայացուցիչները՝ Յովհաննէս Սպենդիարեանը և Զուբարը իրաւախոհ են եղել պետութեան ներկայացուցչի հետ և լսել են նրանից թէ ժողովի բացման ժամանակ, նախքան ընտրութեանց անցնելը, դժգոհ պատգամաւորները եթէ կամենան կարող են թողնել ժողովը։

Տիրեց լռութիւն և մի վարդապետ պատգամաւորների անունները կարդալով, «այո, ձախ», «այո, ձախ», հեգելով կարգի հրաւիրեց ամենքին, պահանջուած կարգով Տաճար իջնելու։ Աւետրդ կոկորդաբանութիւնն։

Շարքի գլուխ անցան առաջին դոյգը՝ Տ. Տեղականն ու պետութեան ներկայացուցիչը։ Նրանց ետեւից գնում էր Երուսաղէմի պատրիարքութիւն և Աղթամարի կաթողիկոսութիւնը ներկայացնող մի դոյգ՝ մի վարդապետ և մի քահանայ։ Երուսաղէմի պատրիարքական և Աղթամարի կաթողիկոսական տեղապահները եպիսկոպոսական և արքեպիսկոպոսական դասի մէջ արժանաւոր ոչ չէին գտել ու իրենց ձայները տուել էին մր վարդապետի և մի քահանայի վայելչութեան դէմ գնալով։ Ինքնուրոյնութիւնից ձեռք քաշած պատրիարքներն ու տեղապահները ուրիշ ընտրութիւն անել չէին կարող։

Հուսկ յետոյ գնում էին Սինոդի անդամները Էջմիածնի միաբանութեան ներկայացուցիչները, առաջնորդներն ու վիճակների ներկայացուցիչները։

Դուրսը սանդուղքների վրայ հոգեւորական պատգամաւորների շարքի վերջից միացան աշխարհական պատգամաւորները և այսպիսով հայ ազգի 122 ներկայացուցիչ Էջմիածնի զանգերի հրաւիրական ղօղան-



ՏԻՐԱՅՐ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ
Խարբերդի առաջնորդական տեղապահ

ջով երկուստեք ծովացած ու լայն ճանապարհ բացած ժողովրդի միջով անցան ու Մայր տաճար մտան Լուսաւորչի գահի համար արժանաւոր գահակալ, հայ ժողովրդի համար արժանընտիր հովուապետ, հայ հոգեւորականութեան համար կարող ղեկավար ընտրելու։

Տաճարի յետին դասում, կամ գաւթում, ուր հայ ժողովուրդն է աղօթում աստուածպաշտութեան ժամանակ, խաչաձև շարուած են սեղաններ և աթոռներ։ Մուտքի կողմում բազմում է ժողովի նախագահ՝ Տէր Տեղակալը երեսը դէպի Իչման ս. սեղանը. ալ կողմից ըստ աւագութեան տեղ են բռնում հոգևորականութեան պատգամաւորները երեսները դէպի արևելք և հիւսիս։ Ձախ կողմից նստում են աշխարհական պատգամաւորները երեսները դէպի հարաւ։ Դիմացը նստում է պետութեան ներկայացուցիչը երեսը դէպի արևմուտք, թիկունքը դէպի Իչման սեղանը. նոյն դիրքով նստում են փոքր ինչ հեռու Սինոդի դատախազը, ատենադպիրը և երկու պաշտօնեայ։ Դռներն ամուր փակուեցան։

Երբ ամենքը տեղաւորուած էին, ոտքի ելաւ Տ. Նախագահը, ոտքի ելանք ամենքս։ Ս. գործն աղօթքով է սկսւում. Տ. Տեղակալն «հայրն մերն» է կարդում, երկու վարդապետ սաղմոսներն են քաղում, եպիսկոպոսները հատնտիր աղօթքներ են մրմնջում։

Խորհրդաւոր է ու սուրբ վայրկեանը. «Ձգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ»։ «Հովիւ քաջ, Հովիւ, բարի և յաւիտենական, նայեաց և այց արա բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ գթութեամբ քով։ Զի քո առաջի կամք, Տէր, և ողորմութեանցդ և գթութեանցդ ակն ունիմք. զամենեսեան օրհեա, զամենեսեան իրամասանացո, զամենեսեան լուսաւորեա և ամենեցուն պարգեւեա զերկնից արքայութիւնդ»։

Թւում է քեզ թէ սուրբ տեղանների վրայ դրուած, որմերից ու սիւներից կախուած սրբոց պատկերները կենդանանում են, Իչման տեղում արձանանում է ինքը Յիսուսը, կաթողիկէն ընտիր նախնեաց հոգիներով է լցւում այս աղօթքը, խնդրուածքը, ուխտը լսելու։ Թւում է թէ հրաշք պիտի կատարուի. փրկչի ձեռաց շարժումով հրեշտակը պիտի մօտենայ պատգամաւորներից շատերին, հրեղէն սրով նրանց կուրծքը պիտի պատռի, հանէ սիրտը, մաքրի, ազատի աւելութեան մամուռից, դէշ զգացմունքների թանձր փոշուց. թւում է թէ լոյսի մի ճառագայթ պիտի ցոլայ հրեշտակի լուսաշող ճակատից ու ընկնի աղօթող պատգամաւորների գանգի մէջ մթնած խմաստութիւնը լուսաւորելու։ Թւում է թէ ահա հրեշտակը ունելիով մի շիկացած կայծ է վերցնում ու մօտենում պատգամաւորների շրթունքներին, որ նրանք մաքրուին սուից ու ճշմարտութիւն խօսին։

Այո, այդ աքանչելի աղօթքների անուշութեամբ սպասում ես որ հրաշք պիտի կատարուի. վայրկենապէս ի չիք պիտի դառնան անհամաձայնութիւնները. եղբայրութիւն, սէր, արդարութիւն պիտի կապէ սրբացած հոգիներին և ամենքը արժանաւորապէս ընդրելիների անուններ պիտի տան. իսկ անարժանները մէկ կողմ՝ իբրև ցնցոտի հանելով իրենցից փառասիրութիւնը կը հրաժարուին կաթողիկոսական թեկնածուութիւնից և համեստութեան փայլն ընդունելով՝ հիացմունքի և գովքերի առարկայ կը դառնան անձանց պատիւ շահելով։

* *
*

Սակայն լուռ են ամենքը. էլի նոյն աւելութեամբ պաղած դէմքեր. էլի նոյն անափառութեամբ վարագուրուած աչքեր, որ գալիք օրերը չեն տես-

նում, էլի Բելիարի ու Բահադի երկրպագութիւն տա-
ճարի մէջ, ինչ որ դուրսը։

Հրաշքը բարուն, գեղեցկին, ճշմարտին հաւատա-
ցողի համար է կատարւում, այլ ոչ սոսկ կոկորդով
ձևական աղօթքներ մրմնջացողների համար։

Եւ ես տեսնում եմ, թէ ինչպէս Յիսուսը սեղա-
նից իջնում, ուղղում է իր քայլերը դէպի դուռը, ես
լսում եմ նրա ձայնը, վշտից դողացող աւաչը. «եթէ
ոք կամի գալ զկնի իմ, ուրասցի զանձն իւր և բարձ-
ցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ»։ Բոլոր սուրբերը՝
պատկերների շրջանակները դատարկ թողնելով իջ-
նում ու հետևում են Նրան։ Նրանք դուրս են գնում,
նրանք էլ չեն կարողանում, չեն կամենում բնակիլ
այն տաճարի մէջ, ուր անարդարութիւն, սուտն ու
բռնութիւնն են ծով կապել։ «Արդ, թողեալ լիցի
տունդ ձեր աւերակ»։

Այլևս դատարկ էր տաճարը մեզ համար, նրա
ամենիւ բովանդակութիւնը թողել էր Նրան. ինչպէս
մի ցուրտ, աներդ, անզուտ գերեզման, որից պէտք
էր փախչել, հեռանալ վաղաժամ...

Եւ ահա երբ ժողովի բացման ճառը վերջացնում
է Տեղակալ սրբազանը, վեր է կենում տեղիցը ալե-
զարդ Սուքիաս արքեպիսկոպոսը, կանգնում մի եր-
կու վայրկեան ձախ ձեռքը կախ, աջովը մեր բոլոքը
սեղմած կրծքին։ Տիրում է մի գերեզմանական լուռ-
թիւն կենդանի մարդկանց այս ընդարձակ գերեզմա-
նոցում։ Արձանացած դիրքերով, զսպուած շնչով, պա-
ղած աչքերով ու ափիբերան նայում են ամենքը թէ
ինչ կը լինի։

Այդ լռութեան ու քարացման մէջ հայոց եկեղե-

ցու աւագագոյն արքեպիսկոպոսը կարծես իբր դա-
րերի հայութեան ուրուական, հանդարտ ու վեհ քայլե-
րով շարժւում է յառաջ, կտրում է յետին շարքը
թիկունքից, դէպի Իչման սեղանը պտոյտ գործում,
խոնարհ երկրպագութիւն անում, ապա թիկունքը
դէպի արևելք և դէմքը դէպի սրբազան Տեղակալն
անելով՝ խոնարհ գլուխ է տալիս, կանգնում է նրա
առաջ, և սկսում իր հակիրճ ճառը վշտից, յուզմունք-
քից թաւ առած շեշտերով։

Երևակայութեանս առջև կանգ է առնում Սինա-
յի բարձունքներից պատգամներով իջնող Մովսէսը,
որ վկայութեան խորանի առաջ Ոսկէհորթի պաշտա-
մունքն է տեսնում և յանդիմանութիւնը շրթունքնե-
րում դառնում է Ահարոնին. «Ջինչ արար քեզ ժո-
ղովուրդ, զի ածեր ի վերայ դոցա զանհնարին մեղ-
սդ»։

Կանգնում է Աւետարանի Աւետաբերը և «վայե-
լը» շրթունքներում որոտում է յանդիմանաբար.
«Տուն իմ տուն աղօթից կոչեսցի և դուք արարէք
զդա այրս աւազակաց»։

Սուքիաս արքեպիսկոպոսը՝ իր խօսքը վերջացնելով՝
խոնարհութեամբ մատուցանում է մեր բողոքը սրբա-
զան Նախագահին և իր քայլերը դէպի դուռն է ուղ-
ղում։ Ոտքի են ելնում Էջմիածնի արքեպիսկոպոս-
ներ, եպիսկոպոսներ, վարդապետներ և աշխարհական
պատգամաւորներ թուով 28, երեսուն երկու ձայնով,
մի մի հայեացք են ձգում գլխիկոր մեծամասնու-
թեան վրայ, մօտենում շարքով խոնարհ գլուխ տա-
լիս Տեղապահ սրբազան հօրը և Սուքիաս սրբազանի
եռևից դէպի դուռը գնում։


Այդ տեսարանի առաջ մեծամասնութիւնը ցընցուում է, ոմանք ղողային ցնցումներ են ունենում, ոմանք արտասուում. սակայն շուտով զսպումեն իրենց ղղերն ու արցունքը. սպառնական հայեացքներից ցուրտ է փչում ու սառոյց դարձնում անցունքը ծովացած աչքերում, չորացնում հետքը լացողների այտերի վրայ։

Դրան հակից մի հայեացք եմ փոխում գնացողների և ճնացողների վրայ. առաջինները՝ շատ աննշան բացառութեամբ, բարձրագոյն կրթութեան, փորձառութեան տէր, լուրջ անձեր, վերջինները մի տարօրինակ խառնուրդ թերուսների և ոգէտների՝ շատ աննշան բացառութեամբ։ Այս մեծամասնութեան գանգուածին իբրև գլուխ և ղեկավար ճնում են երեք ռուսաստանցի անձեր, բարձրագոյն կրթութեան և դիրքի տէր անձեր։ Միտս են գալիս այն առասպելական կենդանիները, որոնց մարմինը և պոչը կամ ձկան է, կամ չորքոտանու, բայց որոնց ուսերի վրայ մի մարդկային դեղանու գեղեցիկ գլուխ դրուած։ Ու ես ցաւում ու ափսոսում եմ, որ այդ խառնիճաղանճ մարմնի, այդ գանգուածի այլանդակ ուսերին, որպէս գլուխ բազմած էին երեք յարգելի դէմքեր ի միասն իրենց անուանն։

Կարում եմ հայեացքս այդ տխուր տեսարանից, այդ վտառերի հանդիսարանից ու մի անգամ ևս միտս է գալիս հինաւուրց իմաստունի խօսքը. «Տեսեալ ի ստորինս խառնակ զամենայն,

Զվիճակ մարդկան յաւերժ ի մթան,
Զվտառց կայտռիլ, գլաւաց կական
Նրօնքն ի սրտէս անկանին կործան...

Լայն բացւում է աւազ դուռը մեր առջև. Սուքիաս սրբազանին շէմքի վրայ տեսնելիս սրտի տրոփիւնով սպասող ժողովրդի հազարաւոր բերանից «կեցցէն» է թռչում։ Խեղճ ժողովուրդ. նա պատերազմի գաշտից վահանը ձեռքին չետ դարձող յաղթահան զինուորներին չէր, որ «կեցցէ» էր կանչում, այլ վահանի վրայ արիւնոտ սրտով ընկած հաւատարիմ-



ԵՂԻՇԷ Ա. Ք. ԳԵՂԱՄԵԱՆ
Առաջնորդական ներկայացուցիչ Ձնգուեի

ներին և գոհ էր և մխիթարուած։ Նա յաղթականների համար պահում էր իր արհամարհանքն ու պատուհասող լռութիւնը։

Ժողովրդից շատերը ծունկ իջան Սուքիաս արքեպիսկոպոսի առաջ, համբոյրներ տալով նրա ձեռքե-

բին ու վերարկուի քղանցքներին։ Նա մխիթարում էր ժողովրդին, սիրտ էր տալիս, նա շեշտում էր թէ պարտական էին ժողովրդի դարաւոր իրաւունքները պաշտպանել, ինչպէս որ կարող էին։

Այս տեսարանի առաջ քարերն իսկ կը շարժուէին, խեղճ, տառապեալ ժողովուրդ։ Խորապէս զգացուած էի և ժողովրդին ձայնակցելով կարծես նրա կողմից մաքիս մէջ այս գոհացողական էի ուղղում Սուքիաս արքեպիսկոպոսին. «Ապրիս յաւետ, հայր սրբազան, քո մէջն այդ շեշտն եմ սիրում, այդ հզօր շեշտը, որ հեռագրալարի սիւներու նման հպարտ ու հաստատ շարքով կանգնած են կեանքիդ ճանապարհի վրայ։ Տար այն մինչև գերեզման։ Այդ շեշտերի շարքը կառաջնորդէ յետնորդ սերնդին դէպի քո օրհեալ շիրիմն ու դամբարան, որ մշտաբարբառ ու խօսուն կը մնան նրա համար այն ժամանակն իսկ, երբ ձիւնի ու ցեխի տակ կորած ու ճամբէն կորցրած անարժէք կաթողիկոսների գերեզմաններին այցելութիւն ոչ ոք կը գայ։ Գերեզմաններ, որ լուռ ու համր կը մնան, որպէս յաւիտենական անբարբառ մոռացութիւն»։

Բոլոր բողոքաւորները թուով 28 շրջապատուած էին ժողովրդով։ Այդ մեր մայր ժողովուրդն էր ու մենք նրա գրկում։ Ա՛խ, ինչպէ՜ս ջերմ, ինչպէ՜ս տաք էր այդ գիրկը, ինչ դուրեկան՝ նրա դուրդուրանքը. այո՛, այդ արհամարհուած, մեր մայր ժողովրդի գիրկն ու գգուանքը վշտի վայրկեաններում...

Ի դէպ է պատմել և հետևեալ կարևոր միջադէպը։

Երբ տաճարից դուրս էինք գալիս էջմիածնի

աւագ միաբաններից մինը, Բարդուղիմէոս սրբազանը ձեռքերը դէպի գնացողներիս շարքը տարածած ու վրդովուած ձայն էր տալիս. «Տօ, կացէք է, տօ յո՞ւր էք գնում, տօ հլա մի գնաք է՜»։ Սակայն մենք չէինք կարող մնալ, մանաւանդ թէ չգիտէինք թէ ինչ ունի իր մտքում Բարդուղիմէոս սրբազանը։ Միայն նկատեցինք, որ նրա առջև սեղանի վրայ մի ինչ որ սպիտակ շորի մէջ մի բան կար փաթաթած դրած, որ գրքի ձև ուներ։ Իմացանք յետոյ հետևեալը. մեր հեռանալուց անմիջապէս յետոյ Բարդուղիմէոս սրբազանը ներկայացնում է ժողովին մի բողոք հետևեալ բովանդակութեամբ։ Հայոց եկեղեցու հիմնական օրէնքներով այն եպիսկոպոսը, որ կաշառքով է ստացել եպիսկոպոսական աստիճանը, ոչ միայն կաթողիկոս լինել չի կարող, այլ եպիսկոպոս իսկ չէ։ Ժողովի նախագահ Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսը ոչ միայն չի կարող կաթողիկոս լինել, այլ եպիսկոպոս իսկ չէ, որովհետև նա 1500 արծաթի կաշառքով է ստացել եպիսկոպոսական աստիճանը Մանկունու միջնորդութեամբ։ Ահա փաստաթուղթը, Գէորգ սրբազանի ինքնաձեռագիր նամակը։

Այս յայտարարութիւնը զգայացունց — սենսացիօն դէպք է, խաղք ու խայտառակութիւն Բարդուղիմէոս եպիսկոպոսի կողմից։ Ձենք ուրանում, որ Բարդուղիմէոս սրբազանը ճշմարտութիւններ ասել գիտէ. բայց նրա այս անօրինակ և անտեղի յայտարարութիւնը համարում ենք սխալանք։ Չէ՞ որ այդ 1500 րուբլու պատմութիւնը այլ կերպ է ներկայացնում Սուրէնեան սրբազանի կենսագրութիւնը կազմող Իւվկեան քահանան։ Կարծում ենք ընտրական ժողովը

արձանագրութիւն պիտի կազմէր այդ վրդովեցուցիչ անուանարկութեան համար և Բարդուղիմէոս եպիսկոպոսին ծանր պատասխանատուութեան պիտի ենթարկէր։ Սակայն զարմանում եմ, որ լռութիւնն է եղել այդ բողոքին պատասխան։

* * *

Մինչ պատգամաւորների մեծամասնութիւնը Մայր Տաճարում քառանուն ցանկի շուրջն ընտրութիւն էր կատարում, մենք հաւաքուեցինք մեր ժողովարանը մեր նահանջը վերաքննելու, մէկ անգամ ևս իրար տեսնելու, մտքեր փոխանակելու և մեկնելուց, ցրուելուց առաջ հրաժեշտի փոխադարձ ողջոյններ տալու և առնելու։

Մեր այս խորհրդակցութեանը եկան ժողովի հրաւիրանօք Տ. Տ. Սուքիաս, Անանիա արքեպիսկոպոսները, Մայր Աթոռի լուսարարապետ Ղևոնդ եպիսկոպոսը։ Աղէքսանդր Քալանթարը մի տաք ճառով իր դէմս մեր ամենի շնորհակալութիւն յայտնեց Էջմիածնի այդ աւագագոյն անդամներին, մասնաւորապէս Սուքիաս սրբազանին, որ այդ պատմական օրը՝ մի անգամ ևս արհամարհելով իրենց անձին գալիք անախորժութիւններն ու հալածանքը արդի հոգևոր վարիչներից և ազգային մոլորութիւնից, մի պատմական ճշմարտութիւն շեշտեցին, որ դարերով հայոց եկեղեցու մէջ անշէջ կանթեղի պէս է վառուել. այսինքն՝ թէ հայ եկեղեցին կղերական չէ ու ոչ եկեղեցականը կղեր, այլ ժողովրդական միայն և ընտիր եկեղեցականը միշտ ժողովրդի հետ, ժողովրդից անբաժան։

Աղգն իր պատգամաւորների բերանով այսօր

ցնծագինս շնորհակալութիւն է յայտնում իր այդ պատկառելի որդեսէր հայրերին, որոնք պատմական նահանջի մէջ գլուխ և աւագնորդ եղան յաւէտ անմոռաց մնալու համար հայ ժողովրդի սրտում, անմեռ՝ հայոց բազմաչարչար եկեղեցու պատմութեան մէջ։

Բուռն ծափահարութիւնները, որոնց տարաւիտակ խորհրդարան ընդունուեցան սրբազանները, վերահին որոտացին ու ծածկեցին ներբողողի ճառը։

Սուքիաս արքեպիսկոպոսը ի դիմաց իր և իրեն հետ միախորհուրդ սրբազան եղբայրների շնորհակալութեան խօսք արտասանեց ազգին ի դէմս նրա ներկայացուցիչների, յորդոր կարդալով միաժամանակ հաւատարիմ մնալ ազգի և եկեղեցու վսեմագոյն շահերին, հաւատարիմ ճշմարտութեան և հայրենասիրութեան, որոնցից երբէք յետս չընկրկել, երես չդարձնել, զօրեղապէս հաւատալ թէ դրանք են, որ վտանգների, կարճաժամանակեայ տանջանքների և պարտութիւնների միջից անցկացնելով տանելու են մեզ դէպի իսկական յաղթանակը։

Տկարութեան պատճառով անկարող էր եղել մեր ժողովարան գալ Տ. Յովհաննէս արքեպիսկոպոս Շիրակունին. պարտք համարեցի առաջարկել, որ մեր որդիական շնորհակալութիւնը մատուցանւի նաև սրբազան Յովհաննէսին։ Ժողովը հաճութեամբ խնդրեց պ. պ. Յովհաննէս Սպենդիարեանին և Սամսոն Զէրքէզեանին պատգամաւորութեամբ գնալ Շիրակունի սրբազանի բնակարանը մեր գոհութիւնը մատուցանելու համար։

Այնուհետև պատգամաւորներից շատերը խօսք

բացին անմիջապէս հեռանալու արդի Էջմիածնից, ուր հայկական հիւանդութիւնը հաւաքուել, պալար է կապել։ Սակայն այդ անկարելի եղաւ. հարկ համարուեց ճնշել մի գիշեր ևս, երեկոյեան հաւաքուել, ուսումնասիրութեան խնդիր դարձնել Հայոց եկեղեցու արդի տխուր վիճակը, գալիք օրերում բռնելիք մեր դիրքը։ Եւ մենք ճնշեցինք։

Մինչև երեկոյ ազատ էինք, ելանք շրջելու վանքի բակը։ Մի նոր տեսարան. ժողովուրդը միաբանական շէնքի պատերի տակն է հաւաքուել. Տաճարում Հայոց կաթողիկոս են ընտրում. նա՝ այդ հայ ժողովուրդը, որ սովոր էր առաջներումը ժամերով քաղցած ճնշել, մեխուած ու շունչը բռնած Տաճարի դռանն սպասել թէ ե՞րբ կը բացուին դռները և ի՞նչ անուններ կը տան ներսից պատգամաւորները, այս անգամ թողել էր Տաճարը, հեռացել ու շրջապատել կանգնել էր այն շէնքը, ուր փոքրամասնութիւնը ժողով էր արել.

Տխուր էր ժողովուրդը, մտածկոտ ու մռայլ։

— Այժմ ի՞նչ էք անելու, դիմում են ինձ շատ բերաններ միասին, երբ փորձում եմ խիտ շարքերը կտրել անցնել, դէպի լիճը գնալ, Էջմիածնի լաւագոյն անկիւնը, որ նրա պարսպներիցը դուրս է, այնտեղ մատրուաների աշխարհում փոքր ինչ հանգիստ առնելու։

Չի յաջողւում. ժողովրդի շարքերը խտանում և ինձ մի նեղ մանեակով պաշարում են։

— Էլ ի՞նչ պիտի անենք, ի՞նչ կարող ենք անել. ասինք ինչ որ պարտական էինք անել։ Կարծում եմ մեզ մի բան է մնում անել. մեզ ընտրող ժողովրդին

խօսքով ու գրչով մեր արարքների և հայոց եկեղեցու արդի վիճակի վրայ տեղեկութիւն ու հաշիւ տալ։ Այնուհետև մենք ազատ ենք, մեր խիղճն հանգիստ. ազգն ինչպէս կուզէ թող հոգայ իր մասին։



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ (երդ. հաւատ.)

Պատգամաւոր Վ ռաստանի եւ Իմիրէթի

— Հա, մենք էլ հէնց այդ էինք խնդրելու. մենք վաղարշապատի և շրջակայ գիւղերի ժողովուրդներս Էջմիածնի հալը լաւ գիտենք, շատ լաւ էլ ճանաչում

ենք էն սրբազաններին, որոնցից մինը կաթողիկոս են ուզում ընտրել ու կապել մեր վզին։ Մենք այդ տեսակ կաթողիկոս չենք ճանաչի ու մեր անելիքը կանենք։ Բայց մենք ձէն չունինք, որ բղաւենք ու աշխարհի չորս կողմը ցրուած հայերին հասկացնենք թէ ինչ անիրաւութիւն են կատարում հայ ազգի գլխին։ Դուք գրչի տէր էք, պիտի գրէք, հասկացնէք։

Ես խոստացայ ու բանը չերկարացնելու համար խնդրեցի ճանապարհ տալ ինձ։ Տուին, բայց մի տաք չահիլ ականջիս հետեւեալ սպառնալիքը գարկեց կատակաբար.

— Հայր սուրբ չան, թէ որ սուս ես կացել, մին էլ յէջմիածին գաս ոչ հա՛, չանք հմի սրբազաններն են քեզ փախցնում էս տեղից, հմի էլ մենք կը փախցնենք թէ որ սուս ես կացել ու յետ եկել։ Ես հեռացայ ու ժողովուրդը նոյն ու նման հարցերով խոնուեց միւս պատգամաւորների շուրջը։

Մինչ այս, մինչ այն, Տաճարի դռները բացւում և ազգի հզօր պատգամաւորները թերթերի թղթակիցներին հաղորդում են, որ քառանուն ցանկը մտած թեկնածուներն են Դուրեան, Սուրէնեան, Մեսրոպ և Ստեփան սրբազանները։ Գլխիկոր պատգամաւորները անցնում են համրացած ժողովրդի առջևով, առաւօրէն վայելելով նրա լուռ, բայց պերճախօս արհամարհանքը։

Սկսւում է ճաշը. սեղանատան զանգը հրաւիրում է պատգամաւորներին ճաշի. ես մասամբ տակաւութեան, մասամբ էլ հոսհոսական խեղկատակութիւններից անվրդով մնալու համար, ճաշի չէի գնում։ Պատմեցին ինձ թէ այդօր յաղթական մեծամասնու-

թեան տրամադրութիւնը ճնշուած է եղել սեղանատանը. երևի մտածելիս են եղել թէ իրաւունք ունի՞ն ազգի հացն ուտելու նրանք, որ ազգի գլխին օյին են խաղում։

Սակայն այդ տրամադրութիւնը փոխելու դիտումով, ղեկավար ոյժերը ճգնել են ճառերով փայլատալ տխուր իրականութեանը և ընկերների դէմքին, լքումից հեռու պահելով նրանց. չէ՞ որ մի օր էլ կայ՝ վախճանական նպատակի օրը։

Ի միջի այլոց ճառել է Սեբաստիոյ Թորգոմ եպիսկոպոսն ու ասել. «Իզմիրլեան Հայ ազգին կամքն է, Դուրեան՝ Հայ ազգին սիրտը, իսկ Սուրէնեան սրբազան... կեցցէ Սուրէնեան սրբազան»։

Ափսո՜ս այնտեղ չէի. արժէր ասել. Ахъ ты фокусникъ! Հայ ազգը երբ է կամեցել, որ Իզմիրլեանը 300,000 հայ կոտորել տայ, Երուսաղէմի վանքի միաբանութիւնը ատոր լինտրիգներով պատակէ, մոլորուածների ոյժով կաթողիկոս դառնայ։ Ազգը երբ է ցանկացել, որ Դուրեանը Հայոց եկեղեցին միլինգների սրահ, թատրոնի բեմ, ծխարան, ծեծկռտարան, հայհոյարան դարձնի. ազգը երբ է կամեցել, որ Իզմիրլեան ու Դուրեան Ռուսաստանի հայութիւնից յանուն Տաճկաստանի որբերի հաւաքած 22,000 րուբլին բաժանեն թայֆայական տղաներին, թէ գնացէք մէկիս կաթողիկոս ընտրեցէք, միւսս՝ պատրիարք։ Ахъ ты фокусникъ!...

«Իզմիրլեան ազգի կամքն է, Դուրեան՝ ազգի սիրտ», իսկ Սուրէնեան սրբազանի համար էլ մի խօսք չունի որ դնէ, միայն կէցցէն է կպցնում։ Ճարմենայն դէպս Սուրէնեանը, որ ազգի ո՛չ կամքն է, ո՛չ

սիրտը, ոչ միտքը, ձեր գովական Իզմիրլեանից ու Դուբեանից բարձր է, խաբեբաներ, նա գոնէ ոչ ապգ է չարդել տուել և ոչ որբերին է կողոպտել։

*
* *

Վերջին երեկոն է, վերջին դիշերը, որ պիտի անցկացնենք Իզմիածնում։ Հաւաքուեցանք հայ եկեղեցու իրականութիւնը և մեր բռնելիք դիրքը պարզելու մեզ համար և մեզ ընտրող ժողովրդի համար։ Իւրաքանչիւր ոք պէս-պէս խնդիրներ դրաւ ժողովի առաջ, որոնց շուրջը խորհրդածութիւններ եղան։ Զոր օրինակ՝ մենք և մեզ ընտրող ժողովուրդը, գլխաւորապէս ինչպէս պիտի վերաբերուենք այն կաթողիկոսին, որ ոչ միայն մեր ընտրածը չէ, այլ նոյնիսկ հակառակ հայ ժողովրդի ցանկութիւններին. ինչ բարոյական, տնտեսական, մասնաւոր վիճակի մէջ են այժմ մեր վարժարանները, վանքերը, կալուածները, թեմական ու վոխանորդական հաստատութիւնները և վերջապէս ինքը Էջմիածինը։ Էջմիածինը՝ որպէս դեկավար ազգի, ինչ ֆիզիոնոմիա ունի։ Ի՞նչ է պահանջում, ակնկալում ազգը արդի կաթողիկոսից և ինչ կարող է անել մի կաթողիկոս, որ ինքնուրոյնաբար գործ ըմբռնելու և բարեկարգելու կարողութեան մէջ տակաւին լինի։ Եւ այլն։

Այս խնդիրների շուրջը երկար ու ձիգ խորհրդածութիւններ, կարծիքների փոխանակութիւն, շփումն ու բաղխումն եղան. գրեթէ ամենքը մինչև ուշ դիշեր իրենց մտքերն ու հայեացքներն էին պարզում զանազան տեսակէտներով։ Գլխաւորապէս ճառում էին և իրերի դրութիւնը լուսաբանում Տ. Տ. Կարապետ և Բաբգէն եպիսկոպոսները, Պ. Պ. Յովհաննէս Սպեն-

դիարեան, Աղէքսանդր Քալանթար, Հրանտ վարդապետ, Սամսոն Չէրքէզեան, Գարեգին Ենգիբարեան, Խաչատուր Աֆրիկեան, Տ. Եղիշէ Դեղամեան, Տիգրան Գոյումճեան, Գէորգ Զուբար։ Այդ երեկոյ մեր ժողովին էր եկել նաև Եգիպտոսի պատգամաւոր Վահան



ՍԱՄՍՈՆ ՉԷՐՔԷԶԵԱՆ (ազնուական)
Պատգամաւոր Կարաբաղի

Թէքէեանը, որ նոյն հարցերով հետաքրքրուում էր և խնդիրներ արծարծում դրութիւնը ըմբռնելու համար։

Մէկ մէկ յառաջ բերելն այդ բոլոր ճառերն ու լուսաբանութիւնները իմ ծրագրից դուրս է և մանաւանդ իրենց մանրամասնութեամբ չեմ կարող յիշել։ Միայն այս կարող եմ ասել թէ քննադատութեանց և յայտնագործութիւնների պատկերն ու

եղբակացութիւնը շատ տխուր և յոյժ ցաւալի էր հայոց եկեղեցւոյ համար, որին վտանգից ազատել կարող են միայն կաթողիկոսի լուսաւոր միտքը, քրիստոնէական սիրտը, հայրենասիրութեան ոգին և համապատշաճ կամքը, որոնց միայն օգնութեան կարող է գալ ազգը իր ազգային խարխուլ տունը վերանորոգելու յուսով։

Հետաքրքիր շեշտերով կանգ առան մի երկու խնդրի վրայ մի եկեղեցական անձն, որի անունը տալ դժուարանում եմ, խեղճին հալածողների ճանգը չձգելու համար և Յովհաննէս Սպենդիարեանը։ Ես կաշխատեմ այդ երկու ճառախօսների մտքերն ամփոփել այստեղ, յառաջ բերելով և իմ առարկութիւնները այդ յարգական անձերին։

Ահա այդ մաքուր եկեղեցականի խօսքը, ուր փայլում են արդար զայրոյթը, որամաբանութիւնը և միաժամանակ անփորձութիւնը։

«Խնդիր դրուեցաւ թէ ինչ դիրք պիտի բռնենք մենք և զմեզ ընտրող ժողովուրդը մեզմէ ոչ ընտրեալ կաթողիկոսի մը հանդէպ. ըստ իս պարզ տրամաբանական մտածողութեամբ մը խնդիրն ինքնըստինքեան դիւրաւ կը լուծուի. գլխաւորապէս Ռուսաստանի հայութիւնը, որի համար է էապէս Մայր Աթոռի կաթողիկոսը, ենթադրելի կաթողիկոսացուներին անարժան է նկատած. հետևաբար ընտրուելէն ետքը, հակառակ այդ ժողովրդի ցանկութեան և ապօրինաբար ընտրեալը չի կրնար նոյն ժողովրդի կողմէն օրինաւոր կաթողիկոս ճանչցուիլ։ Ապօրինաբար ընտրուած կաթողիկոսի մը օրինաւոր ճանաչել ընտրուելէն ետքը կը նշանակէ քաջալերել և ապագային ոտնձգութիւններն ու անարժանութիւնները Մայր

Աթոռը կործանելու համար. կարելի չէ յարգական հիւր ընդունել տանդ մէջ անձ մը, որ կամքիդ հակառակ, բռնութեամբ մտեր է տունդ, այլապէս միշտ անարժան և բռնաւոր հիւրեր կունենաս, որոնք տուն նդ թալանի պիտի տան։ Կարճ խօսքով ըսեմ, այդպիսի կաթողիկոսը մեզ հեռացողներուս և մեր ժողովուրդին համար ընդունելի ըլլալ չի կրնար»։

Ժողովի մեծ մասը միայն լռութեամբ պատասխանեց այդ պատճաբանութեանը, սիրելով հանդերձ ճառողին. եղան էլ, որ առարկեցին և հակառակ կարծիք յայտնեցին։

Ահա և իմ կարծիքը իր ամփոփման մէջ. «Ապօրինի ժողովի դէմ, ազգի իրաւունքների բռնաբարութեան դէմ բուռն բողոք յայտնել, նոյնիսկ ընտրական ժողովը թողնել հեռանալ մեր խիղճը՝ խղճահարութիւնից, մեր անունը չեմնորդների, գալիք օրերի և պատմութեան դատապարտութիւնից զերծ պահելու համար, մեր իրաւունքն էր և պարտիք։ Սակայն ընտրութիւնից յետոյ, ով էլ լինի ընտրեալը, մենք պարտք պիտի համարենք ընդունել և ճանաչել հայոց ընդհանրական կաթողիկոս, որովհետև այդ պարտքը դնում է մեզ վրայ եկեղեցւոյ և ազգի բարձրագոյն և հեռաւոր բարիքը, շահը. եթէ այդպիսի ընտրեալը չարիք իսկ լինի, այդ չարիքը պիտի տանենք համբերութեամբ, առաւել մեծ չարիքի մէջ չընկնելու համար։ Մենք կը պահպանենք մեր մի բարոյական իրաւունքը, որև սրբազան պարտք է, արդարամիտ քննադատութիւն խօսքով ու գրչով, որոնք պիտի շօշափեն հայրապետի ազնիւ գործերը ի քաջալերութիւն հայրապետին և ի հաշտութիւն գահակալի ու ժողովրդի

և տգեղ, ազգաշինաս գործերը, որոնք պիտի սանձուին ժողովրդով»։

Էջմիածնի կալուածական-տնտեսական խղճալի վիճակի վրայ ծանրացան խորհողները և այդ կործանարար կացութեանը վերջ դնելու միջոցներ առաջարկուեցան։



ԳԷՈՐԳ ՉՈՒԽՍՐ (երդ. հաւատ.)
Պատգամաւոր Բեսսարաբիայի

Մանաւորապէս կանգ առաւ այդ խնդրի վրայ Տփխիսի պատգամաւոր Յովհաննէս Սպենդիարեանը սրտացաւ շեշտերով և անկման էական պատճառը գործունէութեան սխեմի—եղանակի պակասութեան մէջը նկատեց։

Ես կաշխատեմ այդ խոհական ճառողի խօսքն ամփոփել այստեղ։

«Որքան բարձր լինի մտաւոր և վարչական կարողութեամբ հայոց եկեղեցու հայրապետը, այնքան աւելի կը բարգաւաճեն մեր ազգային եկեղեցական հաստատութիւնները, որոնց ներկայ ողբալի վիճակը մեր առաջ դրւած է իբրև անցեալ սխալանքների դառն իրականութիւն։

Հայոց եղեցին հարուստ է իր անշարժ արդիւնաւէտ կալուածներով, բայց ի՞նչ օգուտ. նրա հաստատութիւնները հազիւ քարշ են տալիս իրենց գոյութիւնը, չկարողանալով սահմանուած տարեկան ողորմելի բիւդջէտը անգամ լրացնել։

Ի՞նչ է պատճառը։

Տնտեսական կառավարութեան մէջ չկայ որևէ սիստեմ և շահագործման նպատակայարմար եղանակ. չկայ տէր, այն, ինչոր ռուսը ասում է добрый хозяинъ, այդ պատճառով էլ եկեղեցապատկան կալուածների տուած արդիւնքը շատ չնչին, որով էջմիածինը իր կառավարութեան և պետական հարկերի ծախսն անգամ չէ կարողանում ծածկել։

Դանձասարի, Մարցի, Հաղարծնի, Խօրաւանքի և այլ էջմիածնապատկան կալուածների անտառները և հողերը տասնեակ հազար դեսեատին տարածութիւն ունին, որոնք Գերմանիայում կամ Ֆրանսիայում մի վոքը, բայց հարուստ իշխանութեան համբաւ կը վաստակէին. բայց մեզանում այդ եկեղեցական հաստատութիւնները թողնուած են անխնամ, ճակատագրի կամքի անօրէնութեանը։ Չէք հաւատալ, եթէ ասեմ,

որ այդ կալուածներից մի քանիսը, ինչպէս յիշեցի, պետական հարկի ծախսն անգամ չեն կարող հայթայթել և այդ հարկերը տարէցտարի իրար վրայ դիզուելով այժմ մի պատկառելի գումար են կազմում, որ իբրև պարտք ծանրացած է հայոց եկեղեցու բիւդջէտի վրայ։

Որքան մեզ յայտնի է, այդ կալուածներից մի երկուսը պետական գանձարանը որոշել է աճուրդի հանել և վաճառել պետական հարկը ստանալու համար։

Պէտք է այցելել և տեսնել այդ վանքերը ու նրանց հարստութիւնները համոզուելու համար թէ ինչ յանցաւոր անհոգութիւն է ցոյց տալիս էջմիածինը նրանց կառավարելու և շահագործելու մէջ։ Կան հարուստ վանքեր, որոնք իջևանելու տեղ անգամ չունին և եկուորը կամ ուխտաւորը բաց երկնքի տակ է մնում, ինչպէս Հաղարծինում. և կան վանքեր՝ ուր թէև մի ողորմելի հիւրատուն կայ, բայց այնտեղ այնպիսի սատակելական ապականութիւն է տիրում, որ մի օր մնալը անգամ անհնարին է, ինչպէս Սևանի յայտնի մենաստանում։

Մի քանի տարի առաջ Թիֆլիզում հայ մասնագէտ դիւղատնտեսներից և իրաւաբաններից կազմուած մասնաժողովը Սինոդի անդամ Բաբգէն վարդապետի նախագահութեամբ՝ քննութեան առնելով եկեղեցական կալուածների ներկայ անկերպարան և ողբալի վիճակը՝ ներկայացրեց Սինոդին զրաւոր զեկուցում, թէ ինչ պէտք է անել, որպէսզի հայ եկեղեցական կալուածները լինին արդիւնաւէտ և շահաւէտ, բայց այդ զեկուցումը մնաց ձայն բարբառոյ յանապատի։

Եկեղեցական կալուածների արդիւնաւէտ շահագործութիւնը կարող էր ոչ միայն նիւթապէս ապահովել մեր կրթական հաստատութիւնների վիճակը, այլև բազմացնել նրանց թիւը։ Իւրաքանչիւրիս յայտնի է, թէ ինչ դրութեան մէջ է գտնւում գիւղական դպրոցը մեր հայաշատ գաւառներում.



ԹԱԴԷՈՍ ՉԱՔԱՐԵԱՆ (բժշկապետ)
Պատգամաւոր Շամախու

Կան հարիւրաւոր գիւղեր, որոնք չունին ոչ մի դպրոց և ժողովուրդը խաւարի մէջ է խարխափում մեր լուսաւոր XX դարում։ Կրթուած և լուսաւորուած եւրոպացու համար դրանք ապշեցուցիչ վիճակներ են։ Իսկ հայ եկեղեցին ունի անհուն հարստութիւն, միայն կարգ ու սիստեմ չկայ, որով կարելի

լիներ կենդանացնել եկեղեցու մեռած սոացուածքը և ծառայեցնել այն ազգի կրթիչ պէտքերին։

Բայց ո՛վ կարող է ըմբռնել և իրագործել այդ կարևոր ծրագիրը, որից կախուած է հայ ժողովրդի մտաւոր բարգաւաճումը և առաջադիմութիւնը եթէ ոչ գլխով եւ եռանդով կարող հայրապետը իր ողջամիտ և գործունեայ խորհրդականներով։

Կունենա՞յ արդեօք մի օր Էջմիածինը այդպիսի հայրապետ»։


Այս ճառով պատկերաւորուած տխուր ու ճշդրիտ նկարագրի առաջ ունկնդիրներից շատերի դէմքերը ներքին վշտից թոռմած կախուեցան։

* * *

Ժողովի նախագահի թոյլտուութեամբ խօսքի հերթը ինձ էր։ Շատ անգամ եմ սրտի կակիծով կամեցել ի լուր՝ մասամբ թմրած, մասամբ միակողմանի, մասամբ անտարբեր հայ ժողովրդին այդ խօսքը բարձրաձայն ասել, կանչել ու անկարող եմ եղել։ Այժմ առիթը կար. Ծովհաննէս Սպենդիարեանի ճառը ինձ համար մի կոչ էր, որ ես պարտքս կատարեմ, որ մատնացոյց անեմ այն վէրքը, որ թաղնուել է միշտ հիւանդ եկեղեցու բուժման շուրջը խորհուրդները կազմող ազգայինների աչքից։

«Պարոններ. մի քանի անգամ վերջին երկու կաթողիկոսների օրով, ընտրութեանց, օծման, թաղումների առիթով ազգը ներկայացնող պատգամաւորները էջմիածնում ժողովներ են կազմել, խելք-խելքի են տուել՝ թէ ինչպէս բարեկարգեն այն եկեղեցին, որ ըստ ամենայնի անբարեկարգ վիճակի մէջն է ընկած։ Խորհրդակցութիւնների արդիւնքը արձանագրւում էր

ամեն անգամ և իբրև դիմումն, առաջարկութիւն, խնդիր՝ պահանջի շեշտով ներկայացւում էր կաթողիկոսին։ Բարեկարգութեանց ծրագիրը ամփոփում էր կալուածական, դպրոցական, շինարարական և մասամբ



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ (խմբագիր)
Պատգամաւոր Տիգրանակերտի

դիւանագիտական խնդիրներ։ Ի դէպ. եկեղեցու անբարեկարգ վիճակը, անկումը իբրև իրողութիւն ընդունող պատգամաւորները լռելեայն ընդունում էին, որ այդ կաթողիկոսները եկեղեցու դրութիւնը ոչ

պարզապէս հասկանում և ըմբռնում էին և ոչ շնորհք ու կարողութիւն ունէին հաստատութեանը դարման անել։ Եւ ահա ազգը յանձին իր պատգամաւորների (որոնց ուղարկել էր ընտրելու կամ թաղելու համար միայն) պարտք է համարում իբրև խորհրդական մարմին բարեկարգութեան ծրագիրներ տալ կաթողիկոսներին։ Այս լռելյայն խոստովանութեամբ հանդերձ սկսում էին գովել, ներբողել, մամուլով երկինք ու երկիրը դղրդացնել, թէ աննման է մեր կաթողիկոսը. իսկ երբ մեռնում էին կաթողիկոսները անարտասուք լացն ու շիւանը աշխարհ էր բռնում թէ անօրինակ աննման կաթողիկոս կորցրինք։ Իսկ յետոյ... յետոյ նրանց թողած աւերակների վրայ մի լուրջ հայեացք փռելիս, լռում, մոռացութեան տալիս ամեն ինչ կամ նոյնիսկ սկսում վատաբանել սակաւ առ սակաւ։

Պատգամաւորների մատուցած ծրագրերը մնում էին վեհարանի փոշու մէջ, կամ կաթողիկոսի դօշակի տակ որպէս մեռեալ տառեր, որ յարութիւն չունին, իսկ կաթողիկոսները մի բարոյական հիւանդութեամբ, լոկ որոտունջներով խուսափում էին ազգի և պատգամաւորների առաջ յանձն առած պատասխանատուութիւնից բամբասելով էջմիածնի միաբանութեանը, որոնք իբր թէ ոչէտ, խաւար մարդիկ են. ուստի հայրապետները մարդիկ չունին գործի գլուխ դնելու համար, այդ պատճառով գործ չի լինում։ Մինչդեռ հէնց այդ կաթողիկոսները իրենք ոչէտ մարդիկ էին, անկարող եկեղեցի կառավարելու, իրենց շուրջը անհանգիստ ձաբար խմբելու բաւականաչափ լուսամիտ կրօնաւորներին և ասպարէզի վրայ դնելու։ Ընդհակառակն նրանք պէս-պէս գէշ միջոցներով, գէշ հա-

շիւներով պառակտեցին էջմիածնի կրօնաւորների միացած սակաւ միաբանութիւնը, կարող միաբաններին միջնադարեան տգեղ հալածանքով ցաք ու ցրիւ արին, վախցրին, զգուշեցնելով կարգաթող անել տուին և միացին իրենք էջմիածնի խաւարի մէջ նըստած, որ դրսի մոլորութիւնների ամպերով էլ աւելի էր թանձրանում։

Այս տխուր վիճակը, այսինքն եկեղեցու կրօնաւորութեան օրաւուր մեռնելը, նուազելը, անկումը, զարմանալի կերպով վրիպում էր պատգամաւորների աչքից։

Այսօր էլ կարծես նոյնն եմ տեսնում. մինչդեռ իմ խորին համոզմունքով հայոց եկեղեցին այժմ միայն մի բարեկարգութեան է կարօտ. պէտք է ժամանակի ոգու համեմատ ժողովրդավարական թափով և քրիստոնէական կրօնի ոգևորութեամբ լի կրօնաւորական մի միախորհուրդ բանակ կազմել և ասպարէզ հանել։

Հայոց եկեղեցին այժմ հունձ ունի. դուք խոստում էք, որ սրտը կծդել է, թափւում է, բայց մոռանում էք, որ մշակ չունիք։ Դուք պատերազմ ունիք ձեր առջև, ճակատամարտի դաշտի դիրքերն էք որոշում, կռուի ծրագիր էք տալիս հեռուից ու մոռանում էք, որ դուք կռուող զինուոր չունիք։ Դուք ուզում էք ձեր ամրութիւնը պահպանել գիշերուայ յարձակումներից ու մոռանում էք, որ պարիսպների վրայ ու դարպասների առջև դնելու զինեալ պահապաններ չունիք։ Եղածները մեծ մասով անզէն, ապիկար, կուսակցական գինիով հարբած, վարձկաններ են, որոնք շատ անգամ աչք ու ունքով են խո-

սում ձեր ամրութեան թշնամիների հետ։

Եւ քանի դուք մի համր եկեղեցի ունիք ու այսպիսի հոգևորականութիւն, որպիսին մենք ենք, ձեր ծրագրերը, խորհուրդները կը մնան իբրև մեռնող ձայն անապատում, որ արձագանք չունի։



ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ (խմբագիր)
Պատգամաւոր Էջմիածնի եւ Կասպից ազգաբնակչաց

Այսքանից յետոյ, ես դառնում եմ շատ յարգելի պ. Յովհաննէս Սպենդիարեանի ճառին։

Միանգամայն ճշմարիտ է տնտեսական այն նկատողութիւնը, որ մեր առջև բաց արաւ պ. Սպենդիարեանը։ Էջմիածնի կալուածական փոքրիկ թագաւորութիւնը մի լեշ է, որի վրայ անգղներն են հաւաքուել։ Այդ դրութեան պատճառը յարգելի լուսաբանողը սիստեմի պակասութիւնն է համարում։ Անտարակոյս սիստեմը ամենայն կազմակերպուած գործունէութեան շարժիչ ոյժն է, շոքին է, որ բարդ մեքենան իսկ կանոնաւոր, նպատակայարմար ու ներդաշնակ շարժողութեան մէջ է դնում։ Բայց ինչ կարող է օգնել շոքին՝ եթէ մեքենաները ծռմռուած, կոտրտուած, իրարից մեկուսացած ու ժանգոտ կտորների մի կոյտ են ներկայացնում։

Ինչ կարող է անել սիստեմը տգէտ, անջիգեար, կուսակցական, շողոքորթ, խաբեբայ անձերի աշխարհում։

Էջմիածնի կալուածական դրութիւնը ես լաւ գիտեմ, գիտեմ մասնագէտի նման։ Այն էլ գիտեմ, որ այդ կալուածները, եկամուտները կառավարելու համար բաւական լաւ սիստեմ կայ, կանոններ ու օրէնք, պետ. օրէնք։ Բայց ոյք են այդ օրէնքների, այդ սիստեմի վրայ հսկողները. գողերը, մեծ մասով գողերը։

Ահա ձեզ մի իշխանաւոր, մի սրբազան անձն, որ օրինական սիստեմի վրայ հսկողն է և հէնց ինքն էլ կալուածների կառավարիչ։ Օրէնքի բարձր առեաղը տալիս է նրան պաշտօնական ժապաւէնեալ մատեան, ուր ամենայն ճշտութեամբ պիտի արձանագրուի ելքն ու մուտքը։ Կալուածքի թ. 8 տունը վարձու տրուած է տարեկան 1200 րուբլիով։ Մուտքի մէջ գրւում է՝ թ. 8 տնից ստացուեց 600 րուբլի

միայն, որովհետև 6 ամիս անբնակ էր, վարձող չուներնալու պատճառով։ Մինչդեռ 6 րոպէ անբնակ չի եղել. վարձող հրէան ամենայն սիրով պատրաստ է վկայել, թէ յիրաւի 6 ամսուայ վարձ է վճարել այն կրկնակի շահով, որ 1500 րուբլիանոց տունը նա վարձում է 1200-ով և երկրորդ, որ գաղուած 600 րուբլուց էլ մի 50 րուբլու ընծայ կը ստանայ, որպէս բարեկամական առհաւատչեայ։

Ահա ձեզ մի ծախքի հաշիւ. կալուածքի շէնքերից մինը մի 2000 րուբլիով կարկանուում է, բայց օրէնքի ներկայացուցիչը, գործադրող սուրբ անձը պատրաստ է գրել՝ շինեցաւ ի կալուածի տուն նոր և ծախք եղեն 18,000 րուբլի։

Ահա ձեզ դիցուք վանքի ագարակի կառավարիչ մի վարդապետ։ Թերթեցէք ժապաւինեալ մատեանը և դուք կը տեսնէք այսպիսի մարգարիտներ ելքի բաժնում. «խոչկոր մի գայլք կերին», «գառ մի շունք կերին», «Չենեցինք երինջ մի և քանզի ճարպն ի փորին հոտեալ էր, ուստի արկինք շանց» և այլն. փորձեցէք գաղտնիքն իմանալ, գնացէք մի օր ճաշի հայր սուրբի մօտ, լաւ կոնծել տուէք ու խօսեցրէք և նա ձեզ կը բացատրի թէ ոյք են այդ «շունք» այդ «գայլք», որ կերել են այդքան խոզ ու խոչկոր։

Ահա ձեզ մի անտառապահ. յանդուգնի մէկը համարձակուել է գողութիւնը, անբարեխղճութիւնը մերկացնել։ Գողը վազում է կեդրոնը, քննիչ է գալիս, օրէնքի և սիստեմի ներկայացուցիչը, և ինչ էք կարծում ինչ է լինում. գողը պաշտպանուում է, յանդուգն մեղադրողը որպէս զրպարտիչ մեղադրուում, բայց առանց պատժի մնում։ Եւ այլն և այլն և այլն,

անվերջ, անչափ, անսահման։

Արդ, ո՞ր կատարեալ սիստեմը կարող է օգնել այն հաստատութեանը, որ անբարեխիղճ, անօրէն մարդկանց ձեռքն է ընկել։

Ուրեմն փրկութեան համար մէկ ճանապարհ կայ. հաւատ, պատուասիրութիւն, ժողովրդասիրութիւն



ԱՐՏԱՇԷՍ ՇԻՇՄԱՆ (բժշ.)

Պատգամաւոր Աւդենի եւ Պալուի

ունեցող փոքր ի շատէ բարեխիղճ անձեր պիտի հրաւիրել, պատրաստել և հոգևոր կոչումն տալ ու գործի վրայ դնել։ Ուրիշ խօսքով հոգևորականութիւն պատ-

բաստել, եղած լաւերը խմբելով, նոր լաւերը բերելով, անպիտաններին սանձելով։

Այլապէս գողութեան և անբարեխղճութեան սիստեմը կը սպանէ ամեն ընտիր սիստեմ, Էջմիածնի խաբեբան կը գայ Թիֆլիս կալուածներ բարեկարգելու վրայ խորհրդակցութիւն անելու և կերթայ Էջմիածին ապացուցուած հզօր գողին պաշտպանելու ու մոքումը ազգի վրայ ծիծաղելու և այսպէս անվերջ։

Իսկ ազգը. ազգը... ազգը... ազգն էլ հէնց դրանցից է գոհ, շողոքորթող գողերից ու անտարբեր դէպի իր եկեղեցու շահն ու նրա հալածական պաշտպանները։

Իսկ պատգամաւորները... ծրագիր են կազմում քցում վեհարան, որ մէկէլ կաթողիկոսի թաղմանը գան, նոր ծրագիր կազմելու համար»։

Ահա այս էր իմ խօսքը մօտաւոր, որի վրայ մի քանի օրինակ աւելացրի որ ընթերցող ազգը իրազեկ լինի դրութեանը և ուշքի գալով իր գլխին գալիքը, իր եկեղեցու վիճակն իմանայ ու դարման տանի, եթէ միայն, այդ ազգը ուշքի գալ կարող է։

Ժամի 2-ն էր մեր նախագահն սկսել էր նիրհել ու յիշեցնել մեզ էլ թէ քնելու ժամանակն է և մենք վերջին գիշեր քնեցինք Ս. Էջմիածնի հովանու ներքոյ։

* * *

Առաւօտն է, կաթողիկոսական ընտրութեան առաւօտը։ Մեծամասնութիւնը կաթողիկոս ընտրելու համար Մայր Տաճար պիտի մտնի. իսկ մենք պատրաստ էնք ճանապարհ ընկնելու, ցրուելու, ժամ առ

ռաջ հեռանալու Էջմիածնից, ուր կուտակուած անիրաւութեան երեսից այնքան սրտմաշ օրեր ու գիշերներ անցուցինք։ Մեզ էլ չէր հետաքրքրում այն ընտրութիւնը, այն ընտրեալ անձնաւորութիւնը, որի շուրջը անարդարութիւնը, բռնութիւնն էր ծով կապել։ Անսուրբ խորհուրդներով, կուսակցական ոգով ընտրեալը կարող է կաթողիկոս լինել, բայց սրբազան անձնաւորութիւն չէ, Աստուծոյ եւ ազգի ընտրեալը չէ, ուստի և ընտրութիւնն էլ մեզ չէր հետաքրքրում։

Մեզնից ոմանք մեկնեցին դէպի Երևան, ոմանք դէպի Էջմիածնի կայարանը։

Կառք նստանք բժ. պ. Արտաշէս Շխեանի հետ և Երևանի ճանապարհը բռնեցինք. վաղարշապատից դուրս գալուց առաջ իջանք մեր բարեկամներից մէկին մնաք բարով ասելու, յետոյ իջանք Ս. Հռիփսիմէի վանքը, ուր եկան մեր ընկերներից Տիրայր, Հրանտ վարդապետները, պ.պ. Սպենդիարեան ու Չէրքէզեան, վանահօր՝ պատուական Գարեգին վարդապետի հիւրասիրութիւնը վայելեցինք, մտանք վանք, ուխտ արինք ու աղօթեցինք, Ս. կոյսերին նուիրած «Անձինք նուիրեալք» անոյշ շարականը երգեցինք անցած դարերի վերյուշերով, ներկայի տխուր շեշտերով, գալիք օրերի առկայծող յոյսերով ու ճանապարհ ընկանք։

Մինչև երկաթուղու գնացքի մեկնելը մէկ ժամից աւելի ժամանակ ունէինք։ Ուստի իջանք Երևանի անմաքուր հրապարակը ճանապարհի համար մանր-մունր բաներ գնելու։

Խանութներում մեզ հանդիպող ծանօթ ու ան-

ծանօթ հայեր, որոնց արդէն յայտնի էր մեր մեկուսանալն ընտրութիւնից, յայտնում էին մեզ իրենց անկեղծ գոհունակութիւնը, իրենց երախտագիտութիւնը, իրենց համակրանքը։

Մեկնում ենք դէպի կայարան. այնտեղ նոյն հա-



ՍԱՐՇԱԿ ԲԱԲԵԱՆ (ճարտարապետ)
Պատգամաւոր Սեբաստիոյ

մակրանքը, շնորհակալութիւնը ճանապարհորդ հայերի կողմից, գնացքի մէջ նոյն բանը, Ալէքսանդրապոլի կայարանում նոյնը։ Այս հանդիպումները մեզ բացարձակապէս համոզեցին թէ մենք ժողովրդի հետն ենք եղել, ժողովուրդը մեր ապրումներով է ապրել այդ օրերը և այդ բուն ժողովուրդն է, հրապարակի վրայ անբարբառ, զոռող դոչող խմբակներից հեռու մեծ ժողովուրդը։

Երևանի կայարանում մենք գտանք մեր ընկերներից պ.պ. ճարտարապետ Բաբեանին և Դուլումճեանին. Էջմիածնի կայարանում հանդիպեցինք պ. պ. Քալանթարին և Առաքելեանին և խոհերով, խորհրդակցելով, քննադատելով ու նորութիւններ ասելով, ճանապարհ ընկանք դէպի Թիֆլիս։

Մեր ընկերները մեզ հետևեալ նորութիւնները պատմեցին. կաթողիկոսացու էր ընտրուել Տեղակալ Տ. Գէորգ Արքազան Սուրէնեանը 58 ձայնով, կանդիտատ Դուրեան արքեպիսկոպոսը 57 ձայնով։ Պարզ էր, որ կաթողիկոսը ընտրուել էր բոլոր պատգամաւորների կիսից պակաս ձայներով, ուրեմն և ընտրութիւնը օրինաւոր համարուել չէր կարող և ընտրական ընդհանուր օրինաց տեսակէտից։

Լսեցինք նաև հետևեալ սխրագործութիւնները, որ պատուական մեծամասնութեան նկարագիրն է լրացնում։

Կաթողիկոսի ընտրութեան գիշերը պատգամաւորները ժողով են կազմում, թուով 91 հոգի կարծեմ, իրաւախոհ լինում, վճռում միաձայն Դուրեան արքազանին ընտրել որպէս առաջին թեկնածու բոլոր ներկայ ձայներով, իսկ Սուրէնեան արքազանին և Մեսրոպ եպիսկոպոսին տալ 60-ական ձայն։ Եւ որովհետև փոխադարձ վստահութիւնն իրար վրայ պակաս են եղել, ազնիւ խօսքը քիչ է համարուել հաւատներշնչելու համար, ուստի վճիռն արձանագրել են և... և մինչև իսկ Աւետարանն են բերել ու ուխտել, որ հաւատարիմ մնան իրենց խօսքին։

«Սուտ խոստովանութեան՝ սուտ թողութիւն, սուտ ուխտին՝ սուտ մուրազ»։

Ընտրութեան ժամանակ մեր «ուխտեալները» Մայր Տաճարի մէջ առանց այլևայլութեան փոխադարձ ուխտադրժութեամբ և խաբեբայութեամբ են պատկում իրենց ուխտը. «Այս վասակ եպիտ զայն վասակ»։ Սուրբէնեան սրբազանի կողմնակիցները Դուրեանին սև քէ են տալիս, որպէսզի նա աւելի պակաս քուէ ստանայ քան Սուրբէնեանինը, իսկ Դուրեանի կուսակիցների մի



ՅԱՋԱՏՈՒՐ ԱՖՐԻԿԵԱՆ (իրաւաբան, մեծ վաճառական)
Պատգամաւոր Բայազէտի

մասը Սուրբէնեանին սպիտակ քուէ են տալիս, կարծելով թէ Դուրեանը բոլոր սպիտակ քուէները պիտի շահի։ Մեսրոպ եպիսկոպոսի կուսակիցները սև են տալիս և Սուրբէնեանին և Դուրեանին ու սպիտակ տալիս միայն Մեսրոպին այն հաշուով, թէ առաջինների

կուսակիցները իրենց խոստման հիմամբ կը խաբուին, Մեսրոպին սպիտակ քուէ կտան և նա կը լինի առաջին կամ երկրորդ ընտրեալը։

Այս պատմութիւնը լսելիս միտքս եկաւ հետևեալ դէպքը. տարիներ առաջ ինձ պատմել են այսպիսի մի բան.

Փարիզի մեծ ցուցահանդէսի ժամանակ Ռուսիոյ գաղտնի ոստիկանութիւնը գրում է գաղտնաբար բոլոր եկամ Ֆրանսիայի ոստիկանութեանը թէ՝ Ռուսաստանում յայտնի Ռոստովի գրպանահատ-լօթիք մի մեծ խմբով գնում են Փարիզ աշխատանք անելու, հետևաբար զգուշանալու է։ Ֆրանսիայում էլ Լիօնի լօթիքն են յայտնի։ Վերջիններս ռոստովցիների գալն իմանալով, կազմակերպւում են և մրցման մտնում նրանց հետ և սկսւում է ճարտարամիտ խաբեբայութիւնների, արկածների մի շարք երկու երկրի լօթիների մէջ։ Վերջը լիօնցիների ձեռքից ռոստովցիք փախչում են և ֆրանսիական ոստիկանութիւնը հաղորդում է մեր ոստիկանութեանը թէ. «մեր լիօնցիք յաղթեցին ձեր ռոստովցիներին»։

Ձիշտ նոյն պատկերը, նոյն եղանակը։ Լ.Ջմիածնի իւրատեսակի ցուցահանդէսում, կաթողիկոսական նախավերջին ընտրութեանը Տաճկաստանից եկած պատգամաւորների մեծ մասը, որոնց մէջ հեռուից յարգուողներ էլ կային, Լ.Ջմիածնում աչքի ընկան իրենց խաբեբայութեամբ։ Լ.Ջմիածնեցիք այս բանը չէին մոռացել այս անգամ և վերջին մրցման մէջ մեր լիօնցիք փառաւոր կերպով յաղթեցին արևմուտքի ռոստովցիներին։

Եւ այդ մրցման մէջ կոխկրտեցին հայոց սուր-

բերն ու քաջերը և՛ պատգամաւորի կոչումը, և՛ խիղճը և՛ այն Աւետարանը, որի վրայ ուխտեցին, ուր յուդայական համբոյր դրոշմեցին։

Պարզուեցաւ ինձ համար թէ ինչո՛ւ այնքան վըրդովուեցան ազգի ներկայացուցիչները, երբ ես միա-



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ (Բանաստեղծ)
Պատգամաւոր Բրուսայի

մտաբար իմ խօսքի մէջ դիմեցի նրանց ասելով. «Աղնի՛ւ եղէք»։ Շնորհաւորո՛ւմ եմ այժմ։

Ի՞նչ կասի այժմ այն «աղնիւ» վարդապետը, որ լիմնցու պէս հայհոյեց ինձ. որ Թիֆլիզի խմբագրատներից մինում Օրմանեանին գովելու համար իր աղքատ լեզուի պաշարն սպառեց, որ պատրաստ էր

«դասախօսութիւն կարդալ Օրմանեանի համար», Էջմիածին զալով Սուրէնեան սրբազանին հաւատացնում էր թէ նա է իր միակ ընտրելին, որպէսզի ընտրութեանը Սուրէնեանին էլ սև քուէ տայ և Մեսրոպի համար ձգնի։ Օ՛, երանի ձեզ, Սիօնի քաջեր, Լիօնի հերոսները ձեր առջև գաճաճներ են, բան չեն։

Եւ ահա ազգը մի չարաբաստիկ օր էլ վարագուրած աչքերով սրանցից պիտի ընտրէ իրեն համար կաթողիկոսացու...

* *
*

Ես վերջացրի խօսքս, զեկուցումս, իրերի և վիճակի ճշգրիտ նկարագրութիւնը, որ պնում եմ ընդհանրապէս իր եկեղեցու, իր ինքնուրոյն կեանքի համար սրտացաւ հայերու, և մանաւորապէս այն թեմի ժողովրդի առաջ, որի պատգամաւորն էի ես։

Այժմ ամփոփում եմ խօսքս։

Հայոց եկեղեցու վիճակն ընդհանրապէս, Մայր Աթոռինը մասնաւորապէս, աւաղելի է։ Կիսակործան կրօնական ազգային հաստատութիւնը վախճանական կործանումից ազատելու համար անհրաժեշտ էր մի արժանաւոր կաթողիկոս ընտրել։ Այդ նպատակով, այդ տրամադրութեամբ, այդ ուխտով ու սրտի միամտութեամբ գնացինք ս. Էջմիածին։ Սակայն անկարող եղանք մի արժանաւոր անձի կաթողիկոս ընտրել. ո՛չ ազգի, ո՛չ եկեղեցու շահերով, այլ լոկ կուսակցական կարճատես, անձնական հաշիւներով առաջնորդուող պատգամաւորների մի բազմութիւն տեսանք մեր առաջ, որ իրենց յարած նսեմ հոգևորականներից էին ուզում յաջորդ ընտրել Լուսաւորչին։ Նրանք իրենց թուական առաւելութեանը յենուած կուռ պինեալ

էին ու պատերազմական վիճակ ի բերան։ Դիմումն արինք, խաղաղութեան կոչ արինք, աննշան զիջումն խնդրեցինք յանուն սառապեալ եկեղեցւոյ, բայց նրանք քար սրտով՝ իրենց հպարտութեան բարձունքումն արձանացած, մերժեցին մեզ և բռնութեան զէնքով, մեր ձայնը խեղդելով, մեզ սպառնալիքներ



ԳԷՈՐԳ ԱՔՈՒԼԵԱՆ (Մանկավարժ)
Պատգամաւոր Դերջանի

տալով պահանջեցին, որ վաճառենք մեր խիղճը, ուրանանք արժանիքն արժանաւորների, ձեռք քաշենք մեր գիտակցութիւնից, միանանք իրենց հետ և մեզ ընտրող ժողովրդի լաւագոյն ցանկութիւնների հակառակ անձն ընտրենք ու նպաստենք որ եկեղեցւոյ անկումն արագանայ։

Այս բոլորի վրայ երբ աւելացաւ յանցանքներից էն խոշորագոյնը, երբ գաղտնիքների վարագոյրներն այրուեցան ու պարզուեցաւ թէ կուսակցական անձեր երկու տեղապահների ձեռքով ոտնահարել են ազգի ընտրական իրաւունքը, իրենց կուսակիցներին փաթաթել են ազգի վզին, որպէս ընտրելիներ, փոխադարձ անձնական շահերի հիմունքով, այլևս մենք չէինք կարող մասնակցել ապօրինի ընտրութեանը, չէինք կարող դաւաճանել մեր եկեղեցուն, մեր ազգին, մեր գիտակցութեան ու սևերես ծնալ պատմութեան առաջ։

Ուստի թօթափեցինք մեր ոտքերի փոշին ու մեր խղճի անդորրութիւնը գրկած՝ հեռացանք ընտրութիւններից ու էջմիածնից։

Ահա թէ ինչո՞ւ հեռացանք։

Խղճի լուսաւորութեամբ, առանց աւելութեան, պատմական ճշմարտութեանը անդաւաճան ծառայելու պարտաճանաչութեամբ գրի առայ պատմական անցքը, այն անյողդողդ հաւատով թէ երբ կրքերը հանդարտին, երբ թերևս մենք մի հոդաթմբի տակ ամփոփուած լինինք, անշուշտ իր գաղտնարանից դուրս պիտի գայ անկաշառ ու անաչառ պատմագիրը և իմ նկարագրիս մէջ՝ անդրադարձած պիտի տեսնի ճըշմարտութիւնը. հէնց այն օրն էլ մենք պիտի ստանանք մեր բարոյական վարձատրութիւնը, որ պատմագրի գոհութեամբը պիտի արտայայտուի։

Այդ վերջակէտով կամենում էի վար դնել գրիչս։ Բայց մեր հակառակորդներն իրենց մի նոր արարքով գալիս են վկայելու, թէ իրենք բռնաւոր են ազատ խղճի, սպանիչ՝ ազատ մտածութեան, գերող՝ ազատ

հոգիների, հեթանոս հալածողներ՝ քրիստոնէական շնորհքի և ինքնուրոյնութեան։

Հէնց այժմ տեղեկութիւն առայ թէ պատգամաւորների մեծամասնութեան գլուխը Ներոնի և Կալիգուլայի, Զինգիզ խանի և Համիդի դավինիներով պատկող «ընկերները»՝ հոգևոր ու աշխարհական, Տաճկաս-



ՏԻԳՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ (գիւղատնտես, վաճառական)
Պատգամաւոր Բաղդադի

տան հասնելով կատարել են իրենց տուած սպառնալիքները էջմիածնում. պաշտօններից զրկել ու հալածանքի են ենթարկել հայ եկեղեցու ընտիր հայրերին Տ. Տ. Բարգէն եպիսկոպոս Կիւլէսէրեանին, Տիրայր Ծայրագոյն վարդապետին և Հրանտ վարդապետին, որովհետև նրանք հաւատարիմ մնալով իրենց ազգին

ու եկեղեցուն էջմիածնում, չկամեցան արատաւորել իրենց խիղճը՝ և բռնութեան դէմ բողոքելով, փոքրամասնութեան մէջ մնելը պատիւ և պարտք համարեցին։

Եւ այսպիսի բռնութիւն գործ են դնում շնորհալի հոգևոր հարց վրայ այն անձերը, որ միշտ բռնութեան դէմ են բողոքել. հայ Աննան ու Կայիափան, հայ Հերովդէսներն ու պիղատոսները դաշնակցած։

Նախատինք ձեզ, վատարի անձինք, ստորացած բռնաւորներ...

Դուք ուզում էք հայոց եկեղեցին դատարկել ազատ հոգիներից, դուք ուզում էք հաւատաքննութեան անէծքով և սարկահոգի շողոքորթներով լցնել մեր ազգային ազատ եկեղեցին, բայց քաջ իմացէք, որ այդպիսի գարշելի բովանդակութիւնից կը պատռուի քրիստոնէական եկեղեցին, չի դիմանայ այդքան անարգանքի և դուք՝ սևահոգի բռնաւորներ, նրա վիժատակների տակը կը մնաք, իսկ ձեզնից բարձր՝ միայն անէծքը ժողովրդի ձեզ բաժին։

Տեսնում էք, որքան անիրաւութիւն կայ գործուած ու կախուած այդ հայրապետական ընտրութեան գլխին. ճ, այսպիսի ընտրութիւնը օհնութիւնաբեր չի լինի մեր եկեղեցուն։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ես իմ խօսքը վերջացրի. սակայն անկարող եմ առանց այս յաւելուածի կնքել գիրքս։

Այս վերնագրի տակ դնում եմ նկարագրիս լրացումները, որոնք երկու նշանակութիւն ունին գլխաւորապէս. նախ՝ վաւերացնում են նկարագրիս ճշմարտութիւնը. երկրորդ հերքում են անբարեմիտ ասէ-կօսէները, որոնք ուղղւում են տեղ-տեղ պատգամաւորների փոքրամասնութեան հասցէին։

Զոր օրինակ՝ ասում են թէ փոքրամասնութիւնը յամառօրէն, առանց պատճառաբանութեան, լոկ քմահաճոյքով պահանջում էր որ Օրմանեան Սրբազանին ընտրելի ընդունէն։

Յովհաննէս Սպենդիարեանի ճառը՝ որ խօսուած է Դեկտ. 11-ին համերաշխութեան ժողովի նիստին, կատարեալ հերքումն է այդ հնարովի լուրերուն։

Ասում են թէ փոքրամասնութիւնը ոչ մի ապօրէնութիւն չէր տեսնի, եթէ Օրմանեանի անունը ընտրական ցանկի մէջ մնար։

Սուքիաս Սրբազանի ճառը, փոքրամասնութեան ընդհանուր բողոքը, Զուբարի, Ենգիբարեանի, Բերբերեանի, Բարդուղիմէոս սրբազանի անհատական բողոքները, որոնք նուիրուած են *ի պաշտպանութիւն միայն սկզբունքների եւ ոչ երբէք անձերի*, բացարձակ հերքումն են այն չարահնար լուրերու, որոնք հակասում են բողոքների բովանդակութեանը։

Ուստի ես կարեւոր եմ համարում՝ իբրև գրքիս լրացումն, այս յաւելուածով հրատարակել այդ բողոքները։

Յաւում եմ որ փոքրամասնութեան պատգամաւորներից ոմանց լուսանկար պատկերները ժամանակին չհասան ձեռքս, ուստի և գրքիս մէջ բաց մնացին։

Ի դէպ. Հեռաւոր ծանօթներս գրերով, մօտաւորները բանիւ բերանոյ յորդորեցին ինձ խնայել ինքս ինձ, ծածկել շատ ճշմարտութիւն, այլապէս վերջ ու վախճան չի ունենայ այն հալածանքը, որ առաւօրէն վայելում եմ հոգևոր իշխանութեանս ոմանց հզօրների կողմից։

Պատասխանում եմ, բարեկամներ, այս ու այն անձի դէմ տածած ատելութիւնը չէ, որ ինձ խօսեցնել է տալիս, քաւ լիցի, այլ այն վտանգը, որ սպառնում է—գոնէ իմ համոզմունքով—հայոց եկեղեցուն և ազգին և վրաս պարտք է դնում չծածկել այն ճշմարտութիւնները, որոնք հասարակաց կեանքի հետ կապ ունին։

Ես դեռ հաւատում եմ, զօրեղապէս հաւատում եմ ճշմարտութեանն ու արդարութեանը, որոնք ինձ կը պաշտպանեն, եթէ ոչ այժմ՝ գոնէ փոքր ինչ յետոյ, չար լեզուների, չար հալածանքի դէմ։

Իսկ եթէ անիրաւութիւնը էլ աւելի կը լեռնանայ և վրէժխնդրութեան թափով իբրև հալածանք կըփլչի անձիս վրայ, որովհետև հոգուս անկախութիւնը ծախել, պարտքս ուրանալ, ճշմարտութիւնը ծածկել չկարողացայ, ինչ անեմ. կը մնայ ինձ այդ դէպքում հնաւանդ կրօնաւորների խօսքը կրկնել. «Ի փառս Աստուծոյ»։

Բենիկ վարդապետ

Ց. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆԻ ՁԱՌԸ

(Արտասանուած Էջմիածնում դեկտ. 11-ին, Համերաշխութեան յանձնաժողովի նիստին)

Խրիմեանի ըստ ամենայնի անյաջող հայրապետութիւնից յետոյ հայ ժողովուրդը հասկացաւ, որ կաթողիկոսական ծանր և պատասխանատու պաշտօնէութեան համար առաջարկուած ընտրելին պիտի անպայման օժտուած լինի վարչական չնորհքով, բնութեան կարող ոգով և կամքով, մտաւոր զարգացմամբ և կրթութեամբ։

Հայ ժողովուրդը դառն փորձերից յետոյ ըմբռնեց, որ միայն այդպիսի արժանաւորութիւնների տէր եկեղեցականը կարող է բարեկարգել և պայծառացնել Էջմիածնի ներկայ վիճակը, կարգաւորել հայոց եկեղեցու վարչական՝ դպրոցական և կալուածական գործերը, բարձրացնել Մայր Աթոռի և հայրապետի հեղինակութիւնը, հայոց ազգի և եկեղեցու անունն ու պատիւը։

Ամենայն հայոց կաթողիկոսի իրաւասութեան ներքոյ է գտնւում ամբողջ Էջմիածինը իր հաստատութիւններով և միաբանութիւններով։

Նա հայոց եկեղեցու գլուխ լինելով՝ ղեկավարում է կրօնական, եկեղեցական-վարչական, դպրոցական և կալուածական գործերը։

Նրա բարձր հոգատարութեանն է յանձնուած Էջմիածնի ձեռնարանը իր ուսուցչական խմբով և աշակերտներով։

Կաթողիկոսը հսկում է թեմական առաջնորդների գործունէութեանն ըստ իրան ներկայացուած տեղեկագիրների, նաև

երբեմն լուրջ ազգային-կրօնական խնդիրների առիթով բանակցութիւնների մէջ է մտնում հայոց պատրիարքների հետ, տալով նրանց որոշ հրահանգներ ի գործադրութիւն։

Ո՞րքան, ուրեմն, մտաւոր եռանդ և պատրաստութիւն պիտի ունենայ հայրապետը, որքան մեծ վարչական չնորհքով օժտուած պիտի լինի նա այդ ծանր ու բարդ գործերի կարգաւորումը գլուխ բերելու համար.

Բայց ամենապատասխանատու մասը հայրապետի գործունէութեան՝ կազմում են նրա բանակցութիւնները պետական հաստատութիւնների և բարձրաստիճան պաշտօնեաների հետ այլ և այլ եկեղեցական-վարչական և դպրոցական գործերի առիթով։

Այս մասում հայրապետը եթէ չունի վարչական-դիւանագիտական չնորհք, կարող է անփարատելի սխալներ անել, ունկնդիր լինելով իր խորհրդատուների անհեռատես ներչնչումներին։ Դժբաղդաբար այդպիսի դէպքեր տեղի են ունեցել թէ այստեղ Էջմիածնում և թէ Թիւրքիայում, դէպքեր, որոնք չատ թանգ են նստել հայերիս համար և ծանր կացութեան մէջ են դրել հայրապետական և պատրիարքական աթոռները։

Ներկայ ժամանակի անխուսափելի պահանջներից մէկն էլ նա է, որ հայոց հայրապետը լինի բարձր ուսման տէր և կրթուած անձն, գիտակ ռուսերէն կամ եւրոպական լեզուներին. դա պահանջում է ազգի և եկեղեցու արժանապատուութիւնը։

Էջմիածինը ունի հարուստ գրադարան և հին ձեռագրերի նշանաւոր ժողովածու, բայց նա չունի ուսումնատեղ միաբանութիւն. գիտական պաշարով օժտուած հայրապետը՝ կարող էր իր անձնական օրինակով գրաւել և ոգևորել միաբաններին գիտութեան վերաբերեալ առարկաներով։

Մխիթարեանների աշխատասիրութեանը և ուսումնատենչ ոգուն ենք պարտական, որ մեր եկեղեցական և պատմական մատենադրութիւնն ունի այսօր բազմաթիւ քննական հրատարակութիւններ։ Ինչո՞ւ յետ է մնացել Էջմիածինը այդ մասում. արդեօք պատճառն այն չէ, որ մեր միաբանութիւնը չեղուել է

իր ուղիղ կոչումից և զբաղուելով սին, անցաւոր ձգտումների պայքարով՝ մոռացել է իր սրբազան կոչում ազգի և եկեղեցու առաջ։

Հայրապետի անձնական հեղինակութիւնը մեծ ազդեցութիւն ունի Իջմիածնի միաբանութեան վրայ և նա է միայն, որ կարող է ոչնչացնել մեռելութիւնից թմրած այժերը կեանքի կանչել։

Հայրապետը պիտի քաջ տեղեակ լինի եկեղեցական մասնագրութեան։ կան եկեղեցական խնդիրներ, որոնք կարօտ են վերաքննութեան՝ ժամանակի և դիտութեան պահանջների համաձայն ազգային-եկեղեցական ժողովների միջոցով։ Բայց այդ խնդիրներին կարող է մօտենալ լուսաւորուած, դիտութեան պաշարով զինուած միտքը՝ նրանց պատշաճաւոր ուղղութիւն տալու համար։

Հայրապետի մտաւոր և գիտական պատրաստութիւնը կարող է այդ դէպքում մեծ ծառայութիւն մատուցանել եկեղեցուն, վերակենդանացնելով և կեանքի պահանջներին մօտացնելով եկեղեցական կանոնները և աւանդութիւնները։

Ահա այն արժանաւորութիւնների համառօտ ամփոփումը, որ պիտի ունենայ կաթողիկոսութեան թեկնածուն ամենայն իրաւամբ հայրապետական աթոռը ժառանգելու համար, և մենք անտես առնելով կուսակցական պայքարը ու միայն աչքի առաջ ունենալով ազգի, եկեղեցու և Մայր Աթոռի չահերը՝ բարոյական պարտք ունենք կատարելու մեր խղճի առաջ, այն է՝ ընտրել արժանաւորագոյն ժառանգ կաթողիկոսական գահի համար։

Բնաւ չկամենալով ժխտել արժանիքները այն կաթողիկոսական թեկնածուների, որոնց անունները դրուած են հրապարակի վրայ, արդարութիւնը սակայն պահանջում է, որ մենք խոստովանենք, թէ արժանաւորագոյնը նրանց մէջ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանն է։

Սա ամենախոշոր և քանքարաւոր դէմքն է հայ հոգևորականութեան մէջ։

Նա է, որ իր վարչական ընդունակութիւններով, փորձառութեամբ, ուսումով, դիտութեամբ և եւրոպական կրթու-

թեամբ բաւարարութիւն է տալիս այն պահանջներին, որոնց մասին մենք արդէն յիշեցինք։

Այդ նշանաւոր եկեղեցականը իրօք օժտուած է վարչական և դիւանագիտական ակնյայտնի տաղանդով, որը և արտայայտեց նա տեսչական, առաջնորդական և պատրիարքական պաշտօնները երկար տարիներ վարած ժամանակը Կարնում, Արմաշի դպրեվանքում և Կ. Պոլսում։

Օրմանեանը պատրաստեց մի խումբ երիտասարդ կրթուած հոգևորականներ, որոնք Թիւրքիայում առաջնորդական և քարոզչական պաշտօններ են կատարում, նաև գործում են բանասիրական և դպրոցական ասպարէզների վրայ։ Ներկայ դարձող պատգամաւորներից նրա աշակերտները լինելու բաղդը ունեցել են Գաղատիոյ առաջնորդ Բարգէն սրբազանը և Բաբերդի առաջնորդի տեղապահ Տիրայր ծայրագոյն վարդապետը։

Օրմանեանը տաղանդաւոր քարոզիչ է և լեզուագէտ։

Օրմանեանը եկեղեցական մատենագրութեան մէջ անուն հանած հեղինակ է և, չնայած իր պատկառելի հասակին, մինչև այսօր չարունակում է աշխոյժ հոգով աշխատել։

Այդ բոլորը բաւ է վկայելու համար, որ այսօր Լուսաւորչի Գահի արժանաւորագոյն ժառանգը ամենայն իրաւամբ, կարող է համարուել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը, որի թեկնածութիւնը խղճի մօք և խորին համոզմունքով պիտի պաշտպանէ մինչև վերջը մի միլիոնից աւելի հայ ժողովրդի ներկայացուցչութիւնը Իջմիածնում։

ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊ. ՊԱՐՋԵԱՆԻ ՁԱՌԸ ԲՈՂՈՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԻՍ

Ամենապատիւ տէր Տեղապահ սրբ. հայր,
Մոհական առաջնորդ պատկառելի
Համազգային ժողովոյ.

Մենք, Մայր Աթոռոյս միաբանութեան կողմանէ կաթողիկոսական ընտրութեան քանի մի պատգամաւորներս, Ռուսաստանի 4 վիճակների աշխարհական և հոգևորական, նոյնպէս

Պարսկաստանի և Թիւրքիայի քանի մի թեմերի պատգամաւորները՝ ի նկատի ունենալով այս հանգուցային ժողովոյ բարձր նշանակութիւնը, մի ժողովոյ՝ որ 17 դարուց հետէ հայ ազգի ժողովրդեան անմոլար կառավարութեան դիակավարն է, որ մեր եկեղեցւոյ անխոտոր վարչութեան բեեռական ասպն է, որ մթութեան մէջ լուսափայլ փարոսն է, այժմ կապուած է իր ժողովրդական հաւաքական իրաւունքով մասնակցութիւնից իր անդամների կողմանէ մինչև ցայսօր ունեցած ազատ և անբռնադատ ընտրութիւնից, ենթարկուելով անձնական ազդեցութիւնների թելադրութեանց, որով պիտի նուաստանայ եկեղեցւոյ ընտրելի հայրապետի նշանակութիւնը, մեծարանքը և արժանիքը՝ հասուն խորհրդակցութեամբ և խորին պատասխանատուութեամբ չկարողանալով մասնակցել սոյն ընտրութեան՝ ցաւօք սրտի պարտաւորուում ենք հեռանալ, որպէսզի ազատենք մեզ ապագայ պատասխանատուութիւնից մեր խղճի և ընտրող ժողովրդների առջև։

Ամենապատիւ սրբազան հայր, մատուցանելով ձեզ ներկայ բողոքագիրս՝ որոյ մէջ պատճառաբանուած են մեր հրաժեշտի առիթները մի առ մի, յարգոյաբար խնդրում ենք այս մեր առարկութիւնները բարեհաճել մտցնել կաթողիկոսական ընտրութեան արձանագրութեան մէջ և ընթացք տալ ներկայ բողոքագրին։

Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան համար գումարուած Ս. Էջմիածնի պատգամաւորական ժողովին։

Մենք, ներքոյ սորագրող Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի թեմերից եկած հոգևորական և աշխարհական պատգամաւորներս համարում ենք սոյն կաթողիկոսական ընտրութիւնը անկանոն և բեկանելի հետևեալ պատճառներով.

Գոյութիւն ունեցող օրէնքը (Պօլօժենիէ հայ եկեղեցու գործերի կառավարութեան 1836 թ. ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան կանոններ 1865 և 1908 թ.թ.) սահմանում

է որպէս սկզբունք և հիմք այն ընտրական սկզբունքը, որով «իւրաքանչիւր ոք ի ժողովրդականաց տայ ղկարծիս իւր... ապատօրէն, ըստ ուղիղ հասկացողութեան իւրում, ըստ մաքուր խղճի, մտաց, առանց երբեք երկիւղի և ոչ նայելով յառաջարկութիւն ինչ կողմնակի կամ ի գրութիւն մասնաւոր. թէև իցէ այն ի պատուաւորագոյն անձանց յազգէն հայոց (կանոնք § 16»։ Մինչդեռ Ս. Էջմիածնի Սինօդի ընտրական գործից երևում է, որ Կ. Պօլսի հայոց կրօնական ժողովը տարեսյս նոյեմբերի 17-ի իր գրութեամբ № 329, յայտնել է նորին ամենապատիւ Ս. Էջմիածնի կաթողիկոսական Տեղապահ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանին, որ Ս. Էջմիածնում կաթողիկոս ընտրելու համար գումարուած պատգամաւորական ժողովը վճռականապէս մերժէ Կ. Պօլսի նախկին պատրիարք Մաղաքիայ արքեպ. Օրմանեանի թեկնածութիւնը. Այս գրութիւնը, որի իսկականը գտնուում է ընտրական գործի մէջ, հանդիսանում է որպէս օրէնքով արգելուած անմիջական ճնշումն, որ արգելում է ընտրողների ազատ կամքի արտայայտութեանը և բռնադատում է նրանց խիղճը, մանաւանդ Տաճկաստանից եկած պատգամաւորներինը։ Նոյն հոգով է կազմուած նաև Կ. Պօլսի Ազգային ժողովի վճիռը։ Իսկ այդ ապօրինի եղանակով հայ բարձրաստիճան եկեղեցականների ցանկից դուրս եկած Մ. արքեպ. Օրմանեանը ռուսահայ ժողովրդի ճնշող մեծամասնութեան առաջին թեկնածուն է, ինչպէս նաև տաճկահայ ժողովրդի մի մասի, որպէս աչքի ընկնող և արժանաւորագոյն հովիւ Հայաստանեայց եկեղեցու։ Ապա կաթողիկոսական Տեղապահ Գէորգ արքեպ. Սուրէնեանը, ինչպէս երևում է լրագրական տեղեկութիւններից, որ պաշտօնական ծագումն ունին, ցոյց է տուել Նիկոմիդիայի թեմական առաջնորդութեան որոշ անձանց՝ պատգամաւոր ընտրելու համար։ Նոյն Սուրէնեան Սրբազանը տարեսյս նոյեմբերի 17/30-ին յանուն Կ. Պօլսի պատրիարքական տեղապահի Վահրամ արքեպ. Մանկունեան հեռագրով խնդրել է իր առաջուց յանձնարարած Երուանդ քահ. Նալբանդեանի, Յորէն ք. Յուզեանի, Լևոն Ա. Լեքսանեանի և այլոց փոխարէն ընտրել տալ Ս. Էջմիածնի Եփրեմ և Յորէն եպիսկոպոսներին և Էջմիածնի միաբանութեան անդամ Բագրատ, Մատթէոս և Բարգէն վարդապետներին։

Այս բոլոր փաստերը կատարեալ իրաւունք և հիմք են տալիս մեզ մտածելու, որ հայ լրագրութեան մէջ հաղորդուած սենսացիոն տեղեկութիւնները՝ թէ Ս. Էջմիածնից Կ. Պոլիս է ուղարկուած յատուկ անուանացուցակ ռուսահպատակ հայերի, որոնք պիտի փոխարինեն տաճկահայ թեմերի պատգամաւորների, կատարուած իրողութիւն է և հէնց դրանով է բացատրւում Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ վ.հրամ արքեպ. Մանկունու տարւոյս նոյեմբերի 26-ի թուակիր № 1442 կաթողիկոսական տեղապահ Գէորգ արքեպ. Սուրէնեանին ուղղած գրութիւնը, որ գտնւում է ընտրական գործի մէջ։ Այս նամակից երևում է, որ վ.հրամ արքեպ. Մանկունին ներողութիւն է խնդրում առ այն, որ պատգամաւորների սկզբնական ընտրութիւնների մէջ որոշ փոփոխութիւններ են առաջացել։ Միաժամանակ վ.հրամ արքեպ. Մանկունին յայտնում է, որ ինքը կը պատժէր էլ «ցուցմունքներին» չհնազանդող հոգևորական պատգամաւորներին, եթէ չլինէր մօտիկ ապագայում պատրիարքական տեղապահութեան պաշտօնից հեռանալու հանգամանքը։ Թէ կաթողիկոսական տեղապահի և թէ տաճկահայ հոգևոր բարձր իշխանութեան այս գործողութիւնները հաստատում են, որ պատգամաւորների ընտրութիւնները կատարուել են ճնշման ներքոյ և բարձր իշխանութեան ցուցմունքներով։ Գործին մօտիկ ծանօթանալով, կարելի է գտնել նաև ուրիշ նոյն տեսակ ապօրինութիւններ, բայց կանգ առնել դրանց վրայ, աւելորդ ենք համարում, բաւականանալով վերոյիշեալ փաստերով, որ արմատապէս խախտում են գործող օրէնքներով վաւերացուած ընտրողական սկզբունքը։

Վերև բերած փաստերի հիման վրայ մենք, աշխարհական և հոգևորական պատգամաւորներս, որ ներկայացնում ենք Վրաստանի և Իմէրէթի, Ղարաբաղի, Շամախու, Բեսսարաբիոյ թեմերը, որ ռուսահայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնն է կազմում, և նոյնպէս տաճկահայ թեմի մի մասը, այլև Սինոդի և Ս. Էջմիածնի միաբանութեան ներկայացուցիչներս, յայտնելով բողոք վերև յիշուած ազազակող այն բռնութեան և մի չարք գեղծումների դէմ, որ թոյլ են տուել Տաճկաստանի պատգամաւորների ընտրութեան գործում՝ որոշ ցուցակներով և ցուցմունքներով հայ հոգևոր բարձր իշխանութեան ներկայացուցիչների կողմից թէ Ռուսաստանում և թէ Տաճկաստանում, գեղծումների, որ դարձրել են ընտրութեան գործը նշանակութիւնից զուրկ և ապօրինի, գտնում ենք, որ ներկայ ընտրութիւնները կատարւում են այնպիսի պայմաններում, որ ժխտում են ամեն օրինականութիւն և Հայաստանեայց եկեղեցու սրբագործուած նախանձ սովորութիւնները, ուստի և ստիպուած նրա ժառանգներ այդ ընտրութիւններին մասնակցելուց։

Մեր այս բողոքը խնդրում ենք բառ առ բառ մտցնել ընտրական ժողովի օրագրի մէջ նրան օրինական ընթացք տալու համար։

Պատգամաւոր միաբանութեան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի Սուքիաս արքեպ. Պարզեանց, առաջնորդ վիճակին հայոց Շամախոյ Անանիա արքեպ. Համազասպեան, պատգ. միաբ. Մ. Աթոռոյ Յովհ. արքեպ. Շիրակունի, պատգ. միաբ. Մ. Աթոռոյ և լուսարարապ. Մ. Տաճարի ս. Էջմիածնի Վահան եպ. Յովակիմեան, առաջն. Թեմին Ատրպատ. կարապետ եպ., Բարգէն եպ. Գաղատիոյ, ներկ. Թեմակ. Ն.-Նախիջևանի և Բեսսարաբ. և հոգ. նոյն Թեմին այլև Թեմակ. Բաղդադի Թեմի Տիրայր վ., անդամ Սինօդի ս. Էջմիածնի և ներկ. Պրուսայի առաջն. Յուսիկ վ., ներկ. հոգ. պատգ. Արղնեի վիճակի Բենիկ վ., Տիրայր ծ. վ. Մարգարեան պատգ. Բաբերդի, ներկ. Բալուի առաջն. միաբան ս. Էջմիածնի Մուշէ վ., ներկ. առաջն. Տիգրանակերտի Գարեգին վ. Յովսէփեան, առաջն. փոխ. Դերջանի վիճակին Հրանդ վ. Յովասափեան, ներկ. Զնգուշի վիճ. առաջ. Եղիշէ ա. ք. Գեղամեան, առաջն. տեղապահ հայոց Բազրևանդի Պայազիտ Ներսէս ք., Վրաստ. և Իմէրէթի հայ լուսաւորչ. Թեմի պատգ. երդ.-հաւատ. Յովհաննէս Սպենդիարեան, պատգ. Ղարաբաղի հայոց Թեմի և պատգ. Բաղէշի Թեմի աղնուական Սամսոն Զէրքէզեան, պատգ. Շամախոյ Թեմի բժշկ. Թադէոս Զաքարեան, պատգ. Ն.-Նախիջևանի և Բեսսարաբ. Թեմի երդ.-հաւատ. Գէորգ Զուբար, պատգ. Սեբաստիայի Թեմի ինժ. Արշակ Բարեան, պատգ. Լիմ և Կոտւց անապ. վիճ. ազնուական Համբ. Առաքելեան, պատգ. Բաղդադի Թեմի Տիգրան Գոյումճեան, պատգ. Բասէնի վիճ. Յակաւոր Աֆրիկեան, պատգ. Տիգրանակ. վիճ.

Աղէք. Քալանթար, պատգ. Արղնի վիճ. և պատգ. Բալուի վիճ. բժ. Արտաչէս Շնհան, պատգ. Զնգուղի թեմի երդ.-հաւատ. Գարեգին Ենգիբարեան, պատգ. Պրուսայի Յովհաննէս Յովհաննէսեան, աշխարհ. պատգ. Դերջանի Գէորգ Արուլեան։

ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ՍԻՆՕԴԻՆ

Դիւանի անդամ վոխ-առենապետ
երդ.-հաւատարմատար ԳԷՈՐԳ ՋՈՒԲԱՐԻ

Առանձին կարծիք

Ինչպէս մասնաւոր յանձնաժողովը, նոյնպէս և ընդհանուր ժողովը, որ գումարուած էր ամսիս 10-ին պատգամաւորների լիազօրութիւնները քննելու համար, իմ կարծիքով չկատարեց այն պարտաւորութիւնները, որոնք դրուած էին նրանց վրայ ներքին գործոց նախարարութեան շրջաբերականի համաձայն։

Եթէ կառավարութիւնը տալիս է իրաւունք և պատգամաւորների ժողովը ընդունում է այդ, նա պարտական է իրագործել իր պարտականութիւնը լիովին, այսինքն ամեն մէկ պատգամաւորի լիազօրութիւնը պաշտօնական ժողովը. ինչպէս և մասնաւոր յանձնաժողովը պարտական էր քննել մէկիկ-մէկիկ, առաջել ամեն մէկ պատգամաւորի վկայագիրը և ըստ այնմ դնել այս կամ այն վճիռը, մինչդեռ ոչ յանձնաժողովը, ոչ նոյնիսկ պաշտօնական ժողովը դեկտեմբերի 10-ին չվարուեց այդպէս, և մինչև անգամ ինձ, որ անգամ էի մասնաւոր յանձնաժողովի՝ լիազօրութիւնները քննելու համար, չտուեց հնարաւորութիւն կարդին, ըստ օրինի տալ զեկուցում այն թերութիւնների մասին, որ ես նկատել էի այս կամ այն պատգամաւորի լիազօրութեան նկատմամբ։ Նրբ մատնանիշ էի անում մէկի վրայ և խնդրում էի զեկուցանել նրան վերաբերեալ թղթերը գործի մէջից, նախագահ պ. Ս. Յարութիւնեանը իսկոյն և եթ հարց է դնում իմ զեկուցման առթիւ, թէ «ընդհանուր ժողովը գտնում է վաւերական, թէ ոչ». և ժողովի անդամների մի մասը չսեսնելով վաւերաթղթերը, չծանօթանալով անգամ նրանց բովանդակութեան և անտեղեակ լինելով նրանց պարտականութեան, աղաղակելով կրկնում էր «վաւերացնում ենք, վաւերացնում ենք» — մինչդեռ պատգամաւորների մեծ մասը, որ իր պարտականութիւններին սրբութեամբ էր վերաբերում, մնում էր չուարած և անհետանք կերպով բողոքում էր։

Այդօրինակ ժողովը և պ. առենապետի տարօրինակ վարմունքը՝ հարցեր դնելու և վճիռներ կայացնելու՝ ես համարում եմ ապօրինի և ամսիս 10-ին գումարուած ժողովը՝ անվաւեր։

11 դեկտ. 1911 թ. Ս. ԷՋՄԻԱԾԻՆ։

Ի Ս. ՍԻՆՕԴՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Զնգուղի պատգամաւոր երդուեալ-
հաւատարմատար Գ. Ենգիբարեանից
Բ ո ղ ո ք.

Ներքին գործերի մինիստրի բացատրութեան համաձայն՝ դեկտ. 10-ին պատգամաւորների ընտրական ժողովը առաջեց պատգամաւորների լիազօրութիւնները և գտաւ բոլորը օրինաւոր։ Ես պատկառելի ժողովին յայտնեցի, որ պատգամաւորներից արժանապատիւ Սիօն վարդապետ, գերապատիւ Եփրեմ եպիսկոպոսի և Բագրատ ու Մատթէոս վարդապետների լիազօրութիւնները, ինչպէս և մի քանի ուրիշներինը անկանոն եմ գտնում, յարակցելով որ ես անկանոն եմ համարում ընդհանրապէս այն միջոցները, որոնք գործ են դրուել Թիւրքիայում պատգամաւորներ ընտրելու ժամանակ։ Պատգամաւորական ժողովը վճռեց, որ ես իրաւունք չունեմ ընտրութիւնների ընդհանուր միջոցների ապօրինաւորութեան մասին ապացոյցներ բերելու, և ես վերապահեցի իրաւունք բողոքելու սինոդին և ապա ըստ օրինի վարելու։ Ես գտնում եմ, որ պատգամաւորական ժողովը իրաւունք չունէր նախ արգելելու ինձ ապացոյցներ տալու, որ Թիւրքիայում ռուսահայերից պատգամաւորներ ընտրելու ժամանակ գործադրուել են հակաօրինական միջոցներ, որոնք այդ ընտրութիւնները միանգամայն ապօրինի են դարձնում։

Ապացոյցները հետեւեալներն են. ընտրական գործի մէջ կայ մի դրութիւն հայր Սիօն վարդապետի ընտրութեան վերաբերեալ յանուն սրբազան Տեղակալի, որից երեւում է, թէ Կ. Պոլսի պատրիարք. տեղապահ գեր. Մանկունի արքեպիսկոպոսը, յանձնարարել էր ընտրել արժ. Սիօն վարդապետին, ուրեմն հոգեւոր իշխանութիւնը միջամտել է ընտրական գործին և պատգամաւորը ընտրուել է ճնշման տակ։ Լրագրներում տպագրուած էր, թէ գեր. տեղակալ Սուրէնեան արքեպիսկոպոսը ուղարկել է Կ. Պոլսի տեղապահ ս. Մանկունի եպիսկոպոսին մի ցուցակ ռուսահայ մարդկանց, խնդրելով որ թիւրքահայ թեմերից այդ անձինք ընտրուեն պատգամաւորներ դեկտ. 11-ին կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու համար։ Թէեւ սրբազան տեղակալը կարեւոր համարեց հերքելու լրագիրներում այս լուրը, բայց ընտրական գործի մէջ եղած տեղեկութիւնները միանգամայն ապացուցանում են, թէ ս. տեղակալ Սուրէնեանն և թէ ս. Մանկունի արքեպիսկոպոսները ուժգին պրօպագանդա են արել ընտրութիւնների ժամանակ և միջամտել են գործին և դրանով իրրև իշխանաւոր ճնշում են գործել ընտրողների վրայ։ Գործի մէջ կայ գեր. Մանկունի արքեպիսկոպոսի նամակը յանուն տէր Տեղակալի, որի մէջ ս. տեղապահ Մանկունի արքեպիսկոպոսը ներողութիւն է խնդրում, որ ուղարկուած ցուցակով չեն ընտրուել պատգամաւորները, այլ մի քանի փոփոխութիւններ են եղել։ Ես ներկայացրի ժողովին «Մշակ» թերթի մի համարը, որից երեւում է, թէ Կ. Պօլսի «ժամանակ» թերթում հրատարակուել է ս. Սուրէնեան արքեպիսկոպոսի մի հեռագիրը յանուն տեղապահի ի Պոլիս, որով տէր Տեղակալը խնդրում է առաջուց ցոյց արուած անունների տեղ ընտրել տալ ս. Նիկրեմ և Յարէն եպիսկոպոսներին, Բարգէն, Մատթէոս և Բագրատ վարդապետներին։ Պարզ է ուրեմն, որ այն ընտրութիւնները կատարուել են հոգեւոր բարձր իշխանութիւնների ճնշման ներքոյ և հակառակ Փոխարքայից արուած 1865 թուականի հրամանագրի § 16-ի մտքին. ուստի և ես այս հիման վրայ բոլոր այն պատգամաւորների լիազօրութիւնները, որոնք վերև յիշուած են և նոյնպէս ս. տեղապահ Սուրէնեանի ուղարկած ցուցակով են ընտրուած, ապօրինի եմ համարում։

Իսկ ցուցակ ուղարկուած լինելը ապացուցւում է թէ զործի մէջ եղած փաստաթղթերով և թէ լրագրական տեղեկութիւններով, որոնք տակաւին հերքուած չեն սրբազան տեղապահ Սուրէնեանի կողմից։

Էջմիածին, 11 նոյեմբերի

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ՍԻՆՕԴԻՆ

Ամերիկայի թեմի պատգամաւոր
Մաղաք Գ. Պէրպէրեանէն։

Բողոք.

Ընդհանուր համազգային ժողովը, ինչպէս և ս. Սինօդը Ամերիկայէն ընտրուած երկու աշխարհական պատգամաւորներէն լիազօր ճանչցաւ պ. Հ. Ամպրուկեանին։ Այդ վճիռը ես կը դտնեմ անվաւեր հետեւեալ պատճառներով։

ա) Մկրտիչ Ա. կաթողիկոսի տուած կոնդակի համաձայն (6 սեպտ. 1902 ամի, թիւ 1226) Ամերիկայի նամար հաստատուած է նոր սահմանադրութիւն մը, և ամերիկահայ առաջնորդական թեմը պարտի վարել «ըստ այնմ» իր եկեղեցական գործերը։ Ուրեմն՝ սահմանադրութիւնն է միակ օրէնքը և կանոնը, որու հիման վրայ Ամերիկայի հայ ժողովուրդը կառավարուած է և պիտի կառավարուի իր եկեղեցական և այլ գործերուն մէջ։

Այն ամենը, ինչ որ դուրս է սահմանադրութենէն և համապատասխան չէ անոր կանոններուն, միանգամայն *ապօրինի* է։ Ուստի՝ դառնամ փաստերուն և իրողութեանց ի նկատի ունենալով որ սահմանադրութեան յօդ. 25-ի համաձայն Ամերիկայի մէջ գտնուած հայ եկ. ժողովրդեան միակ օրինաւոր ներկայացուցիչ մարմինն է երեսփոխանական ժողովը, որ կը կազմուի առաջնորդական և հովուական թեմերու կողմանէ ընտրուած երեսփոխաններէ և պաշտօնավարող եկեղեցականներէ։

Նոյն սահմանադրութեան 29-րդ յօդուածի համաձայն երեսփ. ժողովին կը նախագահէ առաջնորդը կամ տեղապահը։

Համազգային ժողովը և ս. Սինօդը իմ ընտրութիւնս անվաւեր նկատեցին, որովհետև զիս ընտրող ժողովին չէ նախա-

թէ ինչ ձեւով պէտք է կատարել պատգամաւորի ընտրութիւնը, չեն կարող ունենալ ոչ մի իրաւաբանական զօրութիւն, որովհետեւ նախ՝ այդ հրահանգը պարտաւորիչ է միայն Անդրկովկասի համար և ոչ Ամերիկայի համար, որը ղեկավարուած է և պիտի ղեկավարուի Էրիմեան կաթողիկոսի կողմէն հաստատուած սահմանադրութեամբ։

Երկրորդ, Սինօդը ոչ լիազօր է և ոչ ալ իրաւունք ունի այս թէ այն հրահանգով ի չիք դարձնել սահմանադրութիւն մը, որ հաստատուած է կաթողիկոսի մը կողմէն, որովհետեւ այդ՝ Սինօդի իրաւունքներէն վեր է։

Երրորդ, Ամերիկայի 16 թեմերէն 14-ը, այսինքն ամերիկահայ գաղթականութեան մեծամասնութիւնը. կաթողիկոսական ընտրութենէն դեռ 6 ամիս առաջ բողոքեր է Տ. Գաֆթանեանի առաջ. վոխանորդութեան դէմ և չէ ճանչցած զինքը այդ պաշտօնին մէջ։ Մեղադիր ժողովրդի ձայնը և այն պարագային, ուր միակ տէր և անօրէնն իր հոգևոր գործերուն, ինչպիսին է կաթողիկոսական ընտրութիւը, կը նշանակէ հիմնայատակ ընել գարերէ ի վեր սրբագործուած ու նուիրագործուած ընտրողական սկզբունքը։

Ի նկատի ունենալով վերոյիշեալ պատճառաբանութիւնները, ես նեղքոյ սորագրեալս, որպէս Ամերիկայի առաջ. վիճակին կանոնաւոր և սահմանադրականօրէն ընտրուած միակ պատգամաւոր, կը բողոքեմ ս. Էջմիածնի մէջ դեկտ. 10-ին (1911) գումարուած՝ պատգամաւորների լիազօրութիւնը քննող համագ. ժողովի վճիռին դէմ, ինչպէս և ս. Սինօդի այդ վճիռը հաստատելուն դէմ, և պատիւ ունիմ խնդրել այս իմ բողոքը կցել ընտրական նիստերու օրագրութեան հետ։

Էջմիածին, 13 դեկտ.

ԿԱԹՈՂ. ԸՆԴ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱՑ ԺՈՂՈՎԻՆ

Պատգամաւոր ս. Էջմիածնի միաբանութեան, Բարդ. եպ. Գէորգեան (Մուղուլեանց)

Յայտարարութիւն

Թուական նեղքին գործոց մինիտրութիւնը հրահանգել է ս. Էջմիածնի Սինօդին, որ նա՝ պետ. օրինաց համաձայն՝ արգելէ մասնակցել կաթողիկոսական ընտրութեանը — այն պատգամաւորներին, որոնք ամբաստանուած են որոշ յանցանքների համար։ Պետական այս օրէնքը ներգործում է ինչպէս ընտրող պատգամաւորների՝ նմանապէս և՛ ընտրելի կաթողիկոսական թեկնածուների վրայ.

Ես ի նկատի առնելով վերոգրեալը, գալիս եմ ահա սրտանով յայտնել ներկայ համազգային ժողովիս, որ ամենապատիւ տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանցը կաշառքով է ստացել իր եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, որի համար նա յանձնուած է Հայրապետական դատաստանին, և որից արդարանալու ոչ մի հնարաւորութիւն չունի, քանի որ դատապարտող գործումենտը նրա ինքնաձեռագիրը նամակն է՝ որով առաջարկել է կաշառքը։ Նրա այդ նամակը ես քաղուածօրէն հրատարակել եմ 1906 թուին «*Ճշմարտութիւնը չի մեռնում*» իմ գրքում, տես եր. 136։ կաշառքով նրա ձեռնադրութեան մասին տես և իմ նամակը «Երկիր» լրագրում 1906 թ. № 16։ Ապա նրա իսկական նամակը ներկայացրել եմ իմ խնդրագրով Տ. Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին ի 4-ն դեկտ. 1906 թ. և խնդրել որ Առաքելական կանոնի և պետական օրինաց համաձայն յայտարարէ զԳէորգ արքեպիսկոպոսն՝ Եպիսկոպոս, կարգից լուծուած։ Առաքելական կանոնն ասում է. «Եթէ ոք եպիսկոպոս ի ձեռն ընչից այսմ պատուոյ հասանել կարաց, ի բաց հատցի ամենեին, միանգամայն և ի հաղորդութենէն՝ որպէս զՍիմոն մոգ՝ յառաքելոյն Պետրոսէ»։ Այդ իմ խնդրագիրը ընդունուած է և արձանագրուած կաթողիկոսական մատեանում ընդ համարաւ 1888։ Մինոյն խնդրի մասին դիմել եմ և Տ. Մատթէոս Բ. Իզմիրլեան կաթողիկոսին 1910 թ. Ապրիլ 23 ին։ Էրիմեանը արդէն զառամեալ, —որին այդ ժամանակ աչխատում էին գահընկեց անել և «ուղարկել Սև ծովի ափերը, օրինակ Բաթում, կամ Սանահնի վանքը՝ ապրելու» տես «Մշակ» 1906 թ. Հոկտ.—Նոյեմբերի համարներում բժ. Ա. Բաբայեանցի նամակները.—վախճանից իմ խնդրագիրը ընդունելուց յետոյ, և ողբացեալ Իզմիրլեանը՝ նոյնպէս այնքան վաղ վախճանեց։ Մնում է ուրեմն, որ ապագայ կաթողիկոսը արձակէ այդ դատի վճիռը։

Ամենապատիւ Սրբազան Սուրէնեանցի իսկական նամա-



կը, որով նա առաջարկել է կաշառքը, իմ ձեռքումն է, կարող եմ հէնց այժմ ցոյց տալ ժողովին, ինչպէս ցոյց եմ տուել հանգ. կաթողիկոսներին, սակայն եթէ ինքը Սուրէնեանց սրբազանը այդ ցանկայ։ Իսկ «*Աշխարհութիւնը չի մեռնում*» գրքի մի օրինակը, ուր տպուած է կաշառման մասին նրա նամակից քաղուածը, այլև «Երկիր» լրագրի յիշեալ համարը՝ անյապդնում եմ համազգային ժողովին առաջ և արամադրութեան տակ։ Պարտաւոր եմ ժողովի ցանկացած բացատրու-թիւնները տալ։

Վասն որոյ սրանով խնդրում եմ ներկայ ժողովիդ չմտցնել Տ. Գէորգ Սուրէնեանց արքեպիսկոպոսի անունը կաթողիկոսական թեկնածուների ցանկի մէջ՝ իբրև արդէն իսկ ամբաստանեալ և իր ինքնաձեռագիր ապացուցագրովը պարտաւորեալ, ի նկատի ունենալով Առաքելեան կանոնը։ Այլև խնդրում եմ ինկատի առնել այն հանգամանքը, որ նա կաթողիկոս հաստատուելուց յետոյ՝ ինքն իւր դէմ յարուցած այս դատի անմիջական դատաւորը պիտի հանդիսանայ, այն էլ ամենայն լիազօրութեամբ. որ պատճառաւ կանխեցի ահա նախ քան՝ ընտրութեան ձեռնարկելը՝ ծանուցանել ժողովիդ՝ Սրբազան Սուրէնեանցի թեկնածութիւնը արգելող այս գործը։

Միաժամանակ տալիս եմ սոյն յայտարարութեանս պատճէնը Սինոդի Պրօկուրօր պ. Փ. Մելիք-Օհանջանեանցին՝ որ ներկայ է ժողովիս, խնդրելով որ իմ այս դատի մասին գործադրէ իրանցից կախուած օրինական միջոցները՝ և արտաքոյ այս ընտրութեան։

Ես յանձն եմ առնում իմ՝ յարուցած այս դատի բոլոր պատասխանատուութիւնը ապագայ կաթողիկոսի և պետական օրինաց առջև։

Յանօթ. Սրտանց ափսոսում եմ, որ ուշ ձեռքս ընկաւ Շամախու պատգամաւոր բժշկապետ պ. Թադէոս Զաքարեանի ներհուն յօդուածը՝ «Почему я отказался отъ участія въ выборахъ католикоса», որ զետեղուած է «Баку» թերթի 1912 թ. № 21։ Գրքի տպագրութիւնը վերջանում էր արդէն, ու հնար չեղաւ այն էլ առնել յաւելուածիս մէջ։

Բ. վ.